



ՊՐՈՖ. ԱԽՄ. ՀԱԿՈԲՅԱՆ

809

Հ

ԱՐԵՎԱՏՏԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԸՆԸՆԴՀԱՆՈՒՐՈՒՆԵՐ

№ 9. Վ Ո Լ Տ Ե Բ

№ 10. Ժ. Ժ. ՌՈՒՍՈՂ

7/20979

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

1936 թ.

802.

809
2-17 Հայոց վ.
Կանաչը և լուսավ գրա-
կան պատճեններ
17/xx 24/xx 306

107
2081
0
000b
N 14



4
38

ԳՐԱԴԱՐԱՆ

Q 1

ՎՈԼՏԵՐ

(1694—1778)

1.

Ֆրանսուա—Մարի—Արուե Վոլտերը ծնվել է 1694 թվին։ Նրա լյանքն ու գործունեությունը պատկանում է այն մեծ հաղոխային, յերբ ֆրանսիական բուրժուազիան նախապատրաստում եր ազնվականական միապետության տապալումը։ Բուրժուական հեղափոխությունը պայմանագործեց Վոլտերի մահից տասնեւեկ տարի հետո։ Նա 18-րդ դարի ամենամեծ գրողների շարքին։ Ե պատկանում, վորոնք իրենց գրվածքներով խոշոր դեր են կատարել այդ հեղափոխության պատրաստության գործում։

Վորապեսզի կարելի լինի հասկանալ այս հանճարեղ գրողի գրական գործունեության ահավին նշանակությունը պատմության համար, պետք է իմանալ, թե 1789 թվի բուրժուական մեծ հեղափոխությունից առաջ ինչպիսի պայմանների մեջ եր գտնվում ֆրանսիան։ Այդ ժամանակաշրջանում ֆրանսիայում արտակարգ կերպով ծաղկեցին առևտուրն ու արդյունաբերությունը։ Այս զարգացման հետ միասին աճեց բուրժուազիայի սննդեական և քաղաքական ուժը։ Ազնվականությունն այդ շրջանում իր ձեռքբերից բաց և թողնում յերկրի տնտեսական կյանքի դեկավարությունը և բուրժուազիան դառնում եր նրա փաստական տնօրինը։ Բայց այս փաստական ուժի հետ միասին, բուրժուազիան քաղաքականապես ճնշված գրության մեջ եր գտնվում, բուրժուազիայի շահներն ամեն տեղ ընդհարվում եյին գոյություն ունեցող ուժիմի հետ։ Յերկրի պետական քաղաքական սիստեմը հիմնված եր քաղաքական անհավասարության սկզբունքի վրա։ Բուրժուազիայի հետ միասին յերկրում գոյություն ունեյին յերկու դասեր, վորոնք վայելում եյին քաղաքական արտօնություններ։ Նրանք եյին ծագումագոր ազնվականությունը և հոգեվորականությունը։ Այսպիսով ֆրանսիական ժողովուրդը բաժանված եր յերեք դասերի, վորոնցից յերկուսը, վորապես ազգաբնակության չնչին փոքրամանությունը, վայելում եյին ֆեոդալիզմի եպուստայից մնացած շատ իրավունքներ և արտօնություններ։ Մինչդեռ ազդաբնականության մյուս հսկայական մասը, վոր միացված եր «Յ-րդ դաս» ընդհանուր անվան տակ, զրկված եր ամեն տիսակ իրավունքներից։

Ազնվականության և հոգեվորականության վայելած ամեն տեսակի թէ

քաղաքական և թե տնտեսական հողի վրա ունեցած անսահման արտոնությունները մեծ արգելք են հանդիսանում յերկրի առևտրի և արդյունաբերության հետագա զարգացման համար: Հասարակության աշխատունակ և ձեռնսրբող տարրերն ամեն քայլափոխությունների այն տարրերի հետ, վորոնք չեն աշխատում և վորոնք իրենց վայելած արտոնությունների ուժով են մրցում տնտեսական բարդ հարաբերությունների մեջ: Հողի պնման ժամանակ, գործարսուն կառուցելիս և կամ առևտրական գործ ձեռնարկելիս յերրոշդ դասին պատկանողները հանդիպում են արտոնյալ գասերին պատկանողների հետ, վորոնք վոչ մի հարկ կամ տուրք չեն վճարում և առհասարակ աղատված են ամեն կարգի գժվարություններից: Մինչդեռ իրենք ճնշված են բազմատեսակ հարկերի և տուրքերի ծանրության տակ և յենթակա են ամեն տեսակ գժվարությունների:

Յեկեղեցին և աղնվականությունը կանգնած են զարգացման և առաջադիմության դեմ և խանգարում են նրա ընթացքը: Բուրժուազիան չեր կարող առաջ շարժվել, քանի գոյություն ունեցին տիրող գասերի արտօնությունները և քանի գոյություն ուներ նրանց իշխանությունը:

2.

Այս սոցիալական մինոլորտի մեջ ծավալվեց Վոլտերի գրական դրամատությունը: Նա յեղավ մեծագույն արտահայտիչն այս յերիտասարդ մարտական բուրժուազիայի: Նա իր մեջ ամփափում եր իր դասի հիման հավաքական հատկությունները, նրա հերոսական կողմերը, ինչպես և նրա թերությունները:

Յերրորդ դասին ամենից առաջ հարկավոր եր պայքարի աղատություն, վորի միջոցն միայն այդ դասին պատկանող անհատները կարող են ցույց տալ իրենց բոլոր ընդունակություններն ու զիրքերը: Հասարակական կյանքի մեջ բուրժուազիան դիրք գրավելով, գիտակցեց, վոր այդ դիրքը պարաւական և միայն իրեն: Այս նկանումը նա թանգ դնահատեց և հասկացավ, վոր այն կարող է պաշպանել նա քաղաքական աղատայականների մեջ միայն վոլտերն այս մտածողության և աշխարհայեցողության տիպիքական ներկայացուցիչը հանդիսացավ: Նա իր դարի գավակն և ամենից առաջ այս իմաստով, այն դարի զավակը, վոր հաստանեց ազատ մրցակցության որինքը: Վոլտերի ուսմունքը նվիրված և իր դասի նվաճումների գերազույն պաշտանության համար: Յեթե նա յեղավ աղատության ջերմ ջատագով, յեթե նա հանձարեղ սարկազմով վոտնանակ ավելց անցյալի հենարանները, արագիցիքաները, յեկեղեցին, արագոնությունները — ապա նա այդ արագ այն պատճառով, վոր պայտառություն տա բուրժուազիքի գործունեյության, նրա ձեռնարկող վոգուն, նրա ստեղծագործական կարսդություններին:

Բայց Վոլտերը յեղավ իր դասի պաշտպանը վոչ միայն նեղ իմաստով, այլ և մյուս կողմից նա իր մեջ ամփոփեց բուրժուազիքի հերոսական

նեղոփայիլ լավտգույն հատկությանները, այն բուրժուազիայի, վոր քայլում եր յեվրոպական ժողովուրդների ասջեց և վոր տանում եր նրանց գեղի հեղափոխություն և աղաւառությունը Այդ շարժումներն ահա ցրում ենին խալքան ու տղիտությունը ջախջախում ենին նախապաշարումները, բաց ենին անում անսահման հեռանկարներ մարդկային հանձարի առջև:

Սյստեղից են առաջանում Վոլտերի մէջ նրա հիմնական հակասությունները, յերբ մի կողմից նա սրացապանում և բոլոր քաղաքացիների հավասարությունը, միշտ կողմից վախոնում և իշխանություն տալ ժողովրդական մասսաներին: Մի կողմից հարձակվում և յեկեղեցու վրա անորինակ ծաղրանքավ, մյուս կողմից ներբողում եր աստծու դոյցությունը և այն կարեվոր եր համարում ժողովրդական մասսաներին սանձի մէջ պահելու համար:

Վոլտերն ապրեց և գրեց բուրժուազիայի պատմության այն շրջանում, յերբ նրա ազատարար դերը թագնում եր նրա բնագիները, բնագիներ, վորոնք բացարձակ ձեզով յերեան յեկան նրա հաղթանակից հետո: Անա թե ինչու համար հետագա սերունդների գիտակցության մէջ Վոլտերը ներկայանում և իբրև բուրժուական ազատության մարտիկ, իբրև հին ֆեոդալական կարգի մէծ կործանող, իբրև վտանգավոր անսատված:

«Այս սահմանված և աստծու իբրևն կողմից և Վոլտերյաններն իզուր են խոսում զրա զեմ», — նկատում է Գոգովի քաղաքակեար, այսպէս եր մտածում ամրող Յեղվուպան: Վոլտերյանությունը համարվում եր ազգաւամրություն աստծու և նրա սահմանած կարգերի զեմ:

Բայց իբապես Վոլտերն այժմ պատմական հեռավորության մէջ յերեվան և զալիս անհամեմատ ավելի չափավոր կերպով, քան նա թվուս եր ժամանակակիցներին:

Նրա կյանքը շատ կողմերով յերիտասարդ բուրժուազիայի քնորոշ պատմությունն է յեղել, այն բուրժուազիայի, վոր իր համար ճանապարհ եր հարթում գեղի դիրքն ու հարստությունը: Նա նոտարի զավակ է յեղել, վոր զավառից փոխարդիկ է Փարիզ և աշխատել և բարձրանալ կյանքի սանդուխքի վրայից: Յեղվիտական կոլեմում, ուր սովորել է Վոլտերը, նա մոտեցել է յերիտասարդ ազնվականների հետ և գեռ այստեղ նա վաստակել և ժողովրդականություն իր սրամիտ սատիրական բանաստեղծություններով: Վոլտերը հաղի 20 տարեկան եր, յերբ նրան բանտարկում են Բաստիլի հռչակի վար բանտում, մի քաղաքական յերգիծարանական վաստավորի պատճառով, վոր ուղղված եր ուղենոտի զեմ:

Հետո, յերբ բանտից դուրս և զալիս, վեճ է ունենուս Ռուան ազգաւանուով մի ասպետի հետ, վոր նրան փայտի հարվածներ և հասցնում: Վոլտերը չի կարողանում հանդուրժել ասպետից ստացած այդ վիրագորանքը և նրան մենամարտի յե հրավիրում: Ժամանակի ուժիմը սակայն պաշտպանում է ասպետին և Վոլտերին կրկին բանտարկում են իր «անհամատ» վարչի պատճառով:

Այսպիս և բուրժուազի զավակը, յերիտասարդ Վոլտերն ընդհար-

մեջ մտնում տիրող գասերի ներկայացուցիչների և նրանց պետականության հետ Այս առաջին ընդհարությունները վոլտերին շատ բան են սովորեցնում և նրա մեջ վառում են կովի ուժեղ տրամադրություններ:

Յերբ յերկրորդ անգամ բանտից ազատում և վոլտերն այլևս չի կարողանում մնալ ֆրանսիայում և անցնում և Անդիա: Անդիան մի յերկիր եր այդ ժամանակ, վորտեղ բուրժուազիան ուներ ահագին ազդեցություն: Վոլտերն այդ միջավայրում շատ բան և ստանում: Նա ուսումնասիրում և անգլիական քաղաքական կյանքն ու պատմությունը, ուսումնասիրում և Լոկին և Բելոնին, Շեքսպիրին և Միլտոնին: Անգլիական դիասությունը, փիլիսոփայությունը և գրականությունն, ինչպես և անգլիական կյանքը, վոլտերի վրա նշանակելի աղդեցություն են ունենում:

1729 թվին Վոլտերը վերադառնում է Ֆրանսիա, վորտեղ հրատարակում և «Անգլիական նամակներ» աշխատությունը: Այդ աշխատությունը մի վոգելորված փառաբանություն եր, Անգլիային և նրա հաստատություններին ուղղված, դա միաժամանակ մի ուժեղ պանդիտ եր՝ ուղղված ֆրանսիայի ֆեոդալական ուժիմի գեմ: «Անգլիական նամակներ»-ի հրատարակիչը ձերբակալվեց և ուղարկվեց Բաստիլ, Գիրքն այլին դահճի ձեռքով, իսկ Վոլտերը հետապնդումից խուսափելով ազատանակությունը մարքիզուհի Շատլեյի մոտ, Լոտարինգիայի սահմանի վրա գտնվող նրա կալվածքը: Այս կինը, վոր Ժամանակի աշքի լոնինող կանանցից եր, կարելոր դեր կատարեց Վոլտերի կյանքում, դառնալով նրա հովանավորը և ոգնելով նրան՝ նրա գրական գործունեյության մեջ:

Վոլտերն ահագին կապեր ուներ թե Ֆրանսիայի և թե արտասահմանի նշանավոր և դիրք ունեցող անձերի հետ, վորոնց մեջ քիչ չեյին խոշով իշխանական և թագավորական անձնավորություններ: Այս մթնոլորտում շարժկելով նա հաճախ զիջումներ եր անում և ջանք եր գործ գնում ինքն և լ ազնվական կոչում ստանալու: Նա, վոր յեղել և անհավասարության կատաղի հակառակորդ, վոր մերկացրել եր ազնվականական արտօնությունների ուժիմը—այս շրջանում ինքն և լ ձգոնց ազնվականության, գիտակցելով վոր կյանքում այդ կոչումը նրան գործնական առավելություններ կտա: Նույնպիսի խոշոր զիջումներ արագ նա հոգևորականության ներկայացուցիչներից մեկն գրած նամակում (յեկեղեցու հարցի, նկատմամբ), վորպեսզի նրա միջոցով կարողանա Ակադեմիայի անդամ ընտրվել: «Ես ուզում եմ ապրել և մեռնել խաղաղ, կաթոլիկ յեկեղեցու գրիտում, վոչ վոքին չնեղացնել, վոչ վոքին չվասել, ասում ե նա այդ նամակում: Եթե այսպես, Վոլտերը զառնում և ակադեմիկոս, դառնում: Ե պալատական պոեա, գրում և ուժաներ թագավորի պատվին և պիեսներ նրա ժամանցի համար:

Զպեաք և կարծեր սակայն, վոր Վոլտերը մի անոկը կարիքիտա եր և վոր նա վաճառում եր իր գրիչը: Վոլտերն իր լավագույն ստեղծագործությունների մեջ մնում է հավատարիմ ինքն իրեն և այն առաջա-

զոր գաղափարներին, վորոնք առաջարկել եր նրա դաքը և նրա գասը:

Միապետի և փիլիսոփաների դաշնակցության յուրատեսակ բնույթը յերեան և զալիս Վոլտերի և Ֆրեդրիխի հարաբերությունների պատմության մէջ, Պրուսական այս թագավորը—Ֆրիդրիխը—ծանօթացել եր Վոլտերի. հետ և սքանչացել եր նրա սրամություն և նրա հանճարի վրա: 1749 թվին Վոլտերը համաձայնվում է, վերջապես, զնալ Բերլին Ֆրիդրիխի մոտ, վոր վագուց հրավիրել եր իր մոտ նշանավոր գրողին: Բերլինում Վոլտերը մէծ ընդունելություն գտավ, հետո, սակայն գժտություններ սկըսվեցին թագավորի և նրա միջնեցի: Վոլտերը, վորի վրա պարականություն եր ընկնում ի միջի այլոց վոճի կողմից ուղղել Ֆրիդրիխ թագավորի գըրգածքները,—հաճախ թույլ եր տալիս ծաղը իր թագավիր բարեկամի՛ գրական ստեղծագործությունների հասցեին: Յեզ թողնում է նա Բերլինը 1753 թվին:

Բերլինից հետո Վոլտերը, վոր արդեն խոշոր միջոցների տեր մարդ եր, ձեռք և ընթառ սեփական կալվածք ֆընեվի մոտ, Ֆ ե լ ն ե կոչված աելում և իր բնակությունը հաստատում և այնուել: Ֆերնեն շուտով համաշխարհային հոչակ և ստանում: Վոլտերը վայելում և անորինակ հեղինակություն, նամակագրություն և ունենում շատ նշանավոր մարդկանց հետ, յելլուսպական միապետներից շատերի հետ, անզամ Հռոմի պատի հետ և նրա ձայնին կշիռ ելին տալիս շատ յերկրների պետական ստանդարդ անձնավորություններ: Յերբ յեղինակների խարդախությունների հետևանքում գլխաւոր բողոքական Կալվար, վոր, վորովես թե սպանել եր իր նարազատ զավակին, իրը թե նրա կաթոլիկ զառնալու պատճառով—Կոտենը ցնցեց ամրող քաղաքակիրթ աշխարհը, իր բոցավառ գրված քններով ֆանտազմի դեմ և խղճի աղատության իր ջերեմ պաշտպանությամբ: Յերեք ամբողջ տարի Վոլտերը համառ պայքար մէնց այն ուղղությամբ, վոր Կալվար գործ վերաբնավի և իր սեփական խոստովանությումը այդ յերեք տարիվա ընթացքում վոչ մի անգամ մաքիս չի յերևացել նրա դեմքին: Վերջի վերջո կործը վերաբննվում եւ և դժբախտ նահատակի պատիվը վերականգնը վում ե, այն մարգու, վոր յեղինակների կողմից մեղագրվել եր վորովի վորդեսպան, և վոր նրանց ձեռքով չարաշար սպանության եր յենթարկվել:

Վոլտերը դառնում և այսպիսով մտածողների միջազգային հանրապետության գլուխը, ամբողջ Յեվրոպայի մտավորականների հոչակափոր և հեղինակավոր ստանդարդը:

1778 թվին, 84-ամյա Վոլտերը վսրոշում է Փարիզ գնալ, թեև պաշտոնավես արգելված եր նրան Փարիզ մտնել Վոստիկանությունը չի համարձակում կիրառել կառավարական այդ հին արգելքը: Բայց թագավորը և կառավարությունը շատ անհանգստանում են, նրանք վախենում են մասնական այն մաքից, թե Վոլտերը կարող է Փարիզում վերաբնակվել: Փարիզում անցկացրած այդ որերը զառնում են մէծ պատիվի և մհծամնծ

ովացիաների անմռուանալի որեր: Յերբ վոր Վոլտերը մտնում և Ակադեմիս, բոլոր ակադեմիկոսները Նրան ընդառաջ են դուրս գալիս և նու այնտեղ անմիջապես ընտրվում ե մոտակա նստաշրջանի նախագահը: Այն ժամանակ, յերբ նա մտնում է Ակադեմիա, ամբողջ բազմությունը դրախը բաց և անում՝ ի նշան խորին հարգանքի:

Թատրոնում, յերբ ներկայացնում եյին նրա պիեսը, հասարակությունը փոթորկալից ովիացիս յի կաղմակերպում նրա հասցեյին, արտիստներից մեկը մտնում է նրա ոթյակը և մեծ գրողի գլխին պատկ և գնում:

Վոլտերը մեռնում է 1778 թվականի մայիսի 30-ին: Բայց նրա, մահից հետո ևս կառավարությունը և թագավորը չեն հանգստանում: Նրան մերժում են թաղել յեկեղեցական կարգով: Յեվ սա լրագրույն ապացույցն և այն բանի, վոր Վոլտերը գեմ և ռեակցիոներներին և պատկանում է հեղափոխությանը: Սա լրագրույն ապացույցն և այն բանի, վոր պատմությանը կատարելի է Վոլտերի կողմէ:

3.

Վոլտերն իր կրօնափիլիսոփայական հայացքներով դեխտ էր: Այս ուսմունքի հյությունն այն է, վոր ընդունվում է աստծու դոյցությունը բանականության միջոցով և մերժվում է հայանությունը, իբրև աստվածածնաշման աղբյուրը Մրանից բղխում եր այն հետեւությունը, վոր փիլիսոփաները, բանականության տեր մարդիկ պետք ե բռնեյին հոգեվորականության տեղը, իբրև աստծու կամքի և մտադրությունների մեկնաբանողներ:

Այն ժամանակիներում, յերբ ապրում եր Վոլտերը, դեիզմն առաջավոր ուսմունք եր և մի մեծ քայլ եր դեպի առաջ, համեմատած աստվածային հայանության ուսմունքի հետ, վոր պաշտպանում եյին հոգեվորականները: Դորձնականում դեխտական ուսմունքը թույլատրում եր Վոլտերին պայշտար մղել եպուայի գլխավոր չարեքի, այսինքն՝ կրօնական անհամբերազության և հարածանքների գեմ: Դեկզմը հանում եր մարդկության հոգեվոր զեկափարությունը կրկրական մոլուանդների ձեռքից և հանձնում եր այդ զեկափարությունը բանականության տեր մարդկանց: Նա ձշմարտությունը հայտրաբեց մարդկային զատողության առարկա և թույլատրեց մտքի և խոսքի ազատություն: Վոլտերի ուցիունալիզմից բղխում և նաև նրա քաղաքական ուսմունքը, լուսավորյալ արսուլցութիզմի թեորիան: Վոլտերի կրոնա - փիլիսոփայական իդեալն եր բանականության տեր մարդք: Փիլիսոփան նստած պապական աթոռի վրա, իսկ նրա քաղաքական իդեալն եր փիլիսոփան նստած թագավորի գահի վրա.

Փողովզական իշխանության գաղափարը Վոլտերին ոտար գաղափարը եր միջնև իսկ այն համեստ սահմաններում, վրաբիսին թույլ եր տալիս Մանտեսքին՝ իշխանությունների բաժանման իր հայտնի պետական ուսմունքով: Վոլտերի քաղաքական հայացքներում ավելի ուժի կերպով, քան

Նրա փիլիսոփայական հայացքներում, յերեան են յեկել նրա պատկանելությունը հարուստ բուրժուազիային և նրա կազմը բարձր արիստոկրատիայի հետ:

Բուրժուազիան առողջ եր աղնվականությունը և Վոլտերի մահից ասանումին տարի հետոնա կաղմակերպեց իր մեծ հեղափոխությունը «Ճռդպուրգի» ձեռքով, այսինքն՝ գյուղացիության, արհեստագույների, քաղաքային չքափոլության և այլն՝ միջոցով: Բայց բուրժուազիան ամենելքն նապատակ չուներ իշխանությունը տալ ժողովուրդի ձեռքը: Նա զրկում է ազնվականությունը նրա արտօնություններից, բայց իր համար իշխանություն նվաճելով՝ ստեղծում է նոր արտօնություններ իր համար, վորոնք նույնպես ծանր կերպով իջնում են ժողովրդի ուսիրին:

Վոլտերն այս բուրժուազիայի մարմնից և արյունից եւ Նրա իդեալը հիմնված է ուժեղի կուլտի վրա, ձեռնարկող և գործնական մարդկանց կուլտի վրա: Նրան են պատկանում ժողովրդի հասցեյին ուղղված այն հայտնի արտահայտությունները, վորոնք ընդմիշտ կմնան վորպես ու ըստ Վոլտերի անվան վրա: — «Յես վախենում եմ, ասում եր նա գյուղացիների մասին, — վոր մարդկանց այդ կատեգորիան յերբեք չգտնի վաչ ժամանակ և վոչ ընդունակություն սովորելու: Ինձ թվում է նույնիսկ անհրաժեշտ, վոր գոյություն ունենային տգես մարդիկ: Յերբ ամբոխն սկսի դատել ամեն ինչ կավերվի: Նույն հասարակական սեկոնդեան և ունեցել Վոլտերն այն ժամանակ, յերբ պաշտպանել է աստծու գոյության անհրաժեշտությունը: Եա համոզված է յեղել, վոր ժողովրդին չի կարելի հետ պահել վոճարագործությունից, այլ կերպ, քան կընդ միջոցով: Վոլտերին և պատկանում հետեւյալ հայտնի ափորիդմը — «Յեթե աստված դոյություն չունենար, անհրաժեշտ կլինել նրան ստեղծելու:»

4.

ՎՈԼՏԵՐՆ ԻԲՐԵԿ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՂ

Իր փիլիսոփայական և հասարակական գաղափարները Վոլտերն արտահայտում եր բազմատեսակ գրական արտադրությունների մեջ: Նա գրել է պանֆիլեններ, լիբրիքական բանաստեղծություններ, արագեղիաններ, պատմբլածքներ, պոեմներ և այլն: Նրա լիբրիքան աչքի յի ընկնում իր գեղեցիկ և շնորհալի ձևով, ինչպես և իր սրամտությամբ, վոր համալատասիստանում եր ժամանակի աշխարհիկ հասարակության հաշուկին: Նրա բազմաթիվ «Ու ան ե բ ը» (զովերգիրը), «Ս ա տ ի բ ա ւ ն ե բ ը», «Ա ո ա կ ն ե բ ը»-ը և այլն ունեցան հսկայական հաջողություն: Ողտագործելով անցյալի գրականության այդ սիրված ձևերը, Վոլտերը նրանց մեջ զրեց նոր բովանդակություն և հյապես ահագին հարված հասցըց այդ հին ձևերին: Նա ընդունեց կեղծ կլասիկական պարագաներ և արագիքիաները բերեց իր տիպիկ բուրժուական բնույթը և իր տուածին խակ յելույթով նշան հանդիսացած պար-

տական ձաշակի և նրա վրա հիմնված կլասիկ գրականության քայլայման Հին ձևերը նա ոգտադրութեց մերկացնելու համար Փանատիզմը և գեսպոտիզմը, վորոնց միջոցով պահպան եր այդ ձևերն ստեղծող հասարակությունը: Միաժամանակ հին ձևերը նա ոգտադրութեց քարոզելու համար ազատության և մարդասիրության իր գաղափարները:

Առանձնապես հատկանշական և վոլտերի յերկը «Որմանի կույս»-ի մասին Այդ գործով նա խիստ ծաղրի յե յենթարկել Որլեանի կույսին, Ժաննա Դ'արքին: Պետք ենկատել, թե ինչքան խորունկ կերպով ելին Փրանսիացիները հարգում այդ լեգենդական աղջկա հիշատակը, վորոն վերագրում ելին շատ հրաշքներ, ինչպես և Ֆրանսիայի ազատությունը անգլիական Ծից: Ժաննա Դ'արքը համարվում եր սուբբ, Ֆրանսիայի պաշտպանն ու հայանավորը: Յեկեղեցին ժողովրդին այն համոզմունքներն եր նարնչել, թե «սուբբ կույսը» կոչվել եր վործերը կատարելու աստծու կողմից և թե աստված նրա միջոցով և ուղարկել իր վողորմածությունը Փրանսիական ժողովրդին:

Վոլտերը միանգամայն տարրեր ձեվով եներկայացնուում Ժաննա Դ'արքի պատմությունը: Այն հրաշքները, վորոնց միջոցով յերեան և զալիս Ռուեանի կույսը, այնպիսի ձևով են պատկերացնում Վոլտերի գործի մեջ, վոր խիստ հարգած են հասցնում վոչ միայն լեգենդային, այլ և նույնիսկ կըսնին: Վոլտերը ցերի մեջ և թաղուս ժողովրդական ավանդության և բանաստեղծական վառ յերեակայության ստեղծած ամենամաքուր կտնացի գեճքերից մեկին: Ժաննա Դ'արքի կուսությունն ու անմեղությունը վոր ավանդության համաձայն ողնեցին փրկելու Ֆրանսիան և նրա թագավորին, —յերկդիմի կատակերի առարկա դարձան Վոլտերի կողմից, նրա սրամտության և նրա լեզվի չարախոսության սնունդ ավին:

Սպիտացիոն բնագործություն եր կրում նաև Վոլտերի մի ուրիշ պահմը «Հենրիագա»-ն, վոր գրված եր կեղծ կլասիկական վոճով: Այդ պահմի թիման եր Հենրիխ 4-րդի թագավորության վառարանությունը: Բայց այդ այուժեակից ոգտվելով Վոլտերը փառաբանել և վոչ այնքան կյուրովիկոս 15-րդի նախորդին, վորքան վառարանել և արդարության և վեհանձնության իդեալը, և «Հենրիագա»-ի հերոսը ներկայանում և վորպիս կենդանի մի կշտամբանք իր հետնորդների հասցեցին, վորոնց ժամանակ բռնությունն ու ֆանատիզմն այնքան հրեշտակով չափերի հասն: Այդ պուեման հրատարակվեց Անգլիայում, քանի վոր Թրանսիայում նրա հրատարակությունը մեծամեծ դժվարությունների կարող եր հանգիստեր:

Յեթե իրեւ հրատարակագիր Վոլտերը հանդիսացավ յեկեղեցու և ազնվականության մերկացնողը, ապա նրա պուեմները կատարեցին նույն գործը, թերեւ ամելի հաստատ կերպով: Այդ գործերի մեջ Վոլտերն իբրև գեղարվեստագետ տապալց յեկեղեցական սրբությունները, ամենաներշգործական մի դեսքի միջոցով, գեղարվեստական կոմիկական, ծաղրական պատկերների միջոցով:

իրբե գրամատուրք վոլտերը կլասիկական տրագեդիայի շարունակողը հանդիսացավ: Նա կարողանում էր գրել պարտատի համար, հարկ տալով նրա ձաշակին վոչ վատ, քան կորնելը և թասինը: Այն ժամանակ, յիրք վոլտերի մեծ ժամանակակիցը—Դիզրոն—արդեն ըեմ էր հանել ազնիվ և պարկեցա բութուանիրին, ներկայացրել էր քաղքինի գրամանիրը, վոլոնք տեղի ելին ունենում սովորական ընտանիքներում, այն ժամանակ, յիրք Մերսին ցույց էր տալիս, վոր զվարձալի, զավեցական գեղքեր կարող են պատահել նաև պալատում, խալ արցունքները և հուզիչ արկածները հազվագյուտ չեն նաև աղքատների խրճիթներում—այդ ժամանակ վոլտերը շարունակում էր պահպանել մեծ կլասիկների արագիցիանիրը և տրագեդիանիրի համար ընտան էր բարձր և հերոսական զգացմունքներ, հերոսներին և թագավորներին:

Պորպես գրամատուրք վոլտերին հարգում և ինահատում ելին Ռոսինին հավասար, նրա տրագեդիանիրն ունելին հաջողություն: Պահպանների պալատական կլասիկական թատրոնի պայմանականությունները, վոլտերն իր տրագեդիանիրը լցնում էր նոր բովանդակությամբ: Իր տառաջին դործի «Եղիպա»-ի մեջ արդեն դործող անձերից մեկի կողմից քուրմերի մասին արտասոտնած նշանավոր նախադասությունը—քուրմերի, վորոնց կարծեցյալ իմաստությունը պահպան էր միայն դյուրահավատ մարդկանց միջոցով—նետի հարվածի պես ուղղված էր կաթոլիկ հոգևորականության դեմ: «Բրուտոս»-ի մեջ յերեան և գալիս քաղաքական ազատության պրոպագանդը, իսկ «Մահումեդ»-ի մեջ խիստ կերպով մերկացված և կրոնական խարերայությունը և նույնիսկ ներկայացված և աղօտամբություն կրոնի դեմ տահասարակ, քանի վոր կրոնի հիմքը վոլտերի աշխում հանդիսանում էն աղիստությունն ու ճարպիկությունը:

5.

Բայց կասկած չկա, վոր վոլտերի բոլոր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ ամենից արծեքավորները նրա պատմվածքներն են: Այդ պատմվածքները մինչեւ այսոր ել կարդացվում են մեծ հետաքրքրությում, մինչդեռ նրա լիրիքան, և մասամբ՝ տրագեդիան պահպանում են գլխավորապես պատմական նշանակություն: Վոլտերի պատմվածքները փայլում են սրամտությամբ, լիքն են կծու կատակներով և յերգիծական ձեզով պատկերացնում են նրա ժամանակից հասարտկության բազմատեսակ արատները:

Մենք կանգ կառնենք այդ պատմվածքների վրա: Իր բավարարյան պատմվածքներից մեկում, «Զադիք»-ում վոլտերը տանում է մեզ Բաբելոն, նրա Մոադբար թագավորի ժամանակները: Բաբելոնն եյապես ներկայացնում է վոլտերի ժամանակակից Փարիզը: Այդ քաղաքում, Բաբելոնում, ազրում էր մի յերիտասարդ, Զադիկ անունով վոր չնայելով իր հարստության և յերիտասարդության, կարողանում էր զսպել իր

կլլքերը և վոր ոժտված եր շատ նշանավոր հատկություններով:

Զաղիղը յենթարկվում և մի շարք դժբախտությունների և անօգնությունների իր արդարամառության պատճառով: Միանգամ նա դուրս եր յեկել զբոսնելու իր քաղաքամերձ կարգածքում, և այս անմեղ զբոսնքն ունեցավ մի շարք անհաճելի հետեւանքներ: Նա տեսավ թագուհու ներքին սպանների հետ միասին, վորոնք միև անհանդիսությամբ յետ ու առաջ եցին վազում: Հայանի դարձավ, վոր կորհել թագուհու սիրած չունը և վոր թաղավորի ախոռատնից փախել և նրա լավագույն ձին: Ներքինու հարցին Զաղիղը կարողացավ ճիշտ ցուցմունքներ տալ այս մասին, թե ինչ կերպարանք ունեյին և թե ինչ ուղղությամբ փախան կորած անառունները: Ներքինին վճռեց, վոր Զաղիղն և զողացել թե շունը թե ձին, վորի համար նրան զատապարտեցին մորակի հարվածների և աքսորի, մինչև իր կյանքի վերջը:

Բարեխախտաբար փախստականները գտնվեցին: Դատարանը փոխեց իր գործումը, բայց վճիռ կայացրեց, վոր Զաղիղը կիմարի 400 ունցիա վոսկի, այն բանի համար, վոր նա ստել եր և հաղորդել եր, թե յերեք չերտեսել կենդանիներին, վորանց մասին սակայն տվել եր այնքան ճիշտ տեղեկություններ: Այն ժամանակ Զաղիղը հայտարարեց, վոր նա իրոք յերեւեց չի տեսել և վոչ թագուհու հարգելիք շունը և վոչ ել արքայից արքայի սրբազն ձին: Բայց ունենալով անսովոր կերպով ճիշտ գիտողականություն, նու ավտպի վրա մնացած հեաքերի համաձայն կարողացել եր հասկանալ վոր դրանք փոքրիկ շան հետքեր են: «Բարակ և յերկար գծերը, վոր գծագրվել եցին ավաղի մակերեսի վրա, թաթերի մեջտեղը, ցուց տիին ինձ — ասաց Զաղիղը — վոր դա յեղել և մի շուն, վորից կախված են յեղել ձեւերը, իսկ այս պարագան յեպրակցնել տվեց ինձ, թե շունը նոր եր ծնել Մյուս հետքերը, վարոնք գծագրվել եցին ավաղի մակերեսի վրա առաջին թաթերի կողքերից, մտածել տվին ինձ, թե այդ շունն ունեցել և շատ յերկար ականջներ, և քանի վոր յես սկառեցի, վոր մի թաթի տակ ավաղը ամեն տեղ ավելի քիչ եր փորված, քան մյուս թաթի տակ, ուստի յիս համկաց, վոր մեր ոգոսատափառ թագուհու շունը քիչ կրցում է, յեթե համարձակվեմ այսպիս արտայալիկ»: Վարտերն այս գեկքը հստակել և այս բանի համար, վոր մեկ կողմից ծաղրի փրանսիական զատարանը և մյուս կողմից ցուց տա գիտությունների և գիտողությունների արժեքը:

Զաղիղի հստագիտության վրա զարմացած մի քանի մոգեր հայտարարեցին նրան կախարդ և պահանջեցին այլի նրան: Սակայն թագավորը հրամայեց վերտպարձնել նրան 400 ունցիան, վոր նա պարտավոր եր վճռուել զատարանի վորոշման համաձայն: Դատական թշնառության ներկայացուցիչները մեծ հանդիսավորությամբ նրա մոտ դնացին՝ վերադարձնելու նրան 400 ունցիան, պահելով այդ գումարից 398-ը զատական ծախսերի համար:

Այսպիսով «Զաղիղը» տեսավ, թե վորքան վասնդավոր բան և դիտող

լինքել, և ինքն իրեն խոսք ավեց այլեւ յերբեք չասել այն, ինչ զոր տեսել
եւ: Բայց այս վորոշման համար նա նոր տուգանք վճարեց, վորովհետև մի
անդամ տեսավ, թէ ինչպես մի հանցավոր փախչում եր պատուհանով, հար-
ցաքնության ժամանակ այդ մասին վոչինչ չասաց, բայց ապացուցվեց,
վոր նա տեսել և և այդ պատճառով դասապարտվեց՝ վճարելու 500 ռենգիա:
Այն խոսքերից, վորոնք հեղինակը դնում և այդ առիթով Զադիգի բե-
րանում, յերեան և գտիմ ծաղրի ու վիշտը այն քաղաքացու, վոր ապրում
և կատարելապես անիրավ և բռնակալ մի յերկրում: «Մեծ աստված, վոր-
քան ենք կորցնում մենք այն անտառում զրունելու պատճառով», վորի միւ-
ջով վազում են թագուհու շունը և թագավորի ձին: Վորքան վտանգավոր
բան և պատռհանին նայել և վորքան դժվար և յերջանկություն տրվու-
մարդուն այս կյանքում»:

Այսպիսի կոմիքական ստատկերների միջոցով ծաղրում և Վորտերն իր
ժամանակակից ֆրանսիայի կյանքի ամրող կազմը: Զադիգի անձնավորու-
թյան մեջ ճա, ըստ յերեվութիւն, դուրս և բերել ինքն իրեն և նրա բերա-
նումն և դրել իր սիրած գաղափարները:

Զադիգն ապրում և մի շաբթ արտակարգ արկածներ: Մոռգբար թա-
գավորը սքանչացած նրա իմաստությամբ դարձնում և նրան իր մինիստրը՝
Վոլտերը նրա անձնավորության մեջ գծում և կառավարողի պատկերը՝ լու-
սավորյալ արարութիղմի վոգու համաձայն: Զադիգն ամենքին հարգել և
ատլիս որենքների նվիրականությունը, դուրս և գալիս կամայականության
գեմ: Նա չի սահմանափակում Դրվանի կամքը, թողնում և, վոր յուրա-
քանչյուր մինիստր աղատ արտահայտի իր կարծիքը: Յերբ պատահում եր,
վոր նա վորեկ դատ վարի, նրան ուղեցույց եր հանդիսանում վոչ թե իր
անձնական կամքը, այլ որենքը, յերբ որենքները լինում եյին չափազանց
խիստ, նա մեղմում եր վճիւր, յերբ որենքները լինում եյին անկատար
այն ժամանակ նա արդարության վոգով նոր որենքներ եր սահմանում
նրանից ժողովուրդները վերցնում են այն կանոնը, թե ավելի լավ և նե-
րել մեղավորին, քան գատապարանել անմեղին: Զադիգը համոզված եր, վոր
որենքները սահմանված են վոչ թե նրա համար, վոր սարսափեցնեն քաղա-
քացիներին, այլ նրա համար, վոր ոգնեն նրանց: Նո ընդունակություն
ուներ ճշմարտությունը բաց անելու այն ժամանակ, յերբ մյուսներն աշ-
խատում եյին սթուացնել այն Յեզ Վոլտերն առաջ և բերում մի շաբթ
խճճված վեճեր, վոր լուծում և Զադիգը իսկական սողոմույան իմաստու-
թյամբ:

Զադիգի կառավարությունը լուսավորյալ արսույուտիզմի օխոտեմի
լավագույն արտահայտությունն եւ: Ամեն բան վճարում և բացարձակ իշ-
խանությամբ, նրա իմաստության և արդարության վոգով: Այսպիսով
Վոլտերը թույլատրում և արսույուտիզմ այն պայմանով, վոր կառավարողը
ինի իմաստում և արգար, այսինքն կանգնած լինի ժամանակակից
փելիսովայտկան մտքի բարձրության վրա:

Ամբողջ սոմանի ընթացքում Զադիգի իմաստությունը հակադրվում
է կեզծ իմաստունների ու սուս կառավարողների հիմարության ու տպի-
տությանը: Վոլոտերը կոմիտական ձեմ մեջ մերկացնում ե յեկեղեցու կաղ-
վիստիկան: Նա պատմում ե, վոր 1500 տարուց ի վեր Բարելոնում մեծ
վեճ կար այն մասին, թե վոր վոտքով պետք ե տաճար մտնելին: Այս
վեճը բաղաքացիներին բաժանել եր յերկու հակամարտ կուսակցու-
թյունների, վորոնցից մեկն սուսում եր, թե Միսրայի տաճարը կարելի յե-
մտնել աջ վոտքով, իսկ մյուսը սխնդում եր, թե կարելի յե մտնել միայն
ձախ վոտքով: Յեկ բոլորն սպասում եյին սրբադան կրակի համգիսագոր
տոնին, վորպեսպի տեսնեն, թե վոր կողմին հարի Զադիգը: Բոլորն աշ-
քերը հառել եյին նրա վոտքի վրա, ամբողջ քաղաքը դանվում եր սպաս-
ման և ալեկոծության մեջ: Զադիգը տաճար մտավ յերկու վոտքով թոփչք
վործելով, և հետո տաճարում պերճախոս կերպով ապացուցեց, վոր ասու-
ծու համար բոլորը հավասար են և զոր նա չի կարող գերադասություն
տալ աջին կամ ձախին:

Սոմանի վերջում Զադիգը թագավոր ե դասնում Բաբելոնում և իրա-
գործում ե այսպիսով լուսավորյալ մնարխի իդեալը: «Պետությունը ծաղ-
կում ե փառքի և խաղաղության մեջ: Դա աշխարհին լավագույն դարն եր,
քանի վոր նրան կառավարում եյին արդարությունն ու սերը: Ամենքն
որհնում եյին Զադիգին, իսկ Զադիգն որհնում եր յերկնքին» յեղակաց-
նում ե վոլոտերը, լուսավորյալ միապետության այլ համոզված գաղափա-
րախոսը:

6.

Վոլոտերի մյուս ոոմանը, «Կանգիդը», վոր վայելում ե լայն ժողովը-
դականությունն, պատկանում և ամենասրամիւս սպատիբանների
շարքին, վոր ուղղված ե կաթոլիկ յեկեղեցու դեմ: Հենց նրա վերնագիրը —
«կանգիդ կամ ոպտիմիզմ» իր մեջ պարունակում ե նուրբ հեղնություն:
Մեր աշխարհը աշխարհների մեջ լավագույնն ե, և միթե նա կարող ե լի-
նել վոչշագագույնը, քանի վոր նրան կառավարում ե «ամենաբարի»
աստվածը, վոր ուրիշ խնդիր չունի, յեթե վոչ մարդկանց բարություն անենք:
Վորքան ել ծանր լինեն մարդկանց տանջանքները, մարդս պիտի իմաստ,
վոր բոլոր այդ տանջանքները տանում են դեպի մարդկության բարիքը:
Թող յերկիրը վոռոգվի արյան հեղեղով, թող լցի նա հառաջանքներով և
արցունքներով, թող մարդկի վոչչացնեն միմյանց անմիտ պատերազմների
մեջ, թող ծաղկի շահագործությունը և թող չնչին փոքրումանությունը
կլանի միլիոնավոր մարդկանց ծանր աշխատանքի արդյունքները, մարդս
չպետք ե տրանջա և բողոքի, վորովհետև նրան վիճակված չի իմանալ այն
անհայտ ուղիների մասին, վորոնք տանում են զեպի բարիք:

Այս ոոմանի բովանդակությունը յերիտասարդ կանգիդի և նրա ու-
սուցիչ Պանզլոսի անսովոր արկածների պատմությունն եւ: Այս ու-
սուցիչը մի արտակարգ տեսակի սպատիմիտ մարդ եր, վոր ապացուցում

կր, թե զոչ մի հետևանք չկա առանց պատճառի, զոր բոլոր հնարավոր բարի յերկրների մեջ իրենց յերկրը լավագույնն է և զոր բոլոր ամրոցների մեջ բարոնի ամրոցն ամենից լավն է, զորտեղ ապրում ելին կանգիդն ու Պանգլուս: «Ինչ զոր կա—կա, և զոչինչ չի կարող այլ կերպ լինել քան ինչպես կա, զորովհետև ամեն ինչ ստեղծված և զորոշ նորատակով և հետեւ վարար ամենալավագույն նպատակով: Այսպես, քիթն ստեղծված և նրա համար, զոր ակնոցներ կրի և ահա թե ինչոր մենք ակնոց ենք կրում: Վորոքերն ակնայտ կերպով դոյլություն ունեն նրա համար, զոր վարտիք հագնեն և ահա թե ինչոր մենք վարտիք ենք հագնում... Այսպես ուրեմն, հիմարություն է ասել, զոր ամեն ինչ լավ է, պետք և ասել ամեն ինչ դերազանց ե»:

Կանդիդի արկածներն սկսվուս են այն ժամանակից, յերբ բարոնն արտաքսում և նրան իր ամրոցից՝ լուսելով նրան վարագույրի յետեւում այն միջոցին, յերբ Կանդիդը համբուրգում եր նրա աղջիկ Կունիգունդի հետ, Այդ ժամանակից Կանդիդն ու Պանգլուսը կարող ելին դառն փորձով համոզվել, զոր այն աշխարհը, զորի մեջ ապրում ելին նրանք, պատկանում և ամենասարսափելի և ամենանողկալի աշխարհների թվին: Նրանք սպատերագմներ են տեսնում, զորտեղ պատերազմող կողմերը վոչնչացնում են և այրում, բոնարարում են կանանց, զորից հետո յերկու թագուփրներն ել գոհարանական արարողություններ են կատարում: Ամեն ինչ կորցնելով՝ քաղցած Կանդիդը մեծ մարդկանցից վողորմություն և խնդրում, բայց բոլոր այդ մեծ մարդիկ պատասխանում են նրան, թե, յեթե նա շարունակի պարապել այդ արհեստով, ասպա նրան կնստեցնեն բանտ, զորպեսզի նա սովորի այլևս վողորմություն չսնել: Սակայն այս փորձությունների մեջ նա կրկնում և շարունակ Պանգլուսի փելիխոսվայությունը: — «Ամեն բան ունի իր պատճաները և ամեն մի պատճառ ունի իր հետևանքները: Բոլոր իբրեւը կախված են միմիանցից և ամեն բան գնում է զետի լավը: Ինչպես յերեւում ե, հարկավոր և յեղել, զոր ինձ արտաքսելին Կունիգունդի մոտից, և հիմա հարկավոր և, զոր յես վողորմություն խնդրեմ, զորպեսզի սովորեն աշխատել: Այս բարու չեր կարող ուրիշ կերպ լինել:

Վոլտերի գեղարվեստական սատիրայի լավագույն որինակ կարող և ծառայել Կանդիդի այն արկածը, զորի մասին պատմվում և Երդ գվառում: Այս յերկրաշարժից հետո, զոր կործանեց Լիսաբոնի յերեք քառորդ մասը, պեղական իմաստունները վճռեցին, թե քաղաքի վերջնական կործանումը կանխելու համար լավագույն միջոցն և ժողովրդին ցույց տալ Առոտո-դափեյի գեղեցիկ տեսաբանը: Կոիմբրի համալսարանը յենթագրում եր, թե մի քանի մարդկանց հանդիսավոր այրումը խարույկի վրա ամենաստույգ միջոցն և խանգարել յերկրին շարժելու: Այս նպատակով բռնեցին մի հիւկայցու և յերկու Պորտոգալցու և այրեցին: Յեզ նույն որը յերկրը նորից շարժվեց սարսափելի գղրդյունով:

Յեթե «Զադիգը» խիստ սատիրա յե հին ռեժիմի ֆրանսիայում աի-

բող դատական և վարչական կարգերի նկատմամբ, ասլա «Կանդիդը» մի ուժեղ սատիրա յե կաթոլիկ յեկեղեցու և աստծու բարության մասին դավանած նրա ուսմունքի գեմ: Կանդիդի պատմությունը պետք է ցույց տաք նրան, թե ճշմարիտ և միայն այդ ուսմունքի հակառակը և պիտի հարկադրեր համաձայնվելու գործող անձերից մեկի այն կարծիքին, թե սատված տրամադրել ե յերկիրը մի ինչ վոր չար գոյության քամհաճույքներին նա չեր տեսել այնպիսի քաղաք, վոր չկամենար հարեան քաղաքի կործանումը, չեր տեսել մի ընտանիք, վոր փորձանք չցանկանար մյուս ընտանիքներին: Ամեն տեղ թույլերն ատում են ուժեղներին և միաժամանակ խոնարիզում են նրանց առջե, իսկ ուժեղները վարիում են թույլերի հետ այնպես, ինչպես կվարվեն հոտի հետ, վորի մորթին ու միւր վաճառքի յեն հանում: Միլինավոր մարդասարաններ պատում են Յեկրոպայի մի ծայրից մյուսը սիստեմատիկ կերպով պարապելով կողոպուտով և սպանությամբ, նրանք այդ միջոցով իրենց համար հաց են ձեռք բերում, վորովհետեւ չեն ճանաչում ավելի ազնիվ արհեստ: Յեվ այն քաղաքներում, ուր ըստ յերեվությին թագավորում և խաղաղությունը և ծաղկում և արվեստը, մարդիկ առավել ևս տանջվում են հոգսերով, նախանձով և անհանգստությամբ, քան այն քաղաքներում, վորոնք պաշարված են կատաղի պինդուներով:

Այսպես և ներկայանում հին Ֆրանսիայի իրականությունը: Յեվ այս իրականության հանգեց կրկնակի ծիծաղելի յի Պանդլուսը, հին սիոլուստիկ փիլիսոփան, վոր շարունակ կրկնում եր, թե «ամեն՝ ինչ լավ և գնուսաշարհներից լավագույնի մեջ»:

Վոլուսերն իր սատիրական ոռմանի մեջ յերեան և յեկել գեղարվեստական փայլով, սրամուությամբ և մեծությամբ: Նու այդ արկածային ձեր և չափազանցությունների մեջ բաց և արել, Ֆրանսիայի իրական կյանքը տվել և իրական տիպեր ու որատկերներ, վորոնք իրենց մեջ արտացոլում են մի ամբողջ եպօխա և հին հասարակութան—պետական մի ամբողջ կազմություն:

Վոլուսերի սատիրան այն հասարակական—իդեոլոգիական ույժերից են, վոր ահազին զեր և կատարում ֆրանսիայի բուրժուական Մեծ Հեղափոխությունը նախաղատրատելու գործում:

Վոլուսերի մահից հետո անցել և ավելի քան հարյուր հիսուն տարի Այս ժամանակամիջոցում պայքարը մարդկության ազատագրման համար ընդունել և տարբեր ձեւ: Շահագործող մասսաներն իրենց ձեռքն են տեղ պայքարի և ազատության գործը: Մաքի մարդկի չեն կարող վճռել ժողովրդի գործերն առանց ժողովրդի, ինչպես կարծում եր Վոլուսերը:

Չնայելով դրան, յերբ մեզանում պրոլետարիատի հաղթանակից հետ հարց բարձրացագ հավերժացնելու բուրժուական հեղափոխության մեջ առաջամարտիկներին, Վոլուսերի անունը դրվեց առաջինների շարքում: Քա-

Նի տիրապետում են խավարն ու տղիտությունը, քանի յեկեղեցին բուրժուական յերկներում թունավորում և միլիոնավոր մասսաների գիտակացությունը— այդ մեծ ապատամբի և այդ հանձնարեղ ծաղրողի ստեղծագործությունները մարդկության համար միշտ հարկավոր գրքեր կմնան¹⁾:

ՎՈԼՏԵՐ

ԻՆԳՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Դասակարգային ի՞նչ արտոնություններ կային Վոլտերի ժամանակակիցա ֆրանսիայում: Ի՞նչ պայմանների մեջ եր գտնվում Իլ դասը: Ի՞նչ պայքար եր մղում նա և վոր դասակարգերի դեմ:
2. Ի՞նչպիսի շերտավորումներ կային յերբորդ դասի ներսում: Վոլտերն այդ շերտավորումներից վորի արտահայտիչն եր: Ի՞նչ փաստերով կարող եք հիմնավորել այդ:
3. Ի՞նչ քաղաքական հայցքներ ուներ Վոլտերը: Ի՞նչ եր նրա վերաբերմունքը դեպի ժողովրդական լշանության դաղափարը, դեպի դեմոկրատիան, դեպի գյուղացիությունը:
4. Ի՞նչ եր Վոլտերի վերաբերմունքը դեպի Շեքսպիրը: Ժամանակի ընթացքում ի՞նչ փոփոխություն կրեց այդ վերաբերմունքը և ի՞նչնո՞ւ:
5. Ի՞նչ եր Վոլտերի վերաբերմունքը դեպի 17-րդ դարի քրանսիական կլասիկ դրամատուրգիան: (Ինչնո՞ւ յե այդ դրամատուրգիան կոչվում «կեղծ-կլասիկ» դրամատուրգիա): Ի՞նչպես են յերևան յեկել Վոլտերի դրամատուրգիայի մեջ կեղծ-կլասիկ դրամատուրգիայի սկզբունքները: Ի՞նչ դեմ և կատարել Վոլտերը արձակի բնագավառում: Ի՞նչ ազդեցություններ ե կրել Վոլտերը իտալական և սպանական արձակից:
6. Ի՞նչ ժամանել է «Զաղկից»-ը և «Կանդիդը»: Ի՞նչ կյանքից են վերցված այդ գրվածքները: Ի՞նչպես ե արտահայտվել նրանց մեջ արկածային, յերգիծաբանական գրականությունը: Ի՞նչ գեղարվեստական և հասարակական արժեք ունեն նրանք:
7. Ի՞նչ ժամանել է կատարել 18-րդ դարի ֆրանսիական զբանագիրը: Ի՞նչ կյանքից են վերցված այդ գրվածքները: Վոլտերի սատիրան, նրա ծաղկը, նրա արվեստը, նրա ստեղծագործած տիպերը և այդ տիպերի միջոցով արտահայտված նրա հասարակական և փիլիսոփայական աշխարհայցությունը:

ԳՐԱՎՈՐ ԹԵՄԱ

1. Ի՞նչ գրական և հասարակական դեմ և կատարել Վոլտերը 18-րդ դարի ֆրանսիական զբանագիրը մեջ:
2. Վերլուծեցեք նրա «Կանդիդը»: Վոլտերի սատիրան, նրա ծաղկը, նրա արվեստը, նրա ստեղծագործած տիպերը և այդ տիպերի միջոցով արտահայտված նրա հասարակական և փիլիսոփայական աշխարհայցությունը:

1) ԾԱՆՈՒԹ. ԽՄԲ. Այս ընութագիրը վորոշ փոխառություններով կադմված և Պ. Կողանի այն ներածական հոդվածից, վոր դրված ե ՇԱՀԱՐ ԱՄԻԼԻ 1922 թվին հրատարակած ՎԱՂԵՐԻ ՇԵՐԿԵՐԻ ծովագաճմի սկզբում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վոլտերի «Կանդիդ»-ը: Հայերեն կա «Մուզեա» ամսագրի 1906 թվի համարներում:
2. «Զադիդ»-ը ոռուսերեն, Վոլտերի գործերի մեջ:
3. Ֆրիչե և Լուսաշարսկի Վոլտերի մասին. ոռուսերեն. „История Западно-европейской литературы“. այն գլուխը, վորաբեր խոսվում և Վոլտերի մասին:
4. „Литературная Энциклопедия“. II հատոր Վոլ্যեր.

Մ Ր Ա Գ Ի Ր

1. 18-րդ դարը Ֆրանսիայում: Լուսավորության և դիտակցության մեջ շրջան: Ֆրանսիական ենցիկլոպեդիստները: Մոնտեսքիո, Վոլտեր, Դիդրո, Բուսոսո:
 2. Եպոխոյի քաղաքական և հասարակական պայմանները: Ֆրանսիական մոնարքի կողմէ: Դասակարգերը 18-րդ դարի ֆրանսիայում և նրանց հարաբերությունները:
 3. Վոլտերը և նրա կյանքի հիմնական դեկրետ: Վոլտերի պայքարը ֆեոդալական ուժիմբ գեմ: Նրա գործունեության սկզբնական շրջանը: Բանտարկությունը: Վոլտերն մնապիայում: Անգլիական քրականության, փիլիսոփայության և քաղաքական կյանքի ազգեցությունը Վոլտերի վրա:
 4. Վոլտերի կրոնա-վիճակովայական հայացքները:
 5. Վոլտերի գրական ստեղծագործությունը: Բանաստեղծություններ, ողաներ, սատիրաներ, առակներ: Հին գրական ձևերը և նրանց միջոցով արտահայտված նոր գաղափարախոսությունը: Վոլտերի «Արլեանի կույսը»: Նրա վերաբերմունքը դեպի Ժաննա դ'Արքը:
 6. Վոլտերն իրեւ գրամատուրգ և արձակագիր: «Կանդիդ»: «Զադիդ»: Այս գրվածքների ժանրը և գեղարվեստական-հասարակական արժեքը:
-

ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՅՈ

(1712--1778)

1

Նախահեղուփոխական Ֆրանսիայի խոշորագույն դեմքերից մեկը, վոր Շոլտերի և Դիդրոյի հետ միասին նախապատճառեց մաքերը դեպի բուրժուական հեղափոխություն։ Ժան-Ժակ Ռուսառն, ինչպես և Վալտերն ու Դիդրոն, միայն գրականության բնագավառում չեն, վոր թողել և խոշոր ժառանգություն։ Ռուսառն Ֆրանսիայի կուլտուրայի պատմության մեջ մեծ անուն է, վոր իր կարեւոր խոսքն եւ ասել մանկավարժության, փիլիսոփայության, պետական իրավունքի, սոցիոլոգիայի և այլ բնագավառներում։

Վոլտերի և Դիդրոյի համեմատությամբ՝ նա յեղել եւ ավելի արժատական, հեղափոխական, դեմոկրատ, կապգած ժողովրդական մասսաների հետ, այդ մասսաների տրամադրությունների և մտքերի կրքու արտահայտիչը, վոր հատկապես քննության յենթարկեց հասարակական հարաբերությունների կնճոտ հարցն այնպիսի ուժով և սրությամբ, ինչպես վոչ վոք չեր արել իր ժամանակի ֆրանսիական ենցիկլոպեդիստներից։

Ժան-Ժակ Ռուսառն մի խոշոր դարագույն եւ բաց անում մանկավարժության պատմության մեջ։ «Ենիլը» մի սովորական գիրք չեն, գրված սովորական մտածողի և մանկավարժի կողմից։ Նա մի արտակարգ աշխատություն է, վոր ահազին ազգեցություն և ունեցել վոչ միայն ֆրանսիական կյանքում և պատմության։ մեջ, այլ և խոշոր գեր եւ կատարել յելքության, ինչպես և մյուս յերկրների, կուլտուրական պատմության բնագավառում։

«Անհավասարությունը» և «Հասարակական դաշինքը» նոր դասագրուխ են բաց անում սոցիոլոգիայի և պետական իրավունքի պատմություն մեջ—գրքեր, վորոնք ահազին ազգեցություն են ունեցել վոչ միայն յելքության մրրկալի եպոխայում։ Ֆրիդրիխ Նեպելման այդ աշխատությունների մասին խոսելիս՝ նրանց հեղինակն անվանում եւ անցյալի խոշորագույն դիալեկտիկներից մեկը, վոր Զեգելի ծննդից առաջ բաց եւ արել նոր փիլիսոփայության ուղին և նոր հորիզոններ մարդկային մտքի ասպարեզում։

Ցեղ գերջապես «Նոր Ելոիլը»—մի գիրք, վոր գրականության պատմության մեջ իր թերություններով հանդերձ մինչև որս եւ մոռւմ և մի բացառիկ ստեղծագործություն։ Այդ մեծ ոռմանը կարելի յե զիտել վորպես յելքության նոր ոռմանի առաջին որինակը, հոգեբանական վեպի մի այնպիսի նմուշ, վոր տալիս եւ մարդիկ և միջավայր, անհամաներ և հասարակություն, գեծ-

Քեզ և դասակարգի Յեղ այդ յերկու կողմերն ել իրար հետ շղթայված միմյանց հետ կապված, վորովես մի անբաժանելի ամբողջություն: Վեպի հերոս Սեն-Պրյոն կանգնում և ընթերցողի առաջ իր ամբողջ կենցանի պատկերով, 18-րդ դարի Փրանսիական կամ շվեյցարական յերրորդ դասին պատկանող մի հուղական, սանտիմենտալ մտավորական իր հոգեկան, բարոյական և միավորական բնորոշ կողմերով: Բայց այս հոգեքանական պատկերի հետ միասին ծավալվում և ընթերցողի առաջ նաև ամբողջ եպոխան, պատմական ժամանակաշրջանը, Փեոդալիզմի և յերրորդ դասի բաղիսման ծանր և սուր վայրկյանը, աղնվականության և դեմոկրատիայի հռչակավոր հակամարտությունը: Նույնը կարելի յետ ասել և մյուս դեմքերի ու տիպերի նկատմամբ:

Յեղ այսպիս այս ռոմանը ևս մի խոշոր դարագլուխ և հերկայացնում, հեղափոխական մի կարևոր թվական՝ Փրանսիական և առհասարակ յելլոպական գրականության պատմության մեջ:

2.

Ժան-Ժակ Ռուստոն այն բացառիկ հեղինակներից եւ, վոր ռւնեցել եւ ահապին աղբեցություն թե գրականության և թե կյանքի վրա: Միլիոնավոր մասաներ կարգացել են նրա աշխատությունները, կարգացել են վոչ միայն ժողովրդական դեմոկրատիական խավերում վորոնց արտահայտիչն և հանդիսանում նա, այլ և բուրժուական, աղնվականական հասարակության մեջ: Նա գերել և ընթերցողին իր անկեղծությամբ և պարզությամբ:

18-րդ դարի նախահեղափոխական շրջանի Փրանսիական յերիտասարդության վրա նրա աղբեցությունն արտահարդ ուժով և արտահայտվել այն յերիտասարդության, վոր հետո բուրժուական հեղափոխության ժամանակ իշուր դեր և կատարել Ռուստոյի գաղափարներով ներշնչված: Մարտը, Սեն-Ժյուստը, Ռոբեսովիերը և շատ ուրիշները ժան-Ժակ Ռուստոյի հոգեկան, հեղափոխական ժառանգներն են: Դեմոկրատիայի, ժողովրդական գերիշխանության, հասարակական հավասարության մեծ սկզբունքները ժան-Ժակ Ռուստոյի աշխատությունների միջոցով անցան գրական և քաղաքական նոր սերնդին, և այս վոչ միայն ֆրանսիայում, այլ և յելլոպական մյուս յերկրներում:

Մասնավորապես Գերմանիայում մեծ յեղակ ժան-Ժակ Ռուստոյի աղղեցությունը: Լեսինգը, Հերդերը, Գյոթեն, Շիլերը շատ բան վերցրին Ռուստոյից, չխոսելով գերմանական մեծ փիլիսոփաների մասին: Շնուրը ունեց Դրանգ-ի վոթորկալի գրողներն իրենց դրոշակի վրա գրեցին ժան-Ժակ Ռուստոյի անունը: Մուստոն այդ յերիտասարդ, համարձակ, խիզախ գրողների համար նշանաբան հանդիսացավ: Այդ անունը մի ամբողջ մասինիւստ եր:

Բուրժուական գրողներն աշխատում են ցույց տալ վոր ժան-Ժակ Ռուստոյի աղղեցությունը մեծ և յեղել սերնդների և գրականության վրա,

գլխավորապես նրա աշխատությունների վոճի ու փայլի շնորհիլ: Ժան-Ժակ Ռուսան, իրաք վոր, բացառիկ վոճի և դրական մեծ կարողության տեր հեղինակ է: Իր մտքերը շարադրում են նա հանձարեղ կերպով: Նրա վոչ միայն գեղարվեստական ստեղծագործությունը, այլ և փիլսոփայական, քաղաքական, հասարակական յերկասիրությունները ձեփի, վոճի, լեզվի, պատկերավորման կողմից հրաշալի արտադրություններ են:

Բայց այս բոլորը ժան-Ժակ Ռուսանոյի արժեքի միայն մի կողմն ե: Նա մեծ ե վոչ միայն իրեւ վոճարան, կամ իրեւ գրող կամ իրեւ բանասեղծ—այլ և մեծ ե իր գործի բովանդակությամբ և գաղաքարական ամբողջ պարունակությամբ:

Անշուշտ, ժան-Ժակ Ռուսանոն ունի մեծ հակասություններ, ինչպես ունեն անցյալի խոշոր դարաշրջանների մեծ հեղինակները: Նրա փիլսոփայական և դրական ժառանգության մեջ կան մասեր, վորոնք մեծ չեն յեղել վոչ միայն հետագայում, այլ և իր ժամանակ: Ժան-Ժակ Ռուսանոյի գործի մեջ արտահայտություն են գտել շվեյցարական և ֆրանսիական մանր բուրժուազիայի վորոշ հետադիմական տարրերը: Բայց նրա ժառանգության այդ սեակցիոն կողմերը չեն, վոր արժեք են ունեցել պատմականորեն: Ժան-Ժակ Ռուսանոն կարողացել ե հաղթահարել այդ հետագիմական տարրերը և յերևան գալ հիմնականում վորպես մեծ գեմոլլրատ և գորպես խոշոր հեղափոխական: Յեկ ահա այս գրական կողմերի—գեմոլլրատիայի և հեղափոխության մեջ ե արտահայտվել նրա գործի միասնությունը, նրա գործի ամբողջությունն ու սինթեզը:

Բուրժուական քննադատներն այս, ինարէկ, չեն կամենում ընդունել: Նրանք տեսնում են ժան-Ժակ Ռուսանոյի մեջ մի կողմից բացառիկ շնորհը՝ ներով ոժաված մի գրողի, վոր շարադրում և տաղանդավոր կերպով՝ անկախ նրանից, թե ինչ մտքեր ե արտահայտում: Մյուս կողմից նրանք ներկայացնում են Ռուսանոյին վորպես մի անգործնական յերազող, վոր չի համեստում իրականությունը և վոր այնպիսի բաներ ե ցանկանում, վորոնք չեն կարող յերբեք երականանալ մեր գժրախատ յերկրի վրա, ինչպես իրենք են կարծում: Յեկ վերջապես, նրանք հաճախ ներկայացնում են Ռուսանոյին իրեւ մի քաղքենի բարոյախոս՝ իրենց պատկերի և իրենց պարունակության համաձայն:

Ռուսանոյի նկատմամբ հանդես բերած բուրժուական քննադատության այս հիմնական գիծը ժամանակին նկատել ե Գ. Պլեխանանովը իր մի ուսումնասիրության մեջ, վորի վերնագիրն ե «Ժան-Ժակ Ռուսանոն և նրա ուսմունքը՝ մարդկանց միջեւ յեղած անհաջարության մասին»:¹⁾

Ահա թե ինչ ե գրում այս առիթով Պլեխանովը: «Ռուսանովը՝ «Ռուսանոյի մասին խոսողների և գրողների մեծամասնությունն այնպես ե ներկայացրել խնդիրը, թե նրա գաղափարները մենք այժմ չենք կարող ընդունել, բայց չնայելով գրան՝ սենք պետք ե հարգենք նրա հիշատակը, քանի վոր նրա

¹⁾ Г. В. Плеханов: Сочинения, том XVII.

գաղափարները զարմանալի կերպով լավ են շարահյուսված»: Յեզ հետո «...Քննադատների և պուբլիցիստների ահադին մեծամասնությունը, վոր չի ընդունում այժմ Ռուսոյի զաղափարները, իր բացասական վերաբերմունքի մեջ զեկավարվում ե վոչ թե տեսական նկատառությունը, այլ գործնական յերկյուղով: Մենք կհամովզենք շուտով, վոր այդ քննադատների ու պուբլիցիստների կողմից Ռուսոյի զաղափարների մերժման պատճառը վոչ թե գտնվում ե այդ զաղափարների բովանդակության մեջ, այլ այդ քննադատների և պուբլիցիստների հասարակական համականքների մեջք»:

Պետք է նկատել այսաեղ, վոր Գ. Պեխանովս իզուր և հակադրում քննադատների «տեսական նկատառությունները» նրանց «գործնական յերկյուղին»:

Բուրժուական քննադատները Ռուսոյի նկատմամբ հանդես բերած իրենց բացասական քննադատության մեջ զեկավարվում են ամենից առաջ «տեսական նկատառություններով»: Մյուս կողմից, յեթե բուրժուական քննադատների բացասական վերաբերմունքի պատճառն իրավամբ պետք ե վորոնել իրենց «հասարակական համականքների» մեջ, ապա այդ պատճառը միաժամանակ պետք ե վորոնել նաև Ռուսոյի «գաղափարների բովանդակության» մեջ: Նրանք մերժում են այդ զաղափարները վոչ թե նրա համար, վոր այս վերջինները դեմոկրատիզմի համար ընդունելի չեն կամ ճիշտ չեն, այլ վորովհետև այդ զաղափարները բուրժուական քննադատների աշխարհայացքի տեսակետից սխալ են և ընդունելի չեն:

Այսպես ուրիշն, մենք գործ ունենք դասակարգային պայքարի արտահայտության և դասակարգայնորեն մտածող քննադատների հետ, գորոնք մեխում են Ռուսոյի զաղափարները բուրժուական աշխարհայացքի աեսակետից:

Ժան-Ժակ Ռուսոն անցյալի այն խոշոր հեղինակներից ե, վորոնց գործերը բուրժուազիան կամ աշխատել և սովորվածման յենթարկել ու հարմարեցնել իր սպահանջներին և կամ ուղղակի կերպով պայքար և սպել նրանց դեմ և ամեն կերպ աշխատել և վարկարեկել նրանց՝ ընթերցողների լայն խավերում:

Այս հանդամանքը շատ ճիշտ կերպով յերեան և հանել լնկ. Ն. Կրուպսկայան իր մի աշխատության մեջ, վորի խորագիրն ե՝ «Ճողովրդական կրթությունը և գեղոկրատիան»: Այս աշխատության մեջ հեղինակը խոսելով ժան-Ժակ Ռուսոյի մանկավարժական-քաղաքական գործի մասին՝ ցույց ե տալիս, թե հետագայում բուրժուազիան ինչպես և փոփոխության, աղճաման յենթարկել նրա ուսմունքը և ինչպես և դեմոկրատիական բովանդակությունը վերածել բուրժուական բովանդակության: Ինարկե, այս բուրժուական բովանդակությունը կապ չի ունեցել Ռուսոյի ուսմունքի հետ, բայց բուրժուազիան չարաշանել և Ռուսոյի անունն իր զաղափարները տարածելու համար:

Արքնակ, հայտնի յե, վոր Ռուսոն «Եմիլ»-ի մեջ իր սանին վերցնում և բուրժուական—աղնվականտկան ընտանիքից, բայց նրան տալիս ե գե-

մոկրատիական—մարդկայնական դաստիարակությունը Նա բացատրում է այս պարագան իր գրքում որիգինալ կերպով, ասելով վոր աղքատ ծնողների յերեխան ինքնին ստանում ե դեմոկրատիական դաստիարակությունը և վոր ուշեմն պետք ե վերցնել ուրիշ յերեխայի, վորպեսզի դանեւ արդյունավետ մի մարդ աղասած լինենք: Սակայն Ռուսասոյի բուրժուական մեկնարանողները կառուցում են բուրժուական—ազնվահանական մի ամրող սիստեմ և այդ սիստեմը վերաբռում են Ռուսասոյին:

Բնկ. Ն. Կրուպսկայան այդ առիթով գրում ե,—«Ընկնելով տառի ճեղմեց՝ ֆիլանտրոպիսաները (բուրժուական մանկավարժներ, Ա. Հ.) կատարելապես անուշաղբութեան մատնեցին «Եմիլ»-ի վորին: Այսպես, որինակ՝ «Եմիլ»-ում Ռուսասոյի իլլուսնին վերցնում ե հարուստ շրջանից: Բայց նա ինչու յեւ այդպիս անում: Նա նպատակ ունի ցույց տալ թե ինչպես պետք ե դաստիարակել առն աստը ակ մարդուն... իսկ Բազեկովին այդ ընտրությունը մեկնարանել ե այնպիս, թե ամբողջ ուշաղբությունը պետք ե դարձնել հարուստների դաստիարակություն վրա... Ռուսասոյն խոսում ե մարդու դաստիարակության մասին, իսկ Բազեկովը՝ արտօնյալ դասիրի յերեխանակի դաստիարակության մասին»:¹⁾

Հետո ինսելով Ժան-Ժակ Ռուսասոյի ընդհանուր ժառանգության մասին՝ Ն. Կրուպսկայան գրում ե. «...Ռուսասոյի ժառանգությունը խորին յերախտագիտությամբ ընդունում ե բանվորական գեմոկրատիան: Բայց այս ժառանգությունից հրաժարվում ե ժամանակակից, զառամյալ բուրժուազիան: Բուրժուազիայի նախնիքները, վոր գեռւես չելին բաժանում իրենց դաստիարակի շահերը ժողովրդի շահեց, հոչակեցին Ռուսասոյին: Իսկ այժմ յան բուրժուազիան Ռուսասոյին վերաբերվում ե սառն կ բարձրից, և թեև տրադիցիայի համաձայն նրան անզանում ե «միծ», բայց միշտ ավելացնում ե Հուստոպիխատ: Հատ վորում ուսուպիխատ ասելով, բուրժուազիան հասկանում ե վոչ միայն այն — ինչ իրավես ուսուպիխական ե Ռուսասոյի յերկասիրություն մեջ, ու և նրա գեմոկրատիզմը, նրա հարգանքը մարդու և շշմատանքի առջև²⁾:»

Մենք կարեոր համարեցինք այկելի հանգամանալից կերպով մեջ բերել ընկ. Ն. Կրուպսկայայի զնահամատականները Ռուսասոյի մասին, գլխավորապես այն պատճառով, վոր այդ զնահամատականները ծանոթ են յեղել Վ. Լենինին, վոր և ամբել ե իր հավանաթյունը նրանց նկատմամբ: Ն. Կրուպսկայան իր աշխատությունը գրել ե 1916 թվականին Շվեյցարիայում, Վ. Լենինի և միգրանտական տարիներում: Լենինն այդ աշխատությունն ուղարկում ե Ռազմական Գորկուն մի նամակով, վորի մեջ հանձնարարում ե այդ ուսումնասիրությունը և խնդրում է հոգ տանել նրա տպագրության համար: Այդ համակում, վոր զրկած ե Բերնից 1916 թվին, Լենինն ի միջի այլոց առում

1) Н. Крупская: «Народное образование и демократия» 1930 г. Москва-Ленинград, № 27.

2) Н. Крупская, նույն աշխատությունը, № 84:

Ե հետեւյալը.—«...Դուք կտեսնեք, վոր տրված ե նույնուն, առաջին մասի մեջ, գեմոկրատիական հայացքների պատմության ուրվադիմքը։ Այս նույնունից շատ կարեղոր ե, քանի վոր սովորաբար անցյալի մեծ գեմոկրատների հայացքները ցուցադրում են վոչ ճիշտ կերպով և կամ վոչ ճիշտ տեսակետից չե մեկնաբանվում։»¹⁾

Վոչ մի կասկած չկա, վոր «անցյալի մեծ գեմոկրատների» շարքում ամենից առաջ գրվում ե ժամանակակի Ռուսոսոն, վորի կուլտուրա-քաղաքական խոշոր ժառանգությունը բուրժուական քննադատների կողմից ճիշտ չե ցուցադրվում և կամ ճիշտ տեսակետից չե մեկնաբանվում։

Ֆրիդրիխ Ենդելսի գնահատականի հետ միասին, վորին կանգըագունանք մենք քիչ հետո, Վ. Լենինի այս կարճ, բայց նշանակալից տողելլ հանդիսանում են կարեղոր բանալի՝ հասկանալու համար անցյալի մեծ գեմոկրատներից մեկի—ժամանակակի Ռուսոսոյի ամբողջական գործը։ Ժամանակակի Ռուսոսոյի հասարակագիտական, քաղաքական, մանկավարժական և զրական ամբողջ ժառանգության ուշադիր քննությունը ցույց ե տալիս, վոր նա իրավամբ արժանի յեայն մեծ գնահատականին, վոր նրա մասին տվել են Ենդելսը և Լենինը։ Այդ քննությունը միաժամանակ բաց ե անում այն, վոր ժամանակակի Ռուսոսոյի ժառանգության նկատմամբ յեղած մեկնաբանությունն սկսած վորտերից խորապես կապված ե բուրժուական աշխարհայեցողության հետ, վոր մենք պարտավոր ենք ընդունել և արժեքավորել վորպես այդպիսին։

3.

Ժամանակակի Ռուսոսոն իր խոշոր կուլառուրական—հեղափոխական ամբողջ ժառանգությունն ստեղծագործել ե շատ կարճ ժամանակամիջոցում։ 1750 թվականին, յերբ նա 38 տարեկան մարդ եր, վոչինչ, կամ գրեթե վոչինչ չուներ գրած։ Այդ թվականին հոչակվում ե նա մի կարճ, բայց աղմկալի աշխատությամբ, վորի համառոտ վերնագիրն ե «Ճառ գիտությունների և արվեստի մասին»։

1754 թվին տալիս ե նա իր 2-րդ աշխատությունը «անհայլասարությունը «անհայլասարությունը» մասին, վոր առաջինի համեմատությամբ շա ավելի կարեղոր գործ ե և վոր վերջնականապես դարձնում ե նրան մեծ և հոչակավոր հեղինակ։ Իր մյուս նշանավոր գրությունները գրում ե նա այդ տասնամյակում։

1758 թվին տալիս ե նա իր մի ուրիշ կարեղոր աշխատությունը—«Նա մականությունը մասին» վերնագրով, վորի մեջ շոշափում ե կուլտուրայի, զրականության և արվեստի խսդիրները։ Մոտավորապես այդ շրջանում է գրում իր հոչակավոր աշխատությունը՝ «Հասարակական դաշինք» վերնագրով, վոր պատմական մեծ դեպք ե հանդիսանում և վոր դառնում ե ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության զարգացման շրջանում։

1) Վ. Լենինի սամակը Մաքսիմ Գորկուն, 1916 թ. Բերն. տպված Ն. Կրուպսկալի «Народное образование и демократия» գրքում. 1930 թ. № 14։

այն առաջին ազբյուրը, վորից մեծագույն հեղափոխականները ներշնչվում են կյանքի և պետության վերակառուցման համար:

1761 թվին ժան—ժակ Ռուսոսն տալիս ե իր մեծագույն վեպը «Ն ո ր ե լ ո ի զ ը », վոր գեղարվեստական ձևով, պատկերներով, գեմքերով և դեպքերով լայնորեն ցուցադրում ե իր քաղաքական, հաստրակական և փիլիսոփայական հայցքները:

1762 թվին առաջին անգամ յերեան և գալիս նրա նշանագոր «Ե մ ի ւ լ ը », վոր մի խոշոր փիլիսոփայական մանկավարժական աշխատությունն ե, զբած մասսամբ դիտական ուսումնահրության և մասսամբ ոռուանի ձեզով, վոր սեակցիոն ուժերի կողմից դատապարտում ե խարուցիլի և վոր այնքան դասնությունների և հարածանքների պատճառ ե դասնում:

Գրեթե նույն շրջանում սկսում ե ստեղծագործել իր այնքան աղմուկ հանած որպեսը, «Խ ո ս ո տ ո վ ա ն ա ն ք ն ե ր ը », վորի մեջ զարմանալի անկեղծությամբ և բացարառությամբ պատմում ե իր ամբողջ կյանքը, շրջապատը, միջավայրը և այդ կյանքի հետ կապված ծանոթների, ընկերների, բարեկամների, կանանց և տղամարդկանց, հայտնի և հոչակավոր մարդկանց մինչև այդ անհայտ մնացած դեպքերն ու պատմությունները:

Այսպիսով կարելի յէ ասել, վոր ժան—ժակ Ռուսոսոյի վերև հիշատակված գլուխ—կործոցները թե վորակով և թե քանակով մի պատկառելի գրական ժառանգություն, ստեղծագործում են 1750 և 1762 թվականների ժամանակամիջոցում: Ընդամենը 12 տարվա ժամանակաշրջան ե սա, վոր հարուստ ե ժան—ժակ Ռուսոսոյի կյանքի մեծ ապրումներով, մեծ պայքար ներով և նույնպես մեծ հաղթանակներով:

Ժան—ժակ Ռուսոսոյի կյանքը, ինչպես և նրա գործը, տարբերվում է իր բոլոր նշանագոր ժամանակակիցներից: Մռնտեսքիոն, Վալտերը, Դիդրոն, համեմատաբար ավելի հանդարտ և ավելի համաշափ կյանք ունեցին՝ իրենց բոլոր պայքարներով և պայքարի հետ կապված դժվարություններով հանդերձ:

Ռուսոսոյի կյանքը իր ճնշդյան որից սկսած լիքն ե յեղել անվերջանալի արկածներով: Ծնվում ե նա ժնկի մի ժամագործի ընտանիքում: Սա մի դժբախտ ծնունդ և լինում, վորովհետև մայրը մեռնում ե նրան ծննելու ժամանակ: Ժան—ժակին այսպիսով մեծանում ե առանց մոր ինսամքի և հոգատարության, մի հոր հակողության տակավոր շատ բան չեր հասկանում յերեխայի կյանքից և չեր կարողանում հարկ յեղած ձևով սնել կամ դաստիարակել նրան: Յեկ ժան—ժակը մեծանում ե ժնկցի այդ մանր—բուրժուայի ընտանիքում հանձնված բախտի տնորինությանը:

Մանկությունից նա տեսնում ե նեղություններ, կրում ե ամեն տեսակի փարձություններ թե տանը և թե իր ապրած դրախ միջավայրում: Անձանոն ե անցնում նաև նրա մտավոր և բարոյական դաստիարակությունը: Նա կարում է ամեն տեսակ գրքեր, ինչ ձեռքն ե ընկնում, առանց վորեն մեթոդի կամ խորհրդի: Յեկ դեռ մանկական հասակից զանազան սոմանների հետ միասին կարդում ե նա Պլուտարքի պատմություն-

Ները, վրունք նրան գերում և շփոթեցնում են: Կենոսագիլները պատմում են, վոր իր հոր հետ նա յերկար գիշերներ եր անցկացնում այդ ընթերցումների վրա և միայն լուսաբացին, աքաղաղի կանչերից հետո յեր անկողին մտնում քննելու:

Դեռ տասը տարեկան եր ժան—ժակը, յերբ նրա հայրը մի զործի պատճառով ստիպված և լինում հեռանալ մնելոց և թուսայի բախտը հանձ նվում և նրա քեռու հոգատարությանը: Այդ ժամանակ ապրում և նա ժանի մոտիկ գյուղերից մեկում, Սալկ արքի ստորոտում, բնության ծոցում, վոր ահա այս վաղ մանկության հասակից սկսում և շփոթել նրա յերեակայությունը, կապէն իր բաղմախորհուրդ յերեույթների հետ:

Հետո արհեստ կամ վորեկ մասնագիտություն սովորեցնելու համար նրան կրկին տանում են քաղաք, ժնե, ուր հաջորդաբար տալիս են նրան տյո կամ այն վարպետին: Բայց վոչ մի տեղ ել նա չի կարողանում նորմալ կյանք ունենալ և հանգիստ կերպով մի արհեստ սովորելիքը վորք և զրեթե անտեր յերեակային նրան չարչարում են գործի տերերը նա յել այդ միջա վայրում գառնում և ավելի ևս ծույզ, ստախոս և անկարգ մի աշակերտ, ինչ պես ինքն և պատմում իր հիշալությունների մեջ ամենայն պարզաբարությամբ: «Էստ ինքյան արհեստն ինձ համար անտանելի չեր, բայց կործատիրոջ բանակալությունն ինձ համար անտանելի յեր գարձում աշխատանքը և ծնուռ եր իմ մեջ արտօներ, ինչպիսին են ստախոսությունն ծույզությունը, զողությունը»: Այսպէս և նկարագրում իր կյանքը նուսանդ և այն միջավայրը, վասի մեջ ապրում եյին ինքը և իր նմանները:

Մի դեպք աղատում է նրան մանկական ժամանակաշրջանի այդ ստրոկական վիճակից, և այդ դեպքը հետեալին եւ: Մի որ նա շրջագայում և ժընեվի շրջակայքի գաշտերում շատ յերկար ժամանակ, մինչև ուշ գիշեր, և յերբ վերադառնում և քաղաքի գանում և քաղաքի դռներն արդեն փակած: Նա ընդունում և այս դեպքն իրքի մի վորոշում նախախնամության կողմից արված և այլևս չի ուղղում վերադառնալ վոչ իր քեռու և վոչ իր գարպետի մռա:

Յեզ այդ որվանից, մոտ տամնվեց տարեկան հապակից, դառնում և նա թափառաշրջիկ: Ապրում և նա սլատահական կերպով, ում մոտ և ինչպես բախտը տնօրինի: Սկզբում ապրում և Սավոյան յերկրում հայտնի մի ազնվական յերիտասարդ կնոջ, տիկին Դը Վարենի մոտ, վորք հետ կապվում և բավական յերկար ժամանակ և վոր դեր և կատարում ժան-ժակ թուսոյի կյանքում: Հետո, թողնելով այդ տիկնոջը, ժան-ժակին ապրում և զանազան անվանի տներում իրքի սպասավոր, իրքի տնային դաստիարակ, տպա սովորում և յերաժշտություն և գեռ չսովորած տալիս և յերաժշտության գաներ, նման պարապմունքներով շրջում և Շվեյցարիայում, Բառելիայում, Ֆրանսիայի հարագում, ապրամ և Լիոն քաղաքի գլխավոր զատավորի ընտանիքում, իրքի տնային ուսուցիչ, ապա անցնում և Վենետիկի Քրոնոսիական դեսպանատան քարտուղարի պաշտոնով և այն և այն:

1740-ական թվականներին ժամ-ժակ Ռուսասոն յերեվում և Փարիզում՝ առանց վորևի պաշտոնի և առանց նյութական վորևի ապահովության։ Շվեյցարիայում յերկար տարիներ թափառել եր նա քաղաքներում և գյուղերում։ Յեզ ահա այժմ մեծ քաղաքում, Թրանսիայի և Յելլըռպայի հենարոններում, անդրծնական, յերաղող շրջապատի և մեծերի հետ անհաջող, ծանոթների և բարեկամների հետ հաճախ կովոր առորյա կյանքի դաշտնիքներին անհեղյակ և անհաղորդ, ուղղագիծ և հաճախ բիրտ վարվեցողությամբ, չարմարվող, չամակերպվող, զրամու արհամարենող, առաջարկված պաշտոնների նըկատմամբ հպարտ և մերժող, կենսական հարաբերությունների մեջ միախիտ, անխորապես, զմեթե մի մեծ յերեխա - ժամ-ժակ Ռուսասոյի համար ահաւայս մեծ քաղաքը դաւնում և ծանր ապրումների, տանջանքների և դառնության մի վայր։ Ամուսնանում և նա մի պարզ և թերևս անհամապատասխան կնոջ՝ թերեղայի հետ, նրանից ունենում և զսվակներ, վորոնց կյանքը չի կարողանում հոգալ և վորոնց ստիլված և լինում հանձնել այսպես կոչված «Գոտնված յերեխաներ» հինգնարկի խնամակալությանը։ Յեզ այն մարդը, վոր տալիս և իր ժամանակի և առհասարակ մի մեծ դարաշըրջանի դաստիարակության նշանավոր գլուխությունը, հնարավորություն չի ունենում իր հաբաղտու յերեխաների դաստիարակության և խնամքի դորձն ինքը զեկավարելու։

Ժամ-ժակ Ռուսասոյի ամբողջական կյանքը գրեթե այսպիսի պայմաններում և անցնում։ Ծննդած մի փոքր յերկրում, մանր բուրժուական ծագումով և գասահարակալությամբ, զեմակրատիական հակումներով և ժողովը գտկան կյանքի համակրանքով, անցյալի և իր ժամանակի հեղափոխական, դեմոկրատ և հումանիստ մեծ զրոյների ազգեցությամբ և կուլյառայով։ յերեսուն տարեկան հասակում արդեն վորոշակի հետիւրպված և մշտիված իբրև մանր-բուրժուական լմբասու մտավորական՝ ժամ-ժակ Ռուսասոն մի բացառիկ և նույնպես մի ոտար յերեսույթ և Փարիզի ազնվականության, մեծ-բուրժուազիայի և այդ գասակարգերի արտահայտիչ մտավորականության շրջանում։

Այդտեղից եւ ահա առաջանում ժամ-ժակ Ռուսասոյի ամբողջ տրապեզիան։

Այդ միջավայրը նրան չեր հասկանում, և ինքն ել ինարկի, չեր կարող հասկանալ և ընդունել նրանց «քաղաքակրթությունը», նրանց կինցազը, նրանց հոգեբանությունն ու աշխարհայեցողությունը։ Ժամ-ժակ Ռուսասոն միշտ շեշտել ե իր ինքնուրույն տեսակեաը Փարիզի այդ հասարակության մեջ։ Նա համարձակ պաշտպանել և այն միտքը, վոր ավելի բարձր են, ավելի բարոյական են և ավելի արժեքավոր են ժողովրդի այն պարզ մարդիկ, բնության մարդիկ, արհեստագործ, զյուղացին, բանվորը թեկուզ և իրենց մտավորական ցած մակարդակով, քան Փարիզի «քաղաքակրթված» հասարակությունը կամ այդ հասարակության ուսումնական ներկայացութիւն։

Սրա համար ել այդ հասարակությունը կամ նրա ուսումնական ներկայա-

յուցիչը քեն եր անում ժան-ժակի դեմ, համարում եր նրան ռամբկ և ամեն տեսակ միջոցներով պայքար եր մղում նրա դեմ: Փարիզի մտավորականության ներկայացուցիչներից շատերի հետ նա վեճեր եր ունենում, ընդհարումներ, անհամաձայնություններ, վսրոնք հաճախ շատ սուր ընույթ ելին ստանում, ազգում ելին ժան-ժակ Ռուսոյի աշխատանքների վրա, դառնացնում ելին նրա կյանքը, մեկուսացնում ելին նրան, մղում ելին դեպի մռայլ ու հիվանդապին մոքեր, դեպի մելանխոլիա և կասկածամիտ միայնակեցություն:

Այսպես եւ անցնում մանավանդ նրա կյանքի վերջին շրջանը: Մի կողմից հալածված Փարզի բարձր հոգեորականությունից, «Եմիլ»-ի պես նշանավոր գերքը բռնազրավիած և խարույկի մատնված, հետապնդված Փրանսիական կառավարությունից, մյուս կողմից հալածված և հետապնդված նաև իր հայրենի ժըների կառավարությունից, պաշտպանություն չըգործնելով ֆրանսիական մեծ մտավորականներից, ընդհակառակն՝ անուղղակի հալածվելով Վոլտերի պես մի անվանի մարդու կողմից—ժան-ժակ Ռուսոն վերջին տառնամյակում ավելի ևս դժվար կյանք ունեցավ և թերևա մասամբ այդ պատճառով չկարողացավ շարունակել իր նշանավոր գլուխ գործոցները: 1762 թվականի շրջանում, ինչպես տեսանք, ընդհատվում են այդ գլուխ գործոցները: Այդ ժամանակ ժան-ժակ Ռուսոսոն ընդամենը հիսուն տարեկան եր, հասունացած, իմաստնացած, կյանքի բազմատեսակ փորձերով հարստացած—և չնայած դրան, այլևս չի տալիս «Եմիլ»-ի, «Նոր Ելիոթիզի» և «Հասարակական դաշինք»-ի նման դարրագլուխ կազմող գործեր:

Ժան-ժակ Ռուսոսոյի մահը տեղի յե ունենում 1778 թվին, այսպիսի պայմաններում, վոր շատերին տեղիք եւ տալիս կարծելու, թե նա ինքնասպանություն և գործել: Այս յենթագրությունը, սակայն, հավանական չի նկատվում և տիրապետում ե այն տեսակետը, թե նրա մահը տեղի յե ունեցել բնական կերպով:

Այսպէս թե այսպես, ինքնասպանություն թի բնական մահ, փաստն այն ե, վոր միջաղղային դրականության այդ մեծ դեմոկրատը, 18-րդ դարի հեղափոխական մանը բուրժուազիայի այդ հանճարեղ գաղափարախոսը ֆրանսիական բռնապետության շրջանում, ազնվականական և մեծ-բուրժուական հասարակության մեջ առլեց, վորպես մի խորթ զավակ և մեռած փորպես այդպիսին:

4.

1749 թվին Դիժոնի ակադեմիան մի նշանավոր հարց եւ ուղղում ժամանակի փիլիսոփաներին և գիտնականներին այն մասին, թե արդյոք գիտությունները և գեղարվեստը նպաստեցին բարքերի ազնվացմանը, թե չը:

Այս հարցը փոթորկում ե ժան-ժակ Ռուսոսոյի վողջ եյությունը: Նա ինքը կլասիկ ձևով նկարագրել ե այն մեծ տպավորությունը և այն հոգեկան անորինակ խոռվությունը, վոր պատճառել ե նրան Դիժոնի ակադեմիկոսների այդ առողջինակ հարցումը:

Ժան-Ժակ Ռուսսոն այդ ժամանակ 37 տարեկան եր և գեռ գրական-աշխատանքներ չուներ: Այդ պարագան առիթ և տվել վորոշ հետարրատող-ների խնդիրն այնպես ներկայացնել, թե Ռուսսոն ինչ վոր մի միտափական ուժի աղդեցությամբ և գրող դառնում, միտափամից, Դիժոնի ակադեմիայի հարցի գրեթե ճակատագրական ներգրածության տակ:

Բայց անշուշտ չի կարելի ընդունել, և ժան-Ժակ Ռուսսոյի պատ-կերավոր արտահայտություններն այդ հարցի թողած տպավորության մասին հիմք չեն տալիս մեկ կարծելու, թե նրա մուլթ աչքերի առջև աշխարհը մի-անդաման լուսավորվեց և կամ աշխարհի գաղտնիքները հանկարծակի բացվեցին:

Ճշմարտությունն այն ե, վոր ժան-Ժակ Ռուսսոն ունցել եր մինչև այդ ժամանակ յերկարտե պատրաստության մի ամբողջ շրջան: Ռուսսոն ուսու-մնասիրել եր պատմությունը, գրականությունը, փիլիսոփայությունը, Ռուս-սոն խորացել եր դասական աշխարհի, ինչպես և վերածության շրջանի ամբողջ կուլտուրայի ուսումնասիրության մեջ, Ռուսսոն կարգացել և յուրաց-բել եր նաև իր ժամանակի, հատկապես Գրանսիփական 18-րդ դարի հնցիկ-լուսերէստների բազմատեսակ յերկասիրությունները:

Այդ բոլոր նա կատարել եր առանց կանոնավոր գպլոցական կամ համալսարանական ուսման, բայց եյականն այն ե, վոր կատարել եր տվելի-լավ, քան կարող եր տալ այն ժամանակի փակված և ընդհանրապես սխո-լաստիքական համալսարանը: Եերկար կինհի այստեղ թվարկել այն բոլոր-թեկուզ և մեծ անունները, սկսած Սոկրատից, Պլատոնից, Արիստոտելից մինչև Մոնախոքո, Վոլտեր, Դիդրո, վորոնց նա վոչ միայն կարգացել ե, այլ և խորացնին կերպով ուսումնասիրել ե, ոգտվել և շատերից և պայ-քարել և նրանց շատերի դեմ: Այսքանը միայն շատ ցայտուն կերպով յեր-ևան և գալիս ժան-Ժակ Ռուսսոյի յերկասիրություններից, վոր նա իրենից առաջ յեղած մարդկություն մեծ կուլտուրան ճանաչել ե, անց և կացրել այդ-ամբողջն իր նորմայի և իր դասակարգի ըմբռնումների միջից, ինչպես և իր սեփական անհատականության միջից, և այդպիսով կերտել և իր ինք-նուրույն ուսմունքը, իր գրականությունը և իր արվեստը:

Բացի անցյալի վողջ կուլտուրայի ուսումնասիրությունից, ժան-Ժակ Ռուսսոն շատ մոտ և յեղել կանքի դպրոցին և ճանաչել և այդ համալսա-րանն անհամեմատ ավելի լավ, քան իր ժամանակի մյուս նշանավոր են-ցիկլոպեդիստները: Ժան-Ժակ Ռուսսոն միակողմանի գիտության մարդ չեր, նա լավ եր հասկանում, վոր գիտությունը, փիլիսոփայությունը, գրակա-նությունը մեծ ուժ են, բայց մեծ ուժ են այն ժամանակ, յեթե նրանք կապված են գործնական, պրակտիկ կյանքի հետ: Յեզ նրա պրակտիկ ծա-նոթություններն անհամեմատ ավելի հարուստ եյին և ավելի բազմակող-մանի, քան մյուսներինը:

Նա ճանաչում եր Շվեյցարիայի, Ֆրանսիայի, մասամբ և իտալիայի կյանքի եյական կողմերն անձնական ճանապարհորդությունների և մոտ շփումների միջոցով: Նա ճանաչում եր գյուղը, փոքր քաղաքը, մեծ քաղաքը,

ինչպես և Թրանսիայի կենտրոն մայրաքաղաքը: Նա ճանաչում էր վոքը կոմունան, փոքր հանրապետությունը, ինչպես և մեծ ցենտրալիստական միավետքությունը: Վերջապես նա ճանաչում էր տարբեր դասակարգերի և գոտիրի կյանքն անհատական հարաբերությունների և ուսումնասիրությունների միջնորդ—այսիս զյուղացուն, յերկրագործին, արհեստավորին, բանվորին, բուրժուային, ազնվականին, պետական պաշտոնյային, մտավորականին, հոգևորականին և այլն: Խակ այդ բոլորն ինքնին մի ամբողջ համալսարան եր՝ անկախ անցյալի և իր ժամանակի այն մեծ կուլտուրայից, վոր նա յուրացրել եր խորը կերպով:

Յերբ վոր ժան-ժակ Բուլասոն կարդում և Դիմոնի ակադեմիայի հըուչակազոր հարցը—այս բոլորը շարժվում են նրա վող եյության մեջ: Նա զիտե կյանքը, գիտե պատությունը, փիլիսոփայությունը, նա ունի իր հայցը, ունի գրելու պահանջ և դրական բացառիկ ընդունակություն: Յեզահան նա տալիս ե իր առաջին յերկասիրությունը զիտությունների և դեղաբանականի մասին, քննիմով այն ինդիրը, թի նրանց զարգացումը նպաստեց արդյոք բարքերի ազնվացման, թե՛ ընդհակառակը:

Ժան-ժակ Բուլասոն ինքն հետագայում այն կարծիքն է հայտնել այս աշխատության մասին, վոր դա իր բոլոր աշխատությունների մեջ ամենից թույլ ու միջակ գործն եւ: «Ի՞նչ բան է հայտնի անուն, ի՞նչ բան է հոչակ: Ահա այն գժիքախտ գիրքը, վորի միջնորդ յեն ստացա անուն: Կառկած չկա, վոր այս գործն ամենամիջակ եւ, համարձակվում եմ ասել, ամենաթույլ գործն և այս ամբողջ ժողովածվի մեջ»:

Ճիշտ և սա:

Բայց սրանով հանդերձ այս գործն այնպիսի աշխատություններից է, վորոնք կարողանում են զարաքըչան ստեղծել:

Պատուախանելով Դիմոնի ակադեմիկուններին՝ ժան-ժակ Բուլասոն գրում եւ—«Ի՞նչ պ ես բացա ասե ել զիտությունը գիտունների առջև»: Ահա հիմնական հարցը: Բուլասոն սակայն չի մոլորվում այդ հարցի մեջ, ինդիրը չի գոենկացնում, ինչպես գոենկացը եւ նրանից առաջ գիտության, փիլի սովորյության և արվեստի «նանըության» (De la vanite) մասին խոսող կրնառարոյականությը: Նա իմաստությամբ վիշտում է հարցը և այն ներկայացնում է մի բոլորովին նոր քննույթով: «Բայց վոչ թե զիտությունը գատարան առաջանաւ այն բարքությունը բարձրացնել առաջին իրեն զնաք շահագործման, ստրկացման համար: Իր այս տեսակետը նա աշխատում է հիմնագորել պատմական կյանքի վերլուծությամբ, Ցեղապատի, Հովհաննեսի, Հոռմի կամական որինակներով: Նա գտնում է,

Բուլասոն ինգիրը զնում է սոցիալական հողի վրա: Գիտությունները և գեղարվեստաներն արժեք չունեն անկախ ժողովուրդներից և անկախ մարդկանցից: Երանք չեն ծառայել սոցիալական առաջնությունները զարդացնելու գործին, վորոնետք նրանք զանվել են տիրող դասերի ձեռքին և ծառայել են իրեն զնաք շահագործման, ստրկացման համար: Իր այս տեսակետը նա աշխատում է հիմնագորել պատմական կյանքի վերլուծությամբ, Ցեղապատի, Հովհաննեսի, Հոռմի կամական որինակներով: Նա գտնում է,

վոր գիտությունների և արվեստի ծաղկած շրջանում հասարակական առաքելությունները պահանջել են: Փիլիսոփայության և արվեստի փայլուն դարը Հունաստանում միաժամանակ բարոյական-սոցիալական անկման դար եր: Հունաստանը ստրուկտուրի յերկիր եր: Սոցիալական հարաբերությունների պատկերը ստրուկտուրի և տերերի խիստ անտագոնիզմի գոյությունն եր: Ժան-Ժակ Ռուսոյի համար այդպիսի փիլիսոփայություն և այսպիսի արվեստ, վոր աշխատում եր բացատրել արդարացնել և հավերժական հայտարարել ստրուկտուրի դոյությունը—անարժեք մի փիլիսոփայություն եր: «Դեմոսիթենի ամրող ճարատարախոսությունը չեր կարողանում է լրակենդանացնել մի մարդ անգամ, վորին արվիսան ու պերձանքը թուացը ելին»: Այսպես եր Ռուսոյն վորակում հին աշխարհի ամենափայտն հոետորի արվեստը և կիտությունը: Հատ Ռուսոյի՝ այս արվեստն ու պիտությունը մազաշափ անգամ չեր կարտառում սոցիալական ազնիվ դեր կատարել փոխել կյանքի անարդար ընթացքը:

Նույն քան անդոր ելին գիտություններն ու արվեստը հայրենիքի, կոլեկտիվի պաշտպանության խնդիրներում: Հոսմը, Հունաստանը, Անգլիան Դալբիան հաղթվեցին հետագեմ, անգարգացած ժողովուրդներից: Հոսմի փիլիսոփաների և հոետորների դարում հայրենիքը մոռացվեց, կոլեկտիվը անուշադրության մատնվեց, հողագործական աշխատանքն արհամարհվեց: «Ազատության և անշահախնդրության նվիրական անուններին հաջորդեցին եպիկորի և Զենոնի անունները», առում և Ռուսոյն, հակադրելով ազատ և պարտաճանաչ հերոսներին պերձանքի, զվարճության և վերացական փիլիսոփաներին: Ռուսոյն գտնում ե, վոր գեռաւ Հոսմի մեջ լավերը դատապարտել ելին այդ յերեսությը: Եա մեջ և բերում վիրտուոֆա Մենսի հեռելյալ խոսքերը — «Այն ժամանակից, յերբ գիտնականները յերեացին մեր մեջ, բարիք ստեղծող մարդիկ են անհայտացան»: Միաժամանակ Մենսի միջոցով Ռուսոյն վոգելույում և այն նշանավոր հոռմեացու՝ Փաբրիցիուսի անունը, վոր հայտնի յեր իր բարքերի պարզությամբ, անշահախնդրությամբ և իր ժողովրդական իմաստությամբ: «Ա, ֆաբրիցիուս, ինչ կմատածեր ձեր մեծ հոգին, յեթե վերակենդանայիք և տեսնելիք Հոսմի այս գոռոզ պատկերը...»: Յել հետո՝ «Դուք կառնիք, ու ասալածներ, ինչ են զարձել այն տանիքները և այն ծխնելույզները, վորոնց անկ յերեմն բնակվում ելին պարզությունը, չափավորությունը և առաքինությունը: Ի՞նչ աղետալի փայլ և հաջորդել հոսմերական նախկին պարզությանը: Ի՞նչ են նշանակում այս արձանները, այս պատկերները, այս շենքերը: Ի՞նչ են նշանակում այս կոնցիսիացած բարքերը...» Թեկ տպա՞չ Զեղ (Հոսմի ժողովրդին) այժմ հոետորներն են կառավարում: Յեվ արձանագործներին, նկարիչներին ու ճարտարապետներին հարստացնելու համար ե, վոր դուք թափել եք ձեր արյունը Հունաստանում և Ասիայում»:

Խնդրի այս դրությունից մենք պարզ տեսնում ենք, վոր ժան-Ժակ Ռուսոյն գիտություններն ու վաղարվեստը քննադատում այն չտփով, վոր

չափով նրանք չեն սպասավորում ժողովրդական մասսաններին, վոր չափով նրանք ծառայում են վերին, տիրող զասերին՝ լինեն նրանք ազնվականներ կամ բուրժուաներ:

Գալով իր ժամանակի վերլուծությանը՝ նա ֆրանսիական 18-րդ դարի գիտություններն ու գեղարվեստը նույն տեսանկյունով և քննագաղատում: Ռուսացն զուրս և գալիս ազնվական և բուրժուական մտավորականության դեմ: Նա դնում և ժողովրդի հարցը և գոտում ե, վոր ժողովուրդը վոշինչ չի ստանում գիտնականներից և արվեստագետներից:

Իր մտքերը հիմնավորելու համար նա հաճախ գիտում և 16-րդ դարի ֆրանսիական վերածության խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Միշել Մոնտենի գատողություններին, վորոնց մեջ նա տեսնում և սկսութիցիդմ գեղի գիտությունն ու դեպի գիտնականները, վորոնք չեն կարողանում թեթևացնել ժողովրդական վիճակը:

Ժան-Ժակ Ռուսացն այսպիսով չեն բացասում ընդհանրապես փիլիսոփայությունն ու գիտությունը, այլ այն փիլիսոփայությունը, այն կոնկրետ գիտությունը, վոր պաշտպանում եր տիրող ուժիմը և հասարակական վատ կարգերը: Նա ընդունում է, վոր հին գարերում ևս բոլոր փիլիսոփաները և գիտնականները չեն ներկայացել արատավոր հասարակակարգի պաշտպաններ, այլ նրանցից լավերն այս կամ այն կերպ զուրս են յեկել այդ կարգի դեմ և պաշտպան են կանգնել ժողովրդական իրավունքներին: Հին կուլտուրայի գնահատության մեջ նա դնում է, անա այսպիսի մի բաժանման գիծ և ընդունելով նրա մի մասը՝ մեծ թափով, զայրույթով ու հեղափոխական կրքուսությամբ զուրս և գալիս մյուսի դեմ: Այս յերկու կողմերը միայն իրենց զուրս փիլիսոփայութեան կամ մտավորական հատկություններով չեն բաժանվում միայնցից այլև բարոյական-սոցիբալական, և յեթե ուղինանք այսորվա մեր տերմինով արատահայտել՝ դասակարգային եյությամբ:

Ժան-Ժակ Ռուսացյի այս աշխատության մեջ, ինարկե կան պարագործաներ, չափազանցություններ, յերեմին բավականաչափ միամիտ դատողություններ, վորոնց թվին և պատկանաւմ այն միտքը, թե գիտությունները և արվիստը ծագում են մեր արատներից, թե, որինտել, աստրոնոմիան ծնունդ ե առնում նախապաշտումից, հուեառությունը ստությունից և տղիառությունից, յերկրաչափությունը ազահությունից և ժլատությունից և այլն և այլն:

Բայց այս բոլորով հանդերձ՝ ժան-Ժակ Ռուսացյի այս առաջին աշխատության մեջ ես արտահայտվել են հեղափոխական, դեմոկրատիական այն հիմնական գծերը, վորոնք հետո զարգացել են նրա գլուխ-զործոցների մեջ:

Այս աշխատությունը մի ուժեղ ուեակցիա յեր իր անգոր ծնական և անաշխատ դարի դեմ, այսինքն այդ դարի վրա իշխող ազնվականության, ինչպես և նոր բարձրացող բուրժուագիտայի դեմ: Յիթե բուրժուագիտիւ պիքական գաղափարախոս Վոլտերը գտնում եր, վոր բանականությամբ կարելի

կլինի չարիքը բուժել Ժան-Ժակ Ռուսոն հասկանում եր, վոր բանականության թագավորությունը սոցիալական չարիքը չեր բուժում և ժողովրդական թշվառությանը վերջ չեր տալիս:

Այսաեղ պետք ե տեսնել, ահա, Ժան-Ժակ Ռուսոյի այս առաջին աշխատության հիմնական դադափարը:

Իրեւ չարիքից դուրս գալու միջոց՝ Ժան-Ժակ Ռուսոն արծարծում եր այն միտքը, թէ գիտությունը պեսք և մոտեցնել գործնական կյանքին, պրակտիկային, հասկանալով, իհարկե, այդ պրակտիկան իր հիմնական դեմոկրատիական աշխարհայցքի դիրքերից, իր այդ առաջին աշխատությունը նա վերջացնում ե հետեւյալ նշանակալից առղերով. — «Այնքայն ժամանակ, քանի ույժը մնա մի կողմում և իմաստությունը միայնակ մյուս կողմում — գիտունները հազիվ թէ կարողանան մեծ բան մտածել և իշխողները հազիվ թէ կարողանան մեծ գործ կատարել և ժողովուրդն ել կշարունակի մնալ ստոր վիճակում, արատավորված և դժբախտ»:

Ժան-Ժակ Ռուսոսոյի մյուս աշխատությունների մեջ հետագիտեա ավելի ու ավելի պարզ կերպով հայտնի յե դառնում, թե ինչ դիրքերից եր նայում անցյալի այդ մեծ դեմոկրատն իր ժամանակի գիտության, գրականության և հասարակական հարաբերությունների վրա:

5.

Դիմոնի ակադեմիան Ժան-Ժակ Ռուսոսոյի առաջին աշխատությունը պսակեց մրցանակով, բայց նա մերժեց յերկրորդ աշխատությունը, վոր գրված եր նույնպես Դիմոնի ակադեմիայի մի ուրիշ հարցի նկատմամբ և վոր շոշափում եր անհավասարության մեծ պրոբլեմը:

Այս մեծ խնդիրը դրվում եր այսպես — «Ի՞նչն է մարդկանց մեջ գոյրաթյուն ունեցող անհավասարության աղբյուրը և արդյոք այդ անհավասարությունը թույլատրվում ե ընական որենքով, թե վոչ»:

Ռուսոնն այս աշխատության մեջ հասարակական և փիլսոփայական վերլուծության շատ մեծ կարողություն և հանգես բերում. Մարդկային կուլտուրայի պատմության մեջ այս կամ այն մեծ մտածողը մինչև Ռուսական շոշափել եր սոցիալական հարցերից այդ ամենահիմնական հարցը:

Ի՞նչպես ե ապրել մարդկությունը դարերի ընթացքում, իր ծագման և զարգացման ամենահին շրջանում, ի՞նչպես ե մարդկանց մեջ անհավասարություն առաջացել. Արդյոք մարդու բնության անխոռափելի և անհրաժեշտ հատկությունն ե դա թէ պատմական զարգացման վորոշ ետապեւմ և յերեւան յեկել. Արդյոք հնարավոր ե նրա վերացումը, թե նա այլևս կապված և մարդկության ճակատագրի հետ անբաժանելի կերպով:

Այս հարցերը հուզել են մեկից ավելի փիլիսոփաների և սոցիոլոգների միտքը:

Ժան-Ժակ Ռուսոնն կանգնած և այդ փիլիսոփաների և սոցիոլոգների առաջին շարքերում, Նրա միտքն այնքան խորը և այնքան տակնապալի

կերպով զբաղվել ե այդ հարցերով: Յեվ «Անհավասարության» մասին գրած իր աշխատության մեջ նա ցուցյ ե ավել այդ մտքի մեծագույն կարողությունը, վորքան առաջարարակ մարդկային մտքի կարողությունը սոցիալական հարցերուն կարող եր խորանալ պատմական այդ ժամանակաշրջանում և դասակարգային տվյալ հարաբերությունների մեջ:

Ֆրիդրիխ Ենգելսը նշում և ժամանակակի Ռուսայի (Նրա հետ և Դիտրովի) մտքի բացառիկ խորությունը 18-րդ դարի մյուս մտածողների համեմատությամբ Այս մասին նա հետեւյալն ե զբում «Անտի-Դյուրիխոգ»-ի մեջ:—

«...թեև դիմիկակայիկան նաև նոր փիլիսոփայության մեջ ուներ փայլուն ներկայացուցիչներ (Դեկարտ և Սպինոզա), սակայն նա հատկապես անդիմիկան փիլիսոփայության ազդեցության տակ հետզհետեւ ավելի ու ավելի ե թեքվում դեմի այսպես անվանված մտածողության մետափիլիկան յեղանակը, վոր գրեթե բացառապես տիբել եր նաև 18-րդ դարի ֆրանսիացիներին, առնվազն նրանց հատուկ փիլիսոփայական աշխատությունների մեջ: Սակայն այդ բնադրավառից դուրս նրանք կարողացան մեզ թողնել դիմիկակայի բարձր սմուշներ: Հիշենք միայն Դի զրոյի «Ռամոյի յեղբորդին» և Ռուսայի աշխատությունը «Մարդկանց միջն յեղած անհավասարության մասին»¹⁾:

Իր աշխատության առաջին տողերից Ռուսասոն խնդիրը դնում է այսպես: «Յեւ նկատում եմ մարդկային սեռի մեջ յերկու տեսակ անհավասարություն, մեկը, վոր յես կոչում եմ բնական կամ փիլիկական, քանի վոր նա սահմանված ե բնության կողմից, և վոր ներկայացնում է տարիքի, առողջության, մարմնական ուժերի և հոգու ու մտքի հատկությունների տարրերություն: Մյուսը, վոր կարելի յե անվանել բարոյական կամ քաղաքական անհավասարություն, վոր սահմանված ե կամ առնվազն թույլատրված և մարդկանց կողմից: Այս անհավասարությունը կայանում է զանազան արտոնությունների մեջ, վոր մի քանիմները վայելում են ի հաշվի մյուսների և վոր հետեւյաներն են՝ լինել ավելի հարուստ, ավելի պատժավոր, ավելի ուժեղ, քան մյուսները, և մինչև իսկ իշխել այդ մյուսների վրա»:

Այսպիսով, Ռուսասոն խիստ կերպով տարրերում ե յերկու տիպի անհավասարություն և նրանց վորեւ կերպ չի կապում միմյանց հետ չետու ըստ նրա ուսմունքի, մեկ անհավասարությունը սահմանված ե բնության կողմից և պարզ ասված ե, թե ինչպիսի անհավասարություն ե այն: Ժան-օվակ Ռուսասոյի այդ սահմանումից շատ վորոշակի յերեան ե գալիս, վոր այդ անհավասարության մեջ չեն մանում քաղաքական կամ սոցիալական գործեր այսինքն այս, վոր քաղաքական կամ սոցիալական անհավասարությունը վորեւ կերպ կապված չե մարդկային բնության հետ:

Մյուս կողմից, յերկորդ տեսակի անհավասարությունը նրա տերմինաբանությամբ անվանվում ե բարոյական կամ քաղաքական անհավասարություն: Բայց պարզ ե, վոր նրա գործածած «բարոյական» բառը համար-

1) Փ. Թիգելս: «Անու-Դյուրիխ». Մոսկվա. 1932 եջ 14:

Ժեզ ե այսորվա մեր «սոցիալական» տերմինին, քանի վոր յերկրորդ տեսակի անհավասարության բոլյանդակությունը վորոշելու ժամանակ նա առաջին հերթին նշում ե հարուստների և աղքատների տարբերությունը, այսինքն՝ առաջին հերթին դնում ե սոցիալական խնդիրը:

Այս սկզբնական սահմանումից հետո հարց ե առաջանում, թե արդյոք այդ յերկու տիպի անհավասարությունները կապված են իրար հետ պատճառի և հետևանքի կապսվ։ Հայտնի յե, վոր անցյալի մեծ մտածողների մեջ յեղել են այնպիսինները, վորոնք սոցիալական անհավասարությունը, որինակ՝ սորվության ամենախայտառակ փաստը, համարել են մարդկային բնության անհամաժեշտ հատկությունը և մտածել են, վոր սորվությունը պիտի գոյություն ունենա միշտ, քանի գոյություն ունի այդ բնությունը։ Ժան-Ժակ Բոււսոն շատ խիստ կերպով գուրս ե զալիս անցյալի այդ մտածողության դեմ և իր փիլիսոփայական մտքի խորությամբ, ինչպես և իր հեղափոխական վոգու ուժով խնդիրը դնում ե տարրեր հիմքի վրա։ Նա գրում է. — «Անկարելի յէ վորոնել, թե կամ արդյոք վորեն եյտկան կապ այդ յերկու անհավասարությունների մեջն, քանի վոր դա կնշանակեց ուրիշ խոսքով ասել, թե նրանք, վորոնք իշխում են՝ ավելի արժեք ունեն քան նրանք, վորոնք յենթարկվում են, կամ թե մարմնի և մտքի ույժը, խմասությունն ու առաջնությունը գտնվում են միշտ միևնույն անձնավորությունների մեջ՝ համատեղ նրանց հարստության կամ իշխանության։ Մյուլիսի խնդիրը հարմար ե թերեւ բարձրացնել սորուկների շրջանում, բայց մի խնդիր ե դա, վոր սոլորովին հարմար չե բանական և ազատ մարդկանց, վորոնք վորոնում են ճշմարտությունը։

Ժան-Ժակ Բոււսոյի համար խնդիրը դրվում է, ուրեմն այսպես, այն, վոր սոցալական անհավասարությունը կապված չե մարդկային բնության հետ, վոր նա առաջացել ե պատմականորեն և վոր անհամաժեշտ ու ուսումնասիրել, թե հասարակական զարգացման ինչպիսի շրջանում և ինչպիսի աղդեցությունների տակ ե առաջանում այդ անհավասարությունը։

Ընդունելով, վոր սոցիալական անհավասարությունը առաջացել ե պատմականորեն, Բոււսոն դրանով ընդունում ե մի նախնական շրջան, վորի մեջ չե յեղել սոցիալական անհավասարություն։ Յեվ քանի վոր այս նախնական շրջանում գոյություն ե ունեցել բնական անհավասարություն, նշանակում ե ուրեմն, վոր այդ յերկու անհավասարությունների մեջ «եյտկան կապ» չկա, ինչպես արտահայտվում ե Բոււսոն։

Խոսելով մարդու մասին առհասարակ և արտահայտելով դեպի նա ամենախորը դեմոկրատական վերաբերում, Ժան-Ժակ Բոււսոն ցույց ե տալիս, վոր մարդս բնության կողմից և «բնական վիճակում» դատապարտված չե յեղել այն ծանր «ճակատագրին», վորի մեջ նա ապրում ե յերկար դարեր շարունակ։ Բոււսոյի միտքը կորում, անցնում ե մի կողմից դեպի հետափոր անցյալը, խորանում ե մարդու պատմության» մեջ, քննարկում այն հարաբերությունները, վորոնք նրա տեսությամբ յեղել են այդ հեռավոր անցյալի մեջ։ Մյուս կողմից՝ նա պատռում ե իր ժամանակաշրջա-

Նի պատմության սահմանները, աեմնում և գալիք հեղափոխությունները և պատկերացնում ե մարդու վիճակը ապագայի հարաբերությունների մեջ:

Ներշնչվելով բնության փիլիսոփայությամբ, նա գիմում և «բոլոր յերկբների մարդուն», բաց և անում նրա առջև բնության գիրքը, և ասում և նրան հետևյալը.—«...Այս քո պատմությունը այնպես, ինչպես յես կարդացի այն վոչ թե մարդկանց գրքերում, վորոնք ստող են, այլ բնության մեջ, վոր չի կեզծում յերբեք: Ինչ վոր գալիս և բնություննից—ձշմարիտ կլինի: Ցեվ ինչ վոր սուս լինի այս պատմության մեջ, կլինի այն, ինչ վոր յես խառնել եմ նրան ինձանից առանց կամքնալու: Այն ժամանակները, վորոնց մասին յես պիտի խոսեմ, շատ հետու յեն: Վորքնն ես գուփոխիւ համեմատությամբ նրա հետ, ինչ վոր յեղել ես դու Սա քո ցեղի ամբողջ կյանքն ե, վոր յես ուղում եմ նկարագրել համաձայն քո ունեցած հատկությունների, հատկություններ, վորոնք աղավաղվեցին զառտիարակության պայմանների և սովորույթի հետևանքով, բայց վորոնք սակայն չկոչնչացան...»:

Հստ ժան-ժակ Ռուսոսի մարդս նախնական ժամանակաշրջանում յեղել և անաղարաւ: Հետագայի հստաբակալան պայմանները փոխել են, աղավաղել են նրա բնությունը, բայց չեն վոչնչացրել նրա եյությունը: Այս եյությունը կրկին անդամ յերեան պիտի գա նրա մեջ հեղափոխությունների միջոցով, պիտի զարդանա և դառնա մի նոր վորակ, վոչ թե այն հինը, վոր թողել ե նա պատմականորեն, այլ մի նոր վիճակ, վոր պիտի առաջանա նույնական սպատմականորեն: Այսպիսով, չի լինելու վերադարձ գեղի բնություն այն պահպանողական իմաստով, վոր վերագրվում է ժան-ժակ Ռուսոսին բուրժուական քննադատների կողմից, այլ տեղի յեռնենալու բնության հողի վրա մարդուս և նրա հստաբակական հաստատությունների զարգացումն ու վերափոխությունը:

Այս կետը ավելի ևս կպարզվի քիչ հետո, յերբ մենք կանգ կառնենք Ֆրեդրիկ Նովելսի վերլուծության վրա: Այժմ գետ անհրաժեշտ ենք համարում քննարկել այն խնդիրը, թե ինչպես տեղի ունեցավ ժան-ժակ Ռուսոսոյի ուսմունքի համաձայն, սոցիալական նախնական հավասարության վերացումը և անհավասարության առաջացումը: Իհարկե, սա մի կարճ ժամանակի պատմություն չե, այլ մի յերկուրանու ու դանդաղ պատմական պրոցես ե, վորի գիտական վերլուծությունն ու բովանդակալից նկարագրությունը մինչև այժմ տրված չե: Ռուսոսն նախնական ժամանակաշրջանի պատկերը տվել ե ոգտվելով մի շարք աղբյուրներից, գիտափորապես ոգտագործելով իր ժամանակի Փրանսիացի հայտնի ընագետ Բյուֆոնի «Բնական պատմությունը»: Բայց այս պատկերն, իհարկե, գիտական պատմություն չե, և ժան-ժակ Ռուսոսի այդ նշանավոր աշխատության արժեքությունը չպետք չըկետք ե վորոները:

Ժան-ժակ Ռուսոսն իր ընդհանուր աշխարհայացքից յենելով բանավեճում և այն մտածողների գեմ, վորոնց կարծիքով մարդս նաև բնության վիճակում մի չար ու դաժան արարած եր, վոր իր նմանին կարող

ձը անել և անում եր ամեն տեսակ չարություն, քանի վոր այդպես եր մարդկային բնությունը. Այս հողի փառ Ռուսան գլխավորապես բանավեճում և անզիմացի փիլիսոփա Թոմաս Հոբեսի հետ, վոր իր մատերիալիստական աշխարհայեցողության հետ միասին, ինչպես Ենգելսն և Նկատում, պաշտպանում եր թադալորի ինքնակալությունը և հրավիրում եր բացարձակ միապետության՝ զսպելու ժողովրդին:

Ժան-Ժակ Ռուսասոն հասարակ, պարզ, բնական մարդկանց, ինչպես և հասարակ ժողովրդին չի պատկերացնում դաղանային հատկություններով, այլ ընդհակառակը, նրանց մեջ տեսնում ե ազնվություն, առաքինություն, մարդկայնություն, փօխադարձ ողնության մի ներքին, բնական մոռմ և այլն և այլն: Այս տեսակեաը փիլիսոփայական կամ բնագանցական մի անուարեկը աշխարհայեցողություն չե, այլ խորապես կապված և Ռուսասոյի հասարակական դիրքավորման հետ:

Յեթե հակառակ տեսակեան արտահայտում ե ազնվականության և խոշոր բուրժուազիայի տրամադրությունները, ապա Ռուսասոյի այդ փիլիսոփայական աշխարհաեցողությունը՝ մարդկանց և ժողովրդի մասին, արտահայտում ե նրա դեմոկրատիական ուժեղ և շեշտված կողմնորոշումը:

6.

Դեմոկրատիական այս աշխարհայեցողությունը շատ շեշտված ձևով յերևան և գալիս մանավանդ այն նշանափոք եջերում, վորտեղ Ռուսասոն նախարարում ե, թե ինչ ազգեցության տակ վերացավ նախնական հավատարությունը և ինչպես առաջացավ սոցիալական անհավասարությունը:

«Այս առաջին մարդը, վոր շրջափակեց մի հողամաս և առաջ մյուս ներին, թե սա իմ ս ե և գտավ միամիտ մարդիկ, վորոնք նրան հավատացին—այս մարդը յիղալ քաղաքացիական հասարակության իսկական հիմնադիրը»:

Քաղաքացիական հասարակություն ասելով Ռուսասոն հասկանում ե պատմական պրոցեսի այն շրջանը, վոր հաջորդում ե նրա պատկերացրած նախնական շրջանին, այսինքն բնական վիճակին: Այս հասարակությունն, ըստ Ռուսասոյի, եյտապես տարրերիվում ե բնական վիճակից սոցիալական անհավասարության փաստով, իսկ սոցիալական անհավասարությունը յեղնան և գալիս իրեւ անխուսափելի հետեանք մասնավոր սեփականատիրության:

Ժան-Ժակ Ռուսասոյի բնական հասարակության մեջ չկար իմ ու քոնի հասկացողությունը, չկար մասնավոր սեփականատիրության գաղափարը, այդ պատճառով ել մարդիկ ավելի բախտավոր և ավելի առաքինի եյին, քան քաղաքացիական հասարակության մեջ: Պատերազմները, վոճիրները սպանությունները բացակայում եյին այդ շրջանում իրեւ ընդհանուր յեցւույթ: Նրանք առաջացան քաղաքացիական հասարակության մեջ, ուրիշ առաջացան մասնավոր սեփականատիրության:

«Վորքան պատերազմներից, վոճիրներից, սպանություններից կազմա-

վեր մարդկությունը, յեթե մեկը կարողանար կանգնել նրա դեմ (վոր շրջա-
փակեց և սեփականացրեց հողամասը. Ա. Հ.) և ասեր, «Մի լսեք այս անի-
բավին, դուք կորած եք, յեթե մոռանաք, վոր արդյունքը պատկանում է
բոլորին և հողը վոչ վոքի»:

Ժան-Ժակ Ռուսսոյի այս յերկու նշանավոր ցիտատների պատկերա-
վոր արտահայտություններից չպետք է այնպես յերկացնել, թե պատ-
մական այն յերկարատես պրոցեսը Ռուսսոն ներկայացնում և վորպես մի-
կարճ մոմենտի մեջ կատարված իրողություն: Հոգածաւը հափշտակող անի-
բավը մի առանձնակի մարդ չե, այլ նա յերկարատես եպոխաների պատ-
կերացումն ե:

«...Սեփականության գաղափարը կախված է ուրիշ շատ դադափար-
ներից, վորոնք նրանից առաջ առաջացել են մեկը մյուսի հետեւից, հաջոր-
դաբար: Մարդկային մտքի մեջ սեփականության գաղափարը միանգամից
չե վոր ձեակերպվեց: Հարկավոր յեղավ շատ ու շատ պրոգրես կատարեց,
ձեռք բերել շատ արվեստ, շրջանառության մեջ դնել այդ բոլորը, և տա-
րեց-տարի ավելացնել մինչև վոր մարդիկ համեյին բնակիան վիճակի այս
վերջին կետին»:

Ժան-Ժակ Ռուսսոյի այս տողերի մեջ արտահայտված է սղիալեկախ-
կայի այն բարձր նմուշը, վորի մասին խոսում ե Ֆրիդրիխ Ենգելսը:

Իր «Անտի-Դյուրիխովակ» մեջ Ենգելսը հաճախակի արտահայտվում ե-
նուսսոյի ուսմունքի մասին: Այս արտահայտությունները շատ փայլու-
կերպով լուսաբանում են Ռուսսոյի աշխարհայցքը և թանգարժեք բանալի-
յեն հանդիսանում մեր ձեռքում՝ հասկանալու համար Ռուսսոյի աշխար-
հայցքի նաև այն կողմերը, վորոնց մասին Ենգելսը չի խոսում հատ-
կապես:

Ենգելսը գրում ե. «...Ռուսսոյի ուսմունքն իր առաջին շարադրանքի
մեջ, կարելի յե ասել, փայլուն կերպով դրսկորում ե իր գիւղեկտիկական-
ծագման կնիքը: Բնական և փայլենի վիճակի մեջ մարդիկ հավասար ենին...
բայց այս հավասար մարդիկ-կենդանիները մյուս կենդանիների առջև մի-
առավելություն ունեյին—կատարելազործման, հետագա զարգացման ընդու-
նակություն, և այս ընդունակությունը պատճառ դարձավ անհայտարու-
թյան: Այսպես, Ռուսսոն անհավասարության ծագման մեջ տեսնում ե
պրոգրես: Բայց այս պրոգրեսը անտագոնիստական եր, նա միաժամա-
նակ ունդրես եր»:

Ժան-Ժակ Ռուսսոյի գատողության համաձայն, ինչպես նկատում ե-
նուգելսը, հետագա բոլոր հաջորդությունները ներկայացնում են միայն յե-
րկույթական պրոգրես՝ առանձին մարդու կատարելազործություն ու գործու-
մարդկային ցեղի անկման ուղղությունը:

«Մետաղի մշակությունը և հողագործությունն այն յերկու արվեստ-
ներն եյին, վորոնց հայտնագործումն առաջ բերեց այս անպին հեղափո-
խությունը» ասում ե Ռուսսոն: Մրան Ենգելսն ավելացնում ե՝ «Այսինքն»

Նախնական անտառների վերածումը մշակելի հողի, գրա հետ միասին նույնպես թշվառության և ստրկության թագավորություն, վոր առաջացավ սեփականության հաստատվելով:

Ժան-Ժակ Ռուսան գրում ե. — «Պետի տեսակետից վոսկին և արձաթը, իսկ փիլիսոփայի տեսակետից՝ յերկաթը և հացը քաղաքակրթեցին մարդկանց, բայց և կործանեցին մարդկային ցեղը: Ենգելսը մեջթերելով Ռուսասոյի այս միաքը մեկնաբանում ե. այն հետեւ ալ կերպով — «Բաղադրական ամեն մի նոր պրոգրեսիվ քայլ միաժամանակ անհավասարության ամեն պրոգրեսիվ քայլ միաժամանակ անհավասարության պրոգրես ե. Այն բոլոր հաստատությունները, վոր քաղաքակրթության համար հասարակությունն ստեղծում ե իր համար, վերածվում են իրենց նախնական նպատակին հակադիր մի ուրիշ ըանից: Այս մտքի հիմնավորման կապակցությամբ, Ենգելսը Ռուսասոյից առաջ ե ըերբում հետևյալը: — «Անվիճելի յե, և այս պետական իրավունքը հիմնական որենքն ե — վոր ժողովուրդներն իրենց համար թագավոր են ստեղծել իրենց ազատության պահպանության և վոչ նրա վոչչացման համար»:

Հետո Ենգելսն ավելացնում ե. — «Յեվ չնայելով սրան, ասում ե Ռուսան, այս կառավարողները դառնում եյին ժողովուրդներին ճնշողներ, և նրանց ճնշումն ուժեղանում ե մինչև այն մոմենտը, յերբ անհավասարությունը հասնելով ծայրահեղ աստիճանի կրկին փոխվում ե իր հակառակ կողմին, դառնալով հավասարության պատճառ. — դեսպատի առջև բոլորը հավասար են, այսինքն յուրաքանչյուրը հավասար ե զերոյի»:

Ռուսան գրում ե. — Այստեղ անհավասարության բարձրագույն աստիճանն ե, այն վերջին կետը, վոր փակում ե շրջանը, և հանդիպում ե սկզբանական կետին, վորից մենք մեկնեցինք քր Այստեղ բոլոր մասնավոր մարդիկ կրկին դառնում են հավասար անդամներ, բայց միայն այն պատճառով, վոր նրանք փոշինչ չեն և հպատակներն ուրիշ վորեւ որենք չունեն, բացի իրենց տերի կամքից: Ենգելսը մեջբերելով Ռուսասոյի այս տողերը, վորոշ տեղ շարադրում ե նրա միտքն իր խոսքերով՝ «Բայց դեսպատը ներկայանում ե տեր, քանի նրա կողմի ույժը, իսկ զրա համար» — նորից բերում ե Ռուսասոյից հետևյալ նշանակալից առղերը — «Յեթե զեսպոտին քշում են, նա չի կարող դանդատվել, թե բռնություն են գործ զնում... բռնությունը նրան պահեց, բռնությունը նրան տապալում ե. ամեն բան զնում ե իր բնական և կանոնավոր ճանապարհով»:

Ժագովրդական ապստամբությունը, հեղափոխությունը Փան - Ժակ Ռուսասոյի ուսմունքի համաձայն մի նվիրական իրավունք ե, վոր կարող ե յերեան գալ ամենասուր արտահայտություններով՝ միավետի գահազրկւթյամբ և նրա սպանությամբ: «Ապստամբությունը, վոր վերջանում ե միապեակի սպանությամբ: Կամ գահազրկությամբ մի նույնպիսի իրավական ակտ ե, վորպիսին միապետը գործ եր զնում առաջ իր հսկատակների կյանքի և զույգի վերաբերմամբ», վրում ե Փան-Ժակ Ռուսան: Իր այս

քաղաքական աշխարհայեցողությամբ նա արտահայտում եր ժամանակա-
կից Փրանսիական հեղափոխական մանր-բուրժուազիայի տրամադրություն-
ները, վորոնցով նա եյապես տարբերվում եր 18-րդ դարի մյուս նշանա-
վոր Ենցիկլոպեդիստներից՝ Վոլտերից, Դիդրոյից, Հոլբախից և այլն:

Ժան-Ժակ Ռուստոն խորապես դեմ եր այն ծանր ճնշումներին, կոռո-
րածներին և բռնություններին, վորոնք գործադրվում եյին բռնակալական՝
և միապետական կարգերում ժողովրդական մասսանների նկատմամբ: Յեզ
ճիշտ այդ պատճառով ել նա կողմանից եր հեղափոխության, վոր պիտի
վերջ տար բռնակալների իշխանության: Պ. Կողմանը իր «Արևմտա-կրոպա-
կան գրականության պատմության ուրվագծեր»-ի մեջ Ռուսացի մասին
խոսելիս, ի միջին այլոց գրում ե հետեւյալը.—«Հակառակորդ կոսորածների
և բռնության, նա (Ռուսասոն՝ Ս. Հ.) հաղիվ թե համակրանք արտահայտեր
գեպի հեղափոխությունը: Բայց միևնույն ժամանակ կասկած չկա, վոր փի-
լիսովաններից վոչ վոք չի առաջացրել հեղափոխականների սրտերում այն-
պիսի հրահրող գործողություններ, ինչպես Ռուսասոն: Այսպիսով դուրս ե
գալիս, վոր յեթե մեկը դեմ և ժողովրդական մասսանների նկատմամբ դորձ
դրվող բռնություններին, նա չպետք է համակրանք տածի նաև դեպի հե-
ղափոխությունը Մինչդեռ բոլորովին ընդհանրապես ե ճիշտ, այսինքն՝
Ռուսասոն հեղափոխական ե, վորովհետև դեմ և ժողովրդի նկատմամբ գոր-
ծադրված անլուր բռնություններին:

Մյուս կողմից՝ Ռուսասոն խորն ազգեցություն և ունեցել հեղափոխա-
կանների վրա, վոչ թէ հակառակ իր կամքին, այլ վորովհետեւ իր աշխա-
տությունների մեջ մեծ ուժով արտահայտել և ժողովրդական մասսանների
հեղափոխական տրամադրությունները ինքը յերևան և յեկել վորպիս հե-
ղափոխական գրող և վորպես այդպիսին ել ազգել ե, թե իր ժամանակի
և թե նրանից հետո յեկող սերնդների վրա:

Ֆրիդրիխ Ենցիկլոս մեջբերելով Ռուսասոյի աշխատությունից գեսպոտի
տաղալման վերաբերյալ վերև հիշված հայտնի հատվածը, հետեւյալ ձևով և
մեկնաբանում այն: Նա գրում ե. — «Այսպիսով անհավասարությունը կրկին
դառնում է հավասարություն, բայց վոչ թե լեզու չունեցող նախնական
մարդկանց հին, բնական հավասարություն, այլ բարձր հավասարություն—
հասարակական դաշինք: Ճնշողները յենթարկվում են ճնշման: Սա բացա-
ման բացատռն եւ:

Այս տողերով Ենցիկլոս լուծում ե շատ հիմնական մի խնդիր, վոր
գրականության պատմության և Ռուսասոյի գնահատության նկատմամբ
առաջնակարգ կարևորություն ե ներկայացնում: Հայտնի յե, վոր բուր-
ժուական քննադատությունը դեռ Ռուսասոյի եպիփայում, Վոլտերի վկաս-
վորությամբ, այն միաժն եր տարածում, թե Ռուսասոն պահանջում ե վե-
րակարձ գեպի բարբարոսական և վայրենի անցյալը: Հայտնի յեն նաև այն
ծաղրական տրամադրությունները, վոր Վոլտերն այդ կապակցությամբ
թույլ եր ավել, դրենով, թե Ռուսասոյի աշխատությունների ընթերցումը
չորքոտանի դառնալու ցանկություն ե առաջ բերում և այլն: և այլն:

Այսպիսի քննադատությունը, կարելի յէ ասել, շաբունակվել ե այսուհետև ևս: Ռուսացի զասակարգային հակառակորդները յերբեք չուղեցին կամ չկարողացան հասկանալ, զոր Ռուսացն յերբեք դեմ չի գուրս յեկել կուլտուրային, քաղաքակրթությանը, առողջ գրականության և արվեստին, կրթության և զաստիարակության, քանի զոր նա յէ գրել զատիարակության վերաբերյալ ամենախոր և ամենաառողջ յերկասիրությունը, զոր մնացել ե մեզ հին կուլտուրայից իրեն մի թանկարժեք ժառանդություն:

Ռուսացն ինքը ժամանակին հաճախ պնդել ե այս կարենոր կետի վրա: Բնական հավասարությունը և բնության փիլիսոփայությունը վեր ըարձրացնելով հանդերձ՝ նա իր հայտնի «Դիալոգներ»-ի մեջ մի ուրիշ անձի կողմից զբել ե իր մասին հետեւյալը. — «Եւայց մարդկային բնությունը հետ չի կարող դառնալ և յերբեք չի կարելի վերադառնալ դեպի անմեղության և հավասարության ժամանակները, յերբ զոր մի անզամ հեռացել ենք նրանից: Յեզ սա այն սկզբունքներից ե, զորի վրա այնքան պնդել ե նա (այսինքն Ռուսացն. Ս. Հ.)։ Կամ նույն «Դիալոգներ»-ի մեջ մի ուրիշ տեղ. — «Համառությամբ մեղադրել են նրան: (այսինքն Ռուսացն. Ս. Հ.), զորպես թե նա կամեցել ե կործանել դիտությունները, արվեստները, թարունները, ակադեմիաները և միլիմետրները և ինչն բարբարոսության մեջ: Յեզ սակայն դրա հակառակն ե միշտ պնդել նա, (այսինքն Ռուսացն. Ս. Հ.)։

Ֆրիդրիխ Ենգելի վերոհիշյալ մեկնաբանությունը ժան-ֆակ Ռուսացի ուսումնասիրության հարցը դնում ե մի նոր և ճիշտ մակարդակի վրա: Այս, ինչ զոր Ռուսացն պաշտպանում ե, դա «վոչ թե նախնական մարդկանց հին բնական հավասարությունն ե», այլ մի «բարձր հավասարություն», ինչպես զրում ե Ենգելը:

Յեզ անսա այս «բարձր հավասարության» հակառակորդները թե 18-րդ դարում և թե այնուհետև, աղավաղել են Ռուսացի պատկերը և նրան սխալ կողմից լուսաբանել:

Իր գնահատականը Ռուսացի վերաբերյալ Ենգելը վերջացնում է հետեւյալ նշանակալից սովորվելով—

«Այսպիսով մենք այստեղ, Ռուսացի մոտ ունենք վոչ միայն մի դատապահություն, զոր ինչպես Ջրի յերկու կաթիլ նման և Մարքսի պատությանը «Կապիտալ»-ում, այլ և մանրամասների մեջ մենք անսում ենք նույն դիալեկտիկական շշանառումների մի ամբողջ շարք, զորսոցով ոդափում ե Մարքսը՝ պրոցեսներ, զորնք անտագոնիստական են իրենց բնությունը, վորոնք իրենց մեջ հակառակություններ են պարունակում, հայտնի ծայրահեղության գործում իր հակադիր կողմին, և վերջապես, զորպես բոլորի հիմքը՝ բացասաման բացասումը: Յեթե, ինարկ, Ռուսացն 1754 թվին չեր կարող խոսել «Հեգելյան ժարգոնով», ապա, համենայն զեպս, նա 23 արքի Հեգելից ծննդից առաջ խորապես թունավորված եր Հեգելյան թունով...»¹⁾

1) Այս և հախորդ հատիկածներն առնված են՝ Փ. Էնգելը «Անտ-Դյուրինգ», Մոսկվա 1982 հջ. 98-99.

Ժան-Ժակ Ռուսսոյի հասարակական և քաղաքական փիլիսոփայության հիմքերն այսպիսով դրվում են նրա գրական գործունեյության այս առաջին շրջանում, կարելի յեւ ասել, վոր այդտեղ եւ գտնվում ամբողջական ժան-Ժակ Ռուսսոն, նրա հետագա գլուխգործոցները գրված են այս հիմքերի վրա և նրանց զարդացումն ու ծավալումն են հանդիսանում:

7

Մինք աշխատեցինք մինչև այստեղ վոչ միայն ժան-Ժակ Ռուսսոյի գործունեության առաջին շրջանը պարզել այլ և հիմնական գծերով տալ նրա ապրած եպիստեմ, նրա ժամանակակից մյուս ենցիկլոպեդիստների ընդհանուր դեմքը, նրա կյանքի պայմանները և այդ բոլորի կապակցությամբ Ռուսսոյի ամբողջ պատկերը: Մեր նպատակը չեր միայն կանգ առնել գիտությունների և գեղարվեստի, ինչպես և անհավասարության մասին նրա գրած աշխատությունների վրա, այլ այդ աշխատությունները հիմք առնելով ներկայացնել նրա գեմքն առհասարակ: Այս գենքը հիմնական գծերով նույնն եւ, ինչ վոր յերեվան եւ գալիս «Հասարակական գաշինք»-ի, «Եմիլ»-ի, «Նոր-Ելոիզ»-ի և մյուս զրվածքների մեջ:

Մասնավորապես «Ենհավասարության» հետ շատ սերտ կերպով կապված և «Հասարակական դաշինք»-ը:

Այս աշխատության մեջ ժան-Ժակ Ռուսսոն խնդիր և դրել քննարկել վիճ թե կոյությունն ունեցող որենքները, վոչ թե այսպես անվանված պոզիտիվ իրավունքը, այլ գնալ մինչև որենքների հիմնական աղբյուրը, մինչև այսպես անվանված, բնական իրավունքը:

Մասնակիոն իր ռելենքների վորինա հայտնի աշխատության մեջ քննության եր առել գլխավորապես գոյությունն ունեցող որենքները: Նա չի պատուել այդ որենքների սահմանը, չե անցել հասարակական հասատված հարաբերություններից այն կողմը: Ժան-Ժակ Ռուսսոն այդ հարերությունները քննության և յենթարկել բնական հարաբերությունների և բնական որենքների դիրքերից: Նա կամեցել եւ հասնել մինչ սկզբնական աղբյուրը, մինչև այստեղ, ուր մարդիկ լուելայն կամ արտահայտված ձևով ընդունում են վորոչ դաշն, վորպես հիմք հասարակության,

Ժան-Ժակ Ռուսսոն մտածում եր, վոր իր երլուսայրմ մարդիկ կորցրել եյին բնական իրավունքի զարգումը: Ազնվականության և հետո բուրժուական կուլտուրան մարդկանց մեջ չե զարգացրել իսկական ճշմարտությունը յերեվան հանելու անդիմադրելի ձգտում: Նա, իհարկե, շատ բարձր եր գնահատում 18-րդ դարի գրամատիկական նշանավոր ենցիկլոպեդիստների աշխատանքը, նա ինքը մեծ ազդեցություն եւ կրել բուրժուական խոշոր մտածողներից, մտանավորապես Մոնտեսքիոյից, Վորտերից, Դիդրոյից:

Բայց նա չեր ուզում կանգ առնել նրանց դիրքերի վրա և մտածում եր, վոր դա կիսամանապարհ և միայն:

Ժան-Ժակ Ռուսսոն անդիմադրելի ձգտում ուներ գտնելու, այսպիս

կոչված, բնական իրավունքների ճանապարհը, փսխելու վոչ միայն աղնվա-
կան կարգերը, այլ և խոշոր բուրժուական հարաբերությունները:

թե սԱնհավասարության», թե «Հասարակական դռչինք»-ի և թե
մյուս նշանավոր աշխատությունների մեջ նա անգուլ և անդադար հետապնդում եր այդ կորցրած ուղին:

«Հասարակական դաշինք»-ի մեջ նա հայտարարում է՝ «Մարդու ծնված և ազատ և ամենուրեք դանում և նա շղթաներէ մեջ։ Այս հակասությունը նրան առանձում եւ նա հարց և տալիս՝ «Ո՞ր է նական և արդյոք այս գրությունը»։

Շատ-շատերի համար դա, ինարիկ, որինական էր, շատ-շատերի համար դա բյուռուս էր մարդկային բնությունից:

Բայց Ռուսան համարում ե դա մետաֆիլիկա, գոպմա, անմիտ և առասպել, վորից պետք եր գուըս դալ, վորի դեմ պետք ել հեղափոխություն կատարել: «Ուժեղը յերբեք այնքան ուժեղ չի լինում, վոր կարողանա միշտ տեր լինել յեթե նա իր ուժն իրավունքի չփոխի և հնազանգությունն ել պարտականության»: Բայց պետք ե զանազաննել ուժը և իրավունքը: Յեթե մարդու ստիպված չլինի ուժին յինթարկվել, ուրեմն և իրավունք կունենա ուժին չյենթարկվելու: Ույժը իրավունքի և վոչ ել հնազանդությունը՝ պարտականություն:

Մարդու ազատ և բնությունից, նա անկախ պետք է լինի իր գործերի մեջ և չպետք և բռնությամբ հսագանդվիլի: Բայց յեթի ամենքն ել այդպիս լինեն, հասարակություն չի ստեղծվիլի: Հարկավոր և ուրեմն, գտնել մի կազմակերպական ձև, վորի մեջ մարդու և աղատ լինի և յենթաքաջի որենքներին:

Հասարակական դաշինքի հիմքն այստեղ և գտնվում: «Գտնել առաջ ըստ այս կազմի մի ձեւ, վոր պաշտպանի և հովանակորի համայնական ուժերով յուրաքանչյուր անդամի անձնութեարի պարիքը և վորի միջոցով յուրաքանչյուր միանալով բոլորին՝ հնապանդի սակայն միայն իրեն և մնա ազատ, ինչպես առաջ»:

Այսպիս ե ձևակերպում Ռուսոն նոր ժամանակի հասարակական գաղինքի սկզբունքը, Նա չե առաջարկում վերադառնալ դեպի նախնական բնությունը, այլ աշխատում ե բնական իրավունքի հիմքի վրա, ըստ արդեն քաղաքացիական հասարակության մեջ, ինչպես ինքն ե ասում՝ «ընդունելով մարդկանց, ինչպես նրանք կան», հիմնել հասարակական դաշինք։ Այդ հասարակական դաշինքը մի գիտելիքական ամբողջություն ե, վորի մեջ մարդու և ազատ ե, և յնթարկվում է կուեկտիվին, վորի մեջ մրցւ մարդկանց հետ միասին դաշնակում ե նաև ինքը».

վլորված արիբունն և հանդիսացել, այդ գաշինքն առաջարկում և հանուն կողեկատիվի և միաժամանակ հանուն նրա յուրաքանչյուր անգամի աղաւտության:

Բուրքուական քննադատներն այստեղ ել մեղագրել են Ռուսացին այն բանի համար, վորպես թե Ռուսան սահմանափակիլ և մարդկային ազատությունը և դրել և մարդուն հասարակական դիկտատուրայի ողակների մեջ: Բայց այդ քննադատությունը շահագրգոված ե յեղել վոչ թե մարդու, վոչ թե ժողովրդական ամենալայն մասսաների ազատության և անկախության խնդրով, այլ շահագրգոված ե յեղել հասարակության շտիրով շերտի եզրիստական, անմարդկային պահանջներով:

Ռուսան, 18-րդ դարի դեմոկրատիայի այդ նշանավոր ներկայացուցիչը, հասարակական դաշինքի մեջ մինչև իսկ կարենը և համարել տեղ տալ մահվան սբաժինն Յեկայանություն և հանուն դեմոկրատիայի, հանուն հասարակական ամբողջության շահերի: Ռուսան գրում ե այս մասին հետեւյալը: «Գետության և սոցիալական իրավունքի պաշտպանությունը վաճանգիւմ ե վոճրագործներից, վասնչվում և նույնական և հայրենիքը... Գետության պաշտպանությունը դառնում ե վոճրագործի ողաշապանության հետ միասին անհամատեղելի: Պետք ե, վոր նրանցից մեկն ու մեկը վոչնչանա: Յեկայերը վոչնչացնում են վոճրագործին, վոչնչացնում են վոչ իբրև քաղաքացու, այլ իբրև թշնամու: Հարաբերությունները զառնում են պատերազմական, իսկ պատերազմի որենքով կարելի յե վոչնչացնել թշնամուն:»

Մեր որերում ել, պրոլետարական դիկտատուրայի շրջանում, յերբ Խորհրդային իշխանությունը, բանվոր դասակարգի թշնամիների դեմ գործ և դնում իր զենքը բուրժուազիան կեղծավորաբար ձայն և բարձրացնում «հանուն մարդասիրության», բայց մեզ հայտնի յե բուրժուական հումանիզմի եյությունը:

Նույնը տեղի յե ունեցել ժամանակին ժան-ժակ Ռուսասոյի նկատմամբ բուրժուազիան քննադատել և մեղագրել ե նրան: Բայց Փրանսիական բուրժուական մեծ հեղափոխության եզրիստայում, դեմոկրատիայիներկայացուցիչները, Փրանսիական հեղափոխական մանր-բուրժուազիայի մեծագույն դեմքերը, ժան-ժակ Ռուսասոյի հասարակական և քաղաքական սկզբունքներով վողերովեցին և աշխատեցին այդ սկզբունքների հիման վրա նոր պետություն կառուցել:

Պատմությունը, սակայն, մանր բուրժուազիայի վրա չեր զըել այսուաքելությունը, վոր Ռուսան պատկերացնում եր Այստեղից են առաջնում այն մի շարք եյտական ըմբռնումները, վոր մեր տեսակեաից, հեղափոխական պրոլետարիատի տեսակեաից սխալ են ժան-ժակ Ռուսասոյի աշխարհայեցողության մեջ: Գյուղացիության և մանր բուրժուազիայի թւ քաղաքական և թե տնտեսական կարողությունը չափազանց թույլ եր, վարպետական և կարողանար ստեղծել նոր գիտություն կամ նոր տնտեսություն: Ռուսասոյին անհայտ եր պրոլետարիատի հանապարհը: Ռուսասոյն չեր

աեսնում, վոր բուրժուազիայի ստեղծած կարգերից կարող եր առաջանալ մի դասակարգ, վոր հաղթահարեր բուրժուական հասարակակարգը և նրա կուլտուրան: Ռուսան չտեսավ, վոր գյուղը չեր կարող առանձնանալ, վոր քաղաքը ներխուժում ե, վոր հասարակական հարցը կարող եր լուծվել վոչ թե նահապետական ուղիներով, այլ գյուղի և քաղաքի միասնական աշխատանքով:

Եթի խոսքով Ռուսան չհասկացավ, վոր մանր-բուրժուազիան չեր կարող հաղթահարել բուրժուաղիային: Հասարակական դաշինքը, իբրև մանք բուրժուաղիայի պետական ձև, իբրև գեմոկրատիայի դիկտատուրա, չեր կարող իրականանալ:

Բայց բոլոր այս չհասունացած հայցքների և սխաների համար մենք չենք դատապարտում Ժան-Ժակ Ռուսսոյին, վորովինեաւ մտածում ենք, վոր Ռուսան չեր կարող առաջ ընկնել իր ժամանակից: Յեվ այս ե, վոր վեր և հանում մըրիբիւմ ենդեւսն իր կլասիկ դնահատականի մեջ, մի քանի տողերով նա գրում ե,—«Բնական պետությունը և Ռուսապի հասարակական դաշինքը պրակտիկայում հանդես յեկան և կարող ելին հանդես գալ միայն բուրժուական դեմոկրատական հանրապետության միջոցով»: 18-րդ դարի մտածողները, ինչպես և նրանց բոլոր նախօրդները, չելին կարող դուրս գալ այն սահմաններից, վոր նրանց առջև դնում եր նրանց եպուխանչ¹)

Ժան-Ժակ Ռուսսոյին մենք գնահատում ենք վոչ թե այն կարելոր պակաների համար, վոր նա թողել ե, և վոչ ել այն սխաների կամ հետադիմական հայցքների համար, վոր կան նրա գործի մեջ:

Մենք գնահատում ենք նրան նրա գործի լավագույն մասի համար, այն հեղափոխական վորու, այն գեմոկրատիական բովանդակության և այն բացառիկ մարդկային գծի համար, վոր այսոր ել, դեռևս, հսացած չեն և շուտով ել չեն հնանա:

Մենք գնահատում ենք նրան իբրև անցյալի մեծ գեմոկրատներից մեկին, ինչպես իրավունք և տուլիս կենինը, և իրեր անցյալի փայլուն դիմոկրատիկներից մեկին, ինչպես վորակում ե նրան ենդեւսը:

8

Ժան-Ժակ Ռուսսոյի այս առաջին շրջանի աշխատություններն ահազին ազգեցություն են ունեցել դեղարվեստական գրականության վրա: Չենք խոսում իհարկե այն մեծ ազգեցության մասին, վոր նրանք ունեցել են հասարակական մտքի բնագավառում: Չենք խոսում նույնապես այն պատմական բացառիկ դիրի մասին, վոր կատարեց մասնավորապես «Հասարակական դաշինք»-ը բուրժուական մեծ հեղափոխության շրջանում:

Գեղարվեստական գրականությունը պետք ուներ հիմնական դեկանալու ոկզրունքների, Գեղարվեստական գրականության մեջ պիտի ցոլանար

¹⁾ Փ. Թիգելս: «Անու-Ջյուրից», Մոսկվա, 1982, էջ 12.

մի մեծ դաղափարը, վոր շունչ պիտի տար նրա մեջ գործող տիպերին, այնու տեղ ծավալվող պատմություններին և զգացմունքներին:

Ահա այս մեծ դաղափարը շատ ուժեղ շեշտով յերեսն եր գոլիս ժան-ժակ Ռուսայի բոլոր գրվածքներում, միախառնված մի մեծ զգացմունքի հետ, վոր գրեթե հեղեղի պես վողողում եր գրականության մինչեւ յսկ անտարբեր բնագավառները:

Կարելի յե ասել ժան-ժակ Ռուսայն տիրում եր մաքերի և զգացմունքների վրա: Նա աղդեցություն և ունեցել, վոչ միայն մանր-բուրժուական զեմոկրատ գրողների վրա ֆրանսիայում և արտասահմանում, այլ և ազգեցություն և ունեցել բուրժուական և նույնիսկ ազնվական գրողների, վորոնց շարքում՝ Շատորյանի, Լամարտինի, Բայրընի և շատ ուրիշների վրա:

Այս ազգեցությունը, ինչպես նկատեցինք, առաջին հերթին կապված է Ռուսայի մեծ դաղափարի հետ: Բայց հատկապես գեղարվեստական դրականության բնագավառում առանձին նշանակություն են ստանում նրա գրական հատկությունները: Ժան-ժակ Ռուսայն խոշոր գրական կարողությունների տեր հեղինակ ե, ինչ վոր յերեսն և գալիս նրա բոլոր աշխատությունների մեջ: Նա իր փելիսոփայական, հասարակական և քաղաքական դաղափարները արտահայտում և շատ հաճախ պատկերավոր ձեռվով և գրական բարձր վոճակ:

Մասնավորապես այս հատկությունները յերեսն են գալիս նրա «Եմիլ»-ի և «Եոր Ելոիդի» մեջ:

Հայտնի յե, վոր «Եմիլ»-ը մանկավարժական աշխատություն ե: Բայց այց վորակումն իհարկե շատ քիչ և և շատ միակողմանի յե այդ նշանաւոր յերկասիրության համար:

«Եմիլ»-ը միաժամանակ գեղարվեստական աշխատություն ե: «Եմիլ»-ը կիսատոման ե, ինչպես վորակում են այն հաճախի «Եմիլ»-ը մի բարձր բանաստեղծություն ե: Այդ գիրքը զրված և մի զարմանալի մեծ ներշնչումով: Գաղափարները, մոքերը, դատողությունները, տրամաբանությունը միախառնվում են խոր հույզերի հետ, լեզվական և վոճական բարձր արվեստի հետ, ինչպես և անվերջանալի պատկերների, դեպքերի, նկարագրությունների և պատմությունների հետ:

Այդ գիրքը մի առանձին տեսակի գրական ժանր ե: Դժվար և ասել լավ ե, թե վատ այդ ժանրը: Բայց ճշմարտությունն այն ե, վոր ժան-ժակ Ռուսայի ձեռքում այդ ժանրը մեծամեծ հետեանքներ և տվել Այդ գրքի հիմնական հատկությունն այն ե, վոր նա կարողանում ե հուզել վորպես մի բարձր գեղարվեստական գործ և մտածել տալ, վորպես մի գիտական ուսումնասիրություն:

Հեղինակն իր գրվածքը վերնագրել և «Եմիլ»՝ վիպագրական սովորության համաձայն, ընտրելով մի անձ այդ անունով, վոր փոքր հասակից վեր և բարձրանում հետզհետե, դաստիարակվում ե, զարգանում, ամուսնում և կազմակերպվում վորպես մարդ ու քաղաքացի:

«Եմիլը»-ը միաժամանակ մի ընդարձակ աշխատություն ե, վորի մեջ յերեան և գալիս պատմական մի շատ հետաքրքրական ժամանակաշրջան, 18-րդ դարը Ֆրանսիայում բուրժուական մեծ հեղափոխությունից առաջ: Ժամանակակից Ռուսոսոյի այդ աշխատությունը նոր գաղափարների և սոցիալական համարձակ պայքարի մի մանիքեստ ե: Այդ գրքի միջոցով մի ամբողջ սերունդ դաստիարակլիեց, նրա մեջ արտահայտված գաղափարները ժողովրդական դարձան, գրավեցին մասսաներին, ստեղծեցին նրանցից հասարակական և քաղաքական մեծ ուժ՝ հին ֆեոդալական կարգերը տապալելու ուղղությամբ: Այսպիսով «Եմիլ»-ը նեղ իմաստով՝ մանկավարժական մի աշխատություն չե, թեև այդ գրքի մեջ լուծված են մանկավարժական ամենամանրահասն պրոբլեմները:

Ժամանակակից Ռուսոսոն սովորեցնում ե այդտեղ, թե ինչպես պետք է պայքար մղել հին սիոլաստիկական մի ամբողջ աշխարհի դիմ: Այս պայքարի մեջ նա յերբեմն պարագուքային մաքեր և արտահայտում՝ պնդելով «ընթակի թե պատմության դաստիարակությունը վնասակար մի աշխատանք է, կամ թե այն, զոր մտավոր դաստիարակության վիճանը սահմանափակում և քիչ գիտելիքներով և յերեք տարվա շրջանով»:

Բայց մինչև անգամ այս և մյուս պարագուքներն ել հասկանալի յեն դպանում, յերբ վոր մենք նկատի յենք ուսնենում ժամանակն ու տիրապետող հին հասկացողությունները և խորանում ենք այն հարցի մեջ, թե ինչ նպատակով և Ռուսոսն այդ մտքերն արտահայտել:

Նրա ամբողջ կերքը մի ուժեղ հականարկած և ազնվականական և խոշոր բուրժուական ընդունված, սրբազործված սկզբունքների դիմ: Քանի վոր այդ սրբագործված սկզբունքների համաձայն պատմությունը վոչ այլ ինչ ել, յեթե վոչ թագավորների և իշխանների վոճիրների պատմություն, Ռուսոսոն ավելորդ և նկատում, վոր այց վոճիրներով դաստիարակիլի նոր մարդկությունը: Քանի վոր սիոլաստիկական մանկավարժական հիմունքներով տասնյակ տարիներ սովորեցնում եյին յերիտասարդ սերնդին և ինչքան սովորեցնում եյին, այնքան բթացնում եյին—Ռուսոսն պահանջում և քիչ գիտելիք, բայց խորը և իմաստուն դիտելիք, վոր կարողանա վերափոխել մտքուն և նրան պատրաստել հեղափոխական շարժությունների համար: Քանի վոր հին դաստիարակությունը պատիճների իր միջնադարյան սիստեմով ստրկացնում եր մարդուն, Ռուսոսն խիստ քննության և յենթարկում պատճի հասկացողությունը, վերացնում և այն իր գրքից և աղջարաբում և օքնական հետեւ վության իր հայտնի բարոյական սկզբ բունքը: Հիմնականում այս սկզբունքը հաշանակում եղ այն, վոր յերեխան ողեաք և փորձով կը եր իր զործած ակտի բնական հետեանքը, այդ միջոցով հասկանար իր սիմայն ու հեռանար նրանից:

Ռուսոսոյի հակառակօրդներն ամեն կը լուս աշխատեցին ծայրահեղության և արտուրդի հասցնել նրա դադարիալը, չհասկացան նրա մտքի լայն իմաստը, և պեղանտորեն այսպես մեկնարանեցին, թե յերեխան հաճախ կարող և վեսավել և մինչև իսկ մեռնել իր գործած ակտի բնական հետեանքը, այդ միջոցով հասկանար իր սիմայն ու հեռանար նրանից:

թե սովորել: Յեկ գորպես թե Ռուսացի ազատության և մարդկայնության սկզբունքը գործնականում նշանակում եր այդպիսի անմարդկային և անմիտ ռամունք:

Ժան-Ժակ Ռուսացն իր գաստիարակչական գործի մեջ խիստ քննության յենթարկեց մետաֆիզիկական հասկացողությունները, վորոնք տիրապեսող եյին նրա ժամանակ: Մարդուն սովորեցնում եյին անունը, խոսքը, բառը և վոչ իրը, բնական աշխարհը, կենդանի իրականությունը: Ռուսացն հայտարարեց, թե «վոչ մի ճիշտ գաղափար չի կարելի հաղորդել մետաֆիզիկայի միջոցով» և կամ՝ «ընդհանուր և վերացական դաղափարները մարդկանց ամենամեծ ուղղությունների աղքատություն» են»:

Ժան-Ժակ Ռուսացի գաստիարակությունն իր հիմունքում ռեալիստական գաստիարակություն եւ Համաձայն նրա ռւամունքի՝ մանկավարժությունը պիտի համապատասխանի մարդու կյանքի պայմաններին, նրա զարգացման եռապահերին, նրա հոգեկան աշխարհի շարժումներին ու պրոցեսին: Ժան-Ժակ Ռուսացն առաջիններից մեկն յեղափ, վոր մանկավարժությունը հիմնեց հոգեբանական և մանկարանական գիտությունների վրա: Յեկ համաձայն մարդու կյանքում իր գծած հիմնական շրջաններին, նա գծեց դաստիարակության մեջ նույնպիսի հիմնական շրջաններ: Մրանք են՝ չիդրիկական, գգայարանական, մտավոր, բարոյական դաստիարակության շրջանները, վորոնց նվիրված են «Եմիլ»-ի առաջին չորս գրքերը: Հիմնգերորդ գիրքը, վոր գերնագրված և «Սոֆին» կամ «Կինը» վերաբերում է կնոջ դաստիարակության, վոր ըստ Ռուսացի պետք և վորոշ մասներում բնականից բղխող պատճառներով տարվի տարբեր սկզբունքներով:

Բայց այս տարբերությունները չզետք և չափազանցված ձևով հասկանալ և այնպես ներկայացնել գրությունը, վորպես թե Ռուսացն կողմանից և կնոջ ստրկության կամ անսպասության, ինչպես այդ արել և շվեցարացի մանկավարժ Ֆրանսուա Գեն, վորի հետ համաձայնվում է պրոֆ. Մեդինսկին իր «Մանկավարժության դատմություններ» աշխատության մեջ:

Ճիշտ ե, Ռուսացն հիմնգերորդ գրքի սկզբում ասում ե՝ «Սոֆին պետք ելինի կին, ինչպես վոր Եմիլը պետք ելինի տղամարդ» կամ՝ «Մեկը (այսինքն Եմիլը Ա. Հ.) պետք ելինի ակտիվ յել ուժեղ իսկ մյուսը (Սոֆին Ա. Հ.) պետք ելինի պասիվ և թույլը: Բայց այս տարբերությունները գծելով և կարծելով թե դրանք բնական տարբերություններ են, Ռուսացն դրանցից չի հանում հասարակական կամ քաղաքական անհավասարություն կնոջ համար:

Ռուսացն գրում ե.՝ «Ճետենտ և արդյոք այն, վոր կինը պետք են անդիտության մեջ մեծանա և սահմանափակվի տնտեսության գործերով: Պետք ե արդյոք տղամարդն իր ընկերոջը՝ կնոջը դարձնի իր սպասուհին: Տղամարդը պետք ե արդյոք կնոջից մի իսկական ավտոմատ դուրս բերի: Վոչ անկասկած: Այդպես չի ասել բնությունը: Բնությունը կանանց տվել

և այնքան հաճելի մի դատողություն և ցանկանում ե, վոր կանայք մասն էն, դատեն, սիրեն, ճանաչեն և զարգացնեն իրենց միտքը:

Եինը պետք ե կատարյալ ազատություն ունենա, մանավանդ ամուսնության խնդրում, Հայրական կամ մայրական և կամ հասարակական վորեն կապանք չպետք ե լինի կող վեա ամուսին ընտրելու գործում: Ահա թե ինչպես ե ժան-ժակ Ռուսոսն խոսեցնում ողոփի հորը, այդ մեծ և կող համար առաջնակարգ նշանակություն ունեցող խնդրի շուրջը: — «Աղջիկս, մինչև այժմ ծնողներն ընտրել են իրենց աղջկա համար ամուսին, և նրանից—աղջկանից միայն խորհուրդ են հարցըրել Սյուսեն և յեղել սովորությունը: Մենք բոլորովին հակառակը կանենք: Դու ընտրիր քո ամուսնուն և մեզանից միայն խորհուրդ հարցըրու: Գործադրիր քո իրավունքը, Սովի, գործադրիր այն ազատորեն և իմաստնորեն: Քո ամուսինը պետք ելինի քո ընտրությամբ և վոչ մեր: Ծագումը, բարեկեցությունը, աստիճանը վոչ մի արժեք չունեն այտաեղ: Ըստրիր մի աղջկվ մարդ, վորի անձնավորությունը քեզ դուր և գալիս և վորի ընավորությունը քեզ համապատասխանում ե: Խնչ ել վոր նա լինի, մենք նրան կընդունենք վորպես մեր փեսան: Նա բարեկեցիկ կլինի միշտ, յեթե աշխատող ձեռքիւնենա: Նրա աստիճանը միշտ բավական փայլուն կլինի, յեթե ինքն իր առաքինությամբ ազնվացնի այն, Յեթե ամբողջ աշխարհն ել զատապարտի մեղ, լինչ նշանակություն ունի: Մենք չենք վորոնում հասարակության հավանությունը: Մեզ բավական ե միայն քո յերջանկությունը:

Այսպես ե խոսում ժան-ժակ Ռուսոսն Սովիրի հոր բերանով: Յեկայս խոսքն արտասանվում ե մի այնպիսի պատմական եպոխայում, յերբ կլինը գտնվում եր ամենածանր քաղաքական և հասարակական ստրկության մեջ, վորի դեմ 18-ըդ դարի բուրժուական նշանավոր մտածոյները չկարողացան դուրս գալ բավական ուժով, ինչպես այդ արակ Ռուսոսոն «Եմիլ»-ում և «Նոր Ելոիդ»-ում:

Կող դաստիարակության և ազատության վերաբերող այս խնդրներից անկախ, այս, խնչ վոր ժան-ժակ Ռուսոսն ասել ե Եմիլի դաստիարակության մասին, չի վերաբերում իհարկի միայն տղամարդուն: Նա վերաբերում ե նաև կողը, այսինքն մարդուն ընդհանրապես:

Մարդու այս դաստիարակության հիմքում, ժան-ժակ Ռուսոսոյի սկզբունքի համաձայն, պիտի ամուր դրված լինի աշխատանքի, արհեստի, դեմոկրատիայի սկզբունքը: Խնչ ուղում ե լինի մարդու, նա պետք ե մի արհեստ ունենա և պետք ե արտադրական աշխատանք կատարի, ձեռքի, բանվորի աշխատանք:

Ռուսոսն մտածում եր, թե արհեստավորի վեճակն ապահովված ե գալիք հասարակական և տնտեսական հեղաշրջութերի ժամանակի: Պատմությունը ցույց տվեց, վոր այս մասում Ռուսոսոյի տեսակետը ճիշտ չեղել: Բայց պատմությունը ցույց տվեց նաև, վոր նրա ներբողած աշխատանքը բացառիկ դեր ե կատարում հասարակական հարաբերությունների

մեջ և ըացարիկ ուժ և հանդիսանում ավելի բնական և ավելի մարդկային հասարակակաց ստեղծելու համար:

Եմիլի դաստիարակության գործում աշխատանքը ղեկավարող սկզբ-րունք և Եմիլին աշխատանք պիտի սիրի և պիտի կատարի, վորովներու աշխատանքը բաց և անում նրա մտքի սահմանները, ուրեմն ազգում և նրա մտավոր դաստիարակության վրա Մյուս կողմից աշխատանքը կապում և նրան հասարակական կյանքի հետ, ողնում և նրան հասկանալու հասարա-կական հարաբերությունները, ազգում և ուրեմն նրա բարոյական և հա-սարակական-դաստիարակության վրա:

Այսպիսով Ռուսասոն հանդիսանում և վոչ թե մի միակողմանի արհեստի յուրացման կողմանակից, այլ պոլիտէխնիկական ուսման կողմանակից, վարով-հետև այս ուսումն և, վոր նպաստում և ամբողջական մարդու կաղմակերպ-ման գործին:

Ռուսայի իդեալն և մարդու սինթետիկ դարձացումը, նրա ամբող-ջական կատարելազործումը, միանական մարդու պատկերն ու տիպը նրա նշանագրան աշտահայտում և, յերեք բառի մեջ՝ «Ստեղծեցեք առող-ջական մարդը»: Յեզ նրա Եմիլին այդ մտքի և նշանաբանի համաձայն և պատրաստովում:

Ժան-Ժակ Ռուսոյի դաստիարակության միջոցով Եմիլը գալում և ան արք միանական մարդու որինակը, Եմիլի կիմնի առողջ, Եմիլի զբայրանները ճշտորեն զարգացած կիմնեն, Եմիլը գուցե քիչ ծանոթություններ կրանեն մտավոր դաստիարակության ասպարիզում, բայց այդ ժեզ լավ կիմանա: Եմիլը դատող կիմնի, վերլուծող, քննադատող: Եմիլը այսատանք կսիրի և ամեն բան աշխատանքի միջոցով կստանա: Ժան-Ժակ Ռուսոյի Եմիլը կսիրի և կտաշտպանի իր սեփականությունը, վոր ստա-նում և աշխատանքի միջոցով: Եմիլը չի հավատա նախազարութենին, յեկեղեցու ծեսերին, չի յենթարկվի յեկեղեցական կողմակերպությանը, բայց կզգա աստվածությունը բնության մեջ: Եմիլը կիմնի ժուժկար համ-նում և աշխատանքի միջոցով: Եմիլը չի հավատա նախազարութենին քերող, գնուական արի: Եմիլը կսիրի մարդկանց և կապրի կողեկտիվի կյան-քով և վոչ կուեկտիվից զուրս, ինչպիս պատկերացնում են վորոշ հատա-գոտզներ: Եմիլը չի վախենա մահից, նու կհապատակի անհրաժեշտության և կմնոնի առանց նեծեծանքի և առանց վողըի:

Ժան-Ժակ Ռուսոյի Եմիլը վոչ թե վողըմնի, տատանվող քագքենու, տիպն և, այլ արի քաղաքացիների այն զասի ներկայացուցիչը, զեմոկրա-տական մասսայի այն մաստիկներից մեկը, վոր պիտի հեղափոխություն կատարեր, պատմության մեջ մինչեւ այդ չափանված մեծ հեղափոխությու-նը: Յեզ յեթն պատմությունը պահանջեր, Եմիլը հերսուարը ովիտի մեռ-ներ և զափոխական պայքարի մեջ, բարրիկադի վրա:

9

Ժան-Ժակ Ռուսոյի սոմանը, Շնոր Ելահը նրա հասարակական և քաղաքական դաշտական արտահայտությունն և գեղարվեստական գրա-

Հանության միջոցով։ Այդ ոսմանը, ինչպես և Ռուսոյի գողջ ստեղծագործությունը, մի ուժեղ բողոք և ուզգված ժամանակի իշխող դասերի նրանց հասարակական և բարոյական հորսոնարության, նրանց աշխարհահայեցողության դեմ, մասր բարժուազիայի գեմուրատիայի դիրքերից։

Բայց այս բողոքը Ռուսասոն հրաժարականուսական կամ փելիսոփայական ձեռվ չեւ ավելի Շնոր Ելիկա-ը գեղարվեստական ստեղծագործություն ե, զորի մեջ յերեան են զալիս տիպեր, հոգեբանություն, ներքին աշխարհի խորը զբուրում, լեզվական և վոճական բարձր կուլտուրա, հարուստ և իմաստալից պատկերներ և այլն։

Գրականության պատմություն մեջ այս ոսմանը մի նոր գաբաշրջան և բաց անսում Մինչև այդ մենք զործ ունենք առավել կամ նվազ չոր, բանականության վրա հիթված, արկածային և սատիրական պատմվածքների հետ ինարկե Վոլտերի և մյուսների այդ տիպի գրվածքները գեղարվեստական խորոր արժեքներ են պարօւնակում իրենց մեջ, զոր չի կարելի վորեն կերպ թերագնահանատեր Բայց Ռուսասոն մի նոր տարր մացրեց վիպագրության մեջ՝ զգացմունքը, վոր բալորովին նոր կերպարանք տվեց ֆրանսիական տրձակին, վեպին և կուզական այս տիրապետող գիել շարժում մոցրեց զրվածքի մեջ, ներքին խորն ապրումներ, դիմամիկա, վոր հատուկ չեր Ռուսասյեց առաջ զործող վիպագրությանը։

Իր գեղարվեստական գրականության մեջ Ռուսասոն ինարկե կրել և նախորդ գարպետների ազգեցությունը, մասնավորապես անգլիացի վիպասան Ռիչարդսոնի ազգեցությունը։ Բայց այս ազգեցությունը Ռուսասոյի պես մի ինքնուրույն և կատարելապես ինքնահայ հեղինակի մեջ մեխանիկորեն չի արտահայտվել, այլ վերամշակվելով դուրձել և նոր արվեստ, նոր կուլտուրա։

Այս տեսակետից սխալված չենք լինի, յեթե տպենք, վոր ժան-ժակ Ռուսասոն նոր հոգեբանական վեպի ներկայացուցիչ և հանգստանում ֆրանսիական գրականության պատմության մեջ։ 10-րդ դարի ֆրանսիական մեծ վիպասանները՝ Վիկտոր Հյուգոն, Բալզակը, Ֆլորենը, Զոլան և մյուսներն այս կամ այն չափով կապված են Ռուսասոյի վիպագրության հետ։ Ինարկե, Ռուսասոյի վեպը՝ վորպես իր տեսակի մեջ զարագլուխ բաց անող մի ստեղծագործություն, վիպականի արվեստի տեսակետից անկատարություններ ունի։ Դատողությունները, փիլիսոփայական կամ հասարակական կարգի հասական ընույթ կրող խոստակցությունները բենանափորել են չայդ վեպը և նրա ընթերցումը դժվարացրել են վորոշ մասերում։ Նկարագրությունները ձգձգվում են, գործողությունը պահու և և այլն։

Բայց, չնայելով այս թերություններին, —վորոնցից բնավ ազատ չես յեղել 10-րդ դարի մեծ վիպասանները ևս ժան-ժակ Ռուսասոյի այդ վեպը անազին ապավորություն և թողնում ընթերցողի վրա։ Տեղեր կան, վոր կարգացվում են մեծ հուզմունքով, աննկարագրելի հեաաքրքրությամբ։ Ռուսասոն իր վագով, իր պազաֆարով, իր պատմելու ձեռվ և կարգությամբ, հոգեկան աշխարհի խոր ցուցադրությամբ, իր զարմանալի մտեր-

մական վոճով տիրապետում և ընթերցողին, Յեկ այդ ընդարձակ վէպի ընթերցումը չնորհիվ Ռուսոյի գեղարվեստական ընդունակություններին, մինչև այսոր ել պատճառում և մեղ շատ բարձր հաճույք և կարող և այսոր ել շատ բան սովորեցնել մեղ:

Ամենից առաջ մենք կարող ենք սովորիլ, թե ինչպես ե իդեան, գաղափարը, աշխարհայացքը դառնում գեղարվեստական մեծ ույժ, ինչպես և նա տիբապետում ամբողջ դործին, ինչպես և նա թափանցում տիպերի, գեղարվերի, գործող անձերի խարակտերի ցուցահանման և մինչև իսկ նկարագրությունների մեջ Ռուսոյի վեպն իր ամեն մի եջի վրա ցոլացնում ե հեղինակի վոդին, նրա մարդկային մեծ շունչը: Յեկ այս չափազանց կարելոր և մեղ համար: Ռուսոյի վեպը յուրացնելով և հաղթահարելով, մեր ժամանակի գրողը կարող ե մասսաներին տիրելու գեղարվեստական ունակություններ մշակել՝ սոցիալիստական մեր աշխարհայեցողությունը գրական վոճով և եմոցիոնալ բարձր արվեստով ներկայացնելու համար:

Ժան-Ժակ Ռուսոյի ոռուանը դրականության պատմության մեջ պորակվում ե վորպես սանտիմենտալիստական վեպ: Բայց այս վորակումը չպետք և բնակ մեղ շփոթեցնի նրան գնահատելու ուղղությամբ:

Սանտիմենտալիզմը իրեն դրական ուղղություն 19-րդ դարում յերեական և դարձն ընդհանրապես բացասական հանդամանքով: Բայց ժան-Ժակ Ռուսոյի ժամանակ և մանավանդ նրա կիրառման մեջ սանտիմենտալիզմը հանդիսանում է նոր խոսք ասելու միջոց: Նա հակադրվում է կեղծ կլասիկ գրականության արտադրություններին, վորոնց մեջ ձև ու վոճ կար, բայց այդ ձևն ու վոճը շունչ ու հոգի չունեյին, կենդանի չեյին, անզոր ելին ներդրուծելու ընթերցողի մտքի և զգացմունքի վրա:

Ժան-Ժակ Ռուսոյի արվեստը պայքար եր մղում այդ անկենդան դրականության վեմ և նրա սանտիմենտալիզմն այս պայքարը վարելու համար կարենոր միջոց հանդիսացավ: Սանտիմենտալիզմը, վոր բառականորեն նշանակում է զգացմունքի, հուզմունքի արգեստ, այսպիսով պատմական դեր կատարեց 18-րդ դարում և հատկապես Ռուսոյի այդ վեպի միջոցով:

Այս արվեստն ազնվականության արվեստը չեր: Ազնվականության գրականությունը տառապում եր ֆորմալիզմի ճնշման տակ, Սանտիմենտալիզմը դարձավ պայքարի մեջ մտած բուրժուազիայի և մանավանդ մանը բուրժուազիայի գրական վոճը:

Ահա թե ինչ և գրում սանտիմենտալիզմի և Ռուսոյի մասին վ. Ֆրիչն. — «... Սանտիմենտալ սիրահարի ալիբի պայծառ տիպ և ստեղծել Ռուսոյն, մասամբ Ռիչարդոնի ոռմանների աղջեցության տակ, իր Շնորելուկը վեպում, հանձին պիերեյ-ուսուցիչ Սեն-Պրյոյյի, վոր սիրում եր արհստոկքաա Դետանժի աղջկանը — Ժուլիինա: Հետո՝ «Սանտիմենտալիզմը ծագեց իրեն նոր յերեվույթ 18-րդ դարում, եպիխայի սոցիալական պայմանների ազդեցության տակ: Այդ այս եպիխան եր, յերբ հին, կարվածատիրական, աղնվականական կուլտուրան... տեղի յեր տալիս բուրժուական կարգերին և բուրժուական աշխարհայացքին»: Յեկ վերջը՝ «Սանտի-

մինտավեզմը բարձրացող յերրորդ դասի դասակարգային ինքնազիտակցության պրոահայտություններից սեկն եր»:

Նույն վոգով ե արտահայտվում ըսկ. Դ. Գորբովը, վոր գրում ե իմբիշի այլոց հետեւյալը. «...Նրա (Խուսոսյի՛ Հ. Ա.) դգացմուն այնությունը (սանտիմենտալիզմը) սոցիալական շարժումն սանտիմենտալիզմն եր, դա հասարակականուրեն նշանակելի, դասակարգյուրեն բովանդակալից հաղափոխական պրոցես եր: Զգացմունքի և բնության կուլուր Ռուսոսյի յերկերում հասարակ սանտիմենտալ քնքականություն չե: Դա մի մարտահրավեր ե, նետված նախանեղափոխական շրջանի ինքնագոն և անսերու աղնագականական-բուրժուական կուլտուրայի գեմծ:»

Այսպիսով յերկու քննադատներն ել ճիշտ կերպով նշում են մի կողմից Ժան-Ժակ Ռուսոյի վեպի հեղափոխական բնությը, մյուս կողմից Նրա աշխարհայացքի մանր-բուրժուական գիծը:

Այս գիծը յերևան ե զալիս վեպի հերոսներ Սենագրոյի և Ժուլի անձնավորության մեջ: Սենագրյոն մանր բուրժուական մտավորական եր, ինկ Ժուլին ազնվականի աղջիկ և յերկուան ել: Հնայելով իրենց սոցիստական տարբեր և հակադիր դասին-դիտված են Ռուսոսյի զեմոկրատական հայացքների ընդհանուր տեսանկյունով: Նույն գիծը յերևան ե զալիս նաև վեպի մյուս անձնավորությունների և, դրանց մեջ, հատկապես անգլիացի Եղվարդ Բուստոնի անձնավորության միջոցով, վորովհետեւ հեղինակի աշխարհայացքը ընորոշվում ե վոչ թե նրանով, թե ինչ դասակարգի մարդկանց ե վերցնում նա, այլ նրանով, թե այդ մարդկանց վրա ինչ դասակարգի հայացքով ե նայում:

Ժան-Ժակ Ռուսոսյի վեպը կոչվում է «Ժուլի» կամ «Նոր Ելոիդ», բայց գրականության մեջ գլխավորապես հայտնի յե «Նոր Ելոիդ» անունով:

Ո՞վ ե այդ Ելոիդը:

11—12-րդ դարում, Պարիզում ապրելիս ե յեղել մի կին Ելոիդ անունով, վոր շատ սիրել ե իր ուսուցիչ, հայտնի միջնադարյան փիլիսոփա և աստվածաբան Պիեր Արելարին: Վերջինս ել սիրել հ նրան նույնական մեծ դգացմունքով և մեծ կարոտով: Միջնադարյան հասարակարգի պայմաններում, այդ յերկու սիրահարները տառապել են շատ և մեռել են հոգեկան ծանր տաքնապների մեջ: Այսպիսով Ժյալին 18-րդ դարում մի նոր Ելոիդ ե, վոր սիրում ե իր ուսուցիչ և դաստիարակ յերիտասարդ Սենագրոյին, վոր բռնակալ հոր կամքով ամուսնություն ե ուրիշի հետ և վոր մեռնում ե իր սիրած յերիտասարդին հավիտենապես յերազելով:

ա այն վիպական նյութը, վարի շուրջը ժան-Ժակ Ռուսոսոն ոտեղն ձեւ և մի մեծ գեղարվեստական դործ:

«Նոր Ելոիդը գրված ե նամակների ձևով, ինչպես Ռուսոսն ե ասում է յերկու սիրահարների նամակներ են, վոր ապրում եյին Ալզերի ստորոտում մի փոքրիկ քաղաքում»:

Սակայն ծյուլիքի և Սեն-Պրյոյի սիրո մեջ կրկնվում է Ելոիդի և Աբելարի սիրո հին պատմությունը՝ Կարծես թե, 12-րդ և 18-րդ դարերի միջն ընկած հակայական ժամանակամիջոցը զոյինչ չեւ փախօւր Բարոն Դ'Էտանժը, Ժյուլիկի հայրը, միջնադարյան աշխարհայացքի սիրիքական արտահայտիչն և 18-րդ դարում, Բայց յեթե միջնադարյան կապանքները աղնվականության տիրապետության միջոցով ձգվում են մինչև 18-րդ դարը, ապա նրան հակադրվում է նոր, հումանիստական, գեմոկրատական այն մեծ վրդին, վոր շունչ և առնում ժան-ժակ Ռուսայի գործի մեջ, և վոր հզոր ու բարոյապես անհողթելի կանգնում է բռնակալության հանդեպ, Յերբ բարոն Դ'Էտանժին հայտնում են, վոր Ժյուլին կամենում է ամուսնանալ Սեն-Պրյոյի հետ՝ նա խորին զայրույթով և վերաբերում դեպի մի այդպիսի ամուսնություն, վոր նա անհնարին և գտնում յերկու անհավասար դասերի միջև, Անդրիացի լորդ Եղվարդ Բոմ-Մանը, վոր ներկայացված և լավ զգացը մնանքով, շիտակ մարդ և ղեմոկրատական գաղափարներով—ամեն կերպ հասկացնում է բարոն Դ'Էտանժին, թե խիտիանաղնվականությունը մարդուս սրտում է, թե Սեն-Պրյոն սքանչելի յերիտասարդ և և միանդամայն արժանի Ժյուլիին Սակայն բարոնը չի ընդունում Եղվարդի ղեմոկրատական գաղափարները և ամուր և մասն լր աղնվականական սկզբանությունը,

Այս հակամարտության հետեւանքով Սեն-Պրյոն ստիլված է լինում թողնել տնային ուսուցիչն իր պաշտոնը,—հետանալ Ժյուլիի մոտից և նրան հետեւալ նամակը գրել—«Ես վերադարձնում եմ Ժյուլի Դ'Էտանժին իր կյանքը անորինելու իրավունքինչպես ինքն է ուզում և ամուսնանալու՝ առանց լսելու իր սրտի ձայնին», Սրա հետ միասին նա մի նամակ է գրում բարոն Դ'Էտանժին հետեւալ բովանդակությամբ.—«Դուք գործում եք դաժանութիւն, անխղճորեն, դեպի չարն եք զործ դնում հայրական, նվիրական իշխանությունը Դուք պատրաստում եք սարսափելի վորդեսպանություն, իսկ ձեր քննությունը և հասդանդ աղջիկը զսկարերում է իր յերիանկությունը ձեր նախապաշարումներին».

Հասարակական հարաբերությունների այս փոնի վրա յեւ ժան-ժակը ծավալել իր հոգեբանական վեպը, Այստեղ խիստ կերպով դրված է սիրո և ամուսնության հարցը, կնոջ աղատազրության մեծ պրոբլեմը, վորը Ռուսացից հետո նյութ և դաշնում 19-րդ դարի վիպասաններ՝ Բալզակի, Ժորժ Վանդի և ուրիշների գրչին, Ժյուլին աղնվականը, Ժյուլիի ամուսինը, վոր մի 50 տարեկան անձնագրություն և, ներկայացված է վորպես բարի մարդ և լավ ամուսին, Այդպես և ներկայացված անձնապես նաև Ժյուլիի հայրը, Ժան-Ժակ Ռուսասոն չեւ կամենցել անպայման բացասական հրեշտակոր տիտիկը ներկայացնել իր դասակարգային հակառակորդներին նրանք անձնապես շիտակ են, Բայց դրանով հանդերձ Ժյուլին և իր ընկերը սարքելի կերպով տանջվում են և յերջանիկ չեն:

Ինչու նա դիտակցել է, վոր յեթե անհատապես բացասական գծե-

ըով ներկայացնի այդ հին մարդկանց, դրանով ընթերցողի ուշադրությունը կկենտրոնանա անձերի վրա և կկարծվի, թէ անձերի հետ և կապված ժյուլի և Սեն-Պրյոյի յերջանկությունը, մինչդեռ Ռուսացի հրմական նպատակն և հասարակական կարգի քննադատությունը, Մարդկան զգում են վոչ թէ այս պատճառով, վոր մյուս մարդիկ չար են անձնապես, այլ վորովհետև չար ե և հոռի հասարակական կյանքը Նրանք տաճչվում ելին կարդի այլասեռաման, քոյքայման հետևանքով, ժյուլին այդ հին կյանքի նկատմամբ վոչ մի հավատ չունի և չի սպասում վոչ մի յերջանկություն ազնվականական հարաբերությունների մեջ, «Յետ ավելի ջաւա կուզեմ հասարակ բանվորի կին դառնայ, քան թէ թագավորի թագուհին», — ասում են նատ:

Ինարկե, Ժյուլի այս պատկերի մեջ և վեպի մյուս մասերում մեծ չափով ոռմանտիզմ կա: Ռուսան դժգոհ ե իրականությունից և իր ստեղծագործության այս կամ այն կողմով յերազում է դեպի հեռուն, մատնում և ումանտիքայի ցնորսական աշխարհը: Բայց այս ոռմանտիզմի հետ միասին՝ Ժան-Ժակ Ռուսայի գործը ռեալիստական արվեստի շատ նշանակալից կողմեր ունի:

Ժան-Ժակ Ռուսայի ռեալիզմը յերեան և գալիս նրանով, վոր նախարարական և ընդհանրապես ճշշտ կերպով հասկանալ իր ժամանակի հասարակական հարաբերությունները և այդ հողի վրա մարդկանց կյանքն ու ձգտութիւնները իրեն քննադատ, իրեն հասարակական կորդի վերլուծող և դատապարտող՝ Ժան-Ժակ Ռուսան յերեան և բերել ռեալիստական մեծ կարողություն, ինարկե այնչափ, վորչափ այդ եպոխայում կարելի յերակունել և ըմբռնել, հասարակական և մարդկային հոգեկան կյանքը»:

Ժան-Ժակ Ռուսան բաց և անում եպօխայի վերքը նա մատը դնում է հասարակական հարաբերությունների ամենահոգի կողմերի վրա: Նա իր ռեալիզմով, իր արվեստով մարդկանց ցույց և տակտ մեծ իրականություններ, Յեկայդ պատճառով ե, վոր նրա վեպն առաջ և բերում չենանը ված բողոք, ցնցում ու շարժում:

Բացի այս հոգերանական և հասարակական ռեալիզմից, նա իր վեպում յերեան և բերում նույնպես կենցաղային ռեալիզմը, Եվելյանական միջավայրի նկարագրությունը, գյուղի և քաղաքի պատկերը, Պարիսի միջավայրը, արտաքին կյանքը, հավաքումները, հանդիսները, բարի և դաշտի կյանքը, — այս բոլորի մեջ Ռուսան գրել և ռեալիստական հեղինակի ձիրքը:

Իր յերազների և իդեալների հետ միասին՝ նա տեսնում և իր շրջապատը, այն իրական աշխարհը, վորի մեջ նա պատռում է, և իր վեպով տալիս և մեղ այդ իրական աշխարհի պատկերը: Յեկայդ այս վոչ թէ նատուրալիզմի միջոցով, այլ ռեալիզմի գծերով, վոր պիտի զարգանար և ծափալվեր միայն 19-րդ դարի վիպագրության մեջ: Ռուսան բնության աննմտն նկարիչ է: Մեզ հայտնի յե, վոր նրա միջնորդայական, հասարակական և պե-

տական ուսմունքի մեջ առաջնակարդ տեղ ե գրավում բնությունը, բնության կարգն ու բնական իրավունքը:

Բայց Ռուսասոն վոչ միայն մեծ փիլիսոփիա յե, այլ և մեծ բանաստեղծ ե:

Նա կ դացել ո ապրեցնել բնությունը, ուշտը, գետը, ձորը, լեռները, և մեջ թաղված կապտագույն լճերը, նրանց շրջապատող խորհրդավոր անտառները և այլն և այլն:

Սա մի ուրույն, մի որիգինալ աշխարհ է, վոր մինչ այդ հաջ նի չեր գրականությանը: Ազնվական մարդը հանգչում եր շքեզ սալոններէ մեջ, և նրա վիպասանն ու գրամատուրգը դուրս չեր դալիս նրա միջավայրից: Բայց ժողովրդական մարդը, դեմոկրատիան, զյուղացին ապրում եր բնության մեջ և նրա փիլիսոփիան և բանաստեղծը տալիս ե ահա այդ միջավայրը: Հետագայում այս ինքարկի փոխվեց:

Ազնվականության բանաստեղծները նույնպես յերգեցին բնությունը, Բայց պայքարի սկզբնական շրջանում և պատմության բեկման կետում դեմոկրատիայի փիլիսոփիան կապվում ե բնության փիլիսոփիայի և բնության բանաստեղծի հետ:

«Նոր Ելիոդ»-ի մեջ Ժան-Ժակ Ռուսասոն ընտանեկան յերջանկությունը համարել ե անկալելի, քանի վոր էշխում ե ազնվական, բուրժուական կարգը: Ընտանիքը կարող ե յերջանէկ հիմքերի վրա կառուցվել այն ժամանակ, յեթե իշխան գետու կամուլրատիան: Նրա համար ել նուսանու տանում ե մարդկանց գեղի մանր բուրժուազիայի ծոցը, դեղի բնության գիրկը, մտածերով, թե այդ միջավայրում կարելի կլինի վերականգնել ընտանիքի խախտված և աղճատված ներդաշնակությունը:

Այսպիսով իր հիմնական գործերի մեջ Ժան-Ժակ Ռուսասոն հետապնդում ե մի ընդհանուր նպատակ և հետապնդում ե մի հիմնական միջոց: Նրա բուրժուազությունները կապված են մեկը-մյուսի հետ ներքին սերտ կապով և միևնույն հիմնական դաշտավարով: Ժան-Ժակ Ռուսասոյի գործը միամբողջական սիստեմ ե ներկայացնել:

Թե «Գեղարվեստի և Դիտությունների» մասին գրած նրա սկզբնական աշխատանքը, թե «Անհավասարության մասին» գրած նրա յերկրորդ գործը, թե «Հասարակական դաշինք»-ը, թե «Եմիլ»-ը և թե «Նոր Ելիոդ»-ը հիմնական գծերով հետևողական են միմյանց և պաշտպանում են միևնույն տեսակետը:

Ռուսասոն այդ աշխատությունների մեջ դրել ե հասարակության, անհատի և ընտանիքի վերակազմության պլանեմը: Նա փիլիսոփայական խորությունը և քաղաքացու արիությամբ հետազնդել ե, թե ինչպես անել վոր հասարակությունը հիմնվի մի լավագույն, արդար և բանական կարգի վրա, ինչպես վերափոխել մարդուն և ինչպես յերջանկացնել ընտանիքը:

Իր ժամանուկի պայմաններում Ժան-Ժակ Ռուսասոն չկարողացավ հաս կանու չարիքի խկական արմատը և մանավանդ չկարողացավ տեսնել նրանից գուրս դալու խկական միջոցը: Մանր բուրժուազիան, վորի միջոցով ըստ նուսայի պիտի կատարվեր հասարակական, անհատական և

ընտանեկան այդ ամբողջական վերակառուցումը, անկարող եր լուծել այդ մեծ պրոբլեմը: Յեկան անցյալի այդ մեծ գեմոկրատի ու հեղափոխական աշածողի հղեաները լուծվեցին և լուծվում են կյանքի այն հիմնական և արմատական հեղաշրջան միջոցով, վոր կատարվում ե այժմ մեր աչքերի առջև այսինքն, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության միջոցով:

ԺԱՆԴԱԿ ՌՈՒՍՍՈ ԻՆՔՆԱՅՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ շերտավորումներ կային 18-րդ դարում Փրանսիական յերրորդ դասի մեջ: Ռուսասոն այդ շերտավորումներից վերի արտահայտիչն եւ
2. Ի՞նչ վերաբերմունք ուներ Ռուսասոն դեպի Փրանսիական հին դասակարգերը, դեպի մօնարքիզմը, դեպի մանր բուրժուազիան:
3. Ի՞նչպիսի աղավաղման յենթարկեցին բուրժուական քննադատները Ռուսասոյի ժառանգությունը ի՞նչպես և խնդիրը զնում Գ. Պլեխանովը, Պլեխանովի սիալ դրույթը:
4. Ի՞նչպես ե լուսաբանում Ռուսասոյին Ն. Կրուպսկայան: Ի՞նչպես ե արտահայտված Լենինի ահսակեռն այդ լուսաբանության մեջ:
5. Ի՞նչ ազդեցություններ եր կրել Ռուսասոն հին մտածողներից և գրողներից, Ի՞նչպես ե յուրացը Ռուսասոն կլասիկ կուլտուրան և ի՞նչպես ե իր ռւսունքը կառուցել:
6. Ի՞նչ հայացք ունի Ռուսասոն հեղափոխության մասին: Ի՞նչպես ե նա հիմնավորում «հեղափոխության իրավունքը»:
7. Ի՞նչպես ե խնդիրը զնում Ֆր. Ենգելար և ի՞նչպես ե բացատրում նա Ռուսասոյի աշխարհայցքը:
8. Ի՞նչ ե նշանակում «Վերադարձ դեպի բնությունը»: Ի՞նչպես պետք է հասկանալ այդ կոչը Ռուսասոյի կարծիքն այդ խնդրի մասին: Ֆ. Ենգելսի կլասիկ մեկնաբանությունը և ձևակերպումը:
9. Ի՞նչպես պայքար մղեց Ռուսասոն հին մանկավարժության դեմ: Ի՞նչ կողմերի վրա հարձակվեց և ի՞նչ դրական ուսմունք առաջադրեց: Ի՞նչ ե «Եմիլ-ի արժեքը»:
10. Ի՞նչ տարբերություն ե զնում Ռուսասոն տղամարդու և կնոջ դաստիւրակության միջև: Ի՞նչպես գծում Ռուսասոն Սոֆիի պատկերը: Այս պատկերի իմաստն ի՞նչ է:
11. Ի՞նչպիսի արտահայտություն ե գտել Փրանսիական ժամանակակից կյանքը Ռուսասոյի վեպի՝ «Նոր Ելիկա»-ի մեջ: Ի՞նչ ե այդ վեպի գրական գեղարվեստական արժեքը: Ի՞նչպես ե արտահայտվել Ռուսասոյի սոցիալական աշխարհայցքն այս վեպի մեջ: Ի՞նչ հատկություններ ունի Ռուսասոյի արվեստը: Ի՞նչ նորություն մտցրեց նա Փրանսիական արձակի մեջ: Ի՞նչ ազդեցություն ունեցավ այս վեպը Փրանսիական և գերմանական գրականության մեջ:

12. Ի՞նչ հետադիմական, ուեակցիոն կողմեր ունի ժան-ժակ Ռուսայի ուսմունքը, Նրա ուսմունքի վեր բնագավառում են յերեան զալիս դիմավորապես այդ ուեակցիոն կողմերը, ի՞նչով են պատճառաբան վում այդ կողմերը:

Գ Ր Ա Վ Ո Ր Թ Ե Մ Ա

1. Ի՞նչ գրական և հասարակական դեր ե կատարել Ռուսուն 18-րդ դարի ֆրանսիական գրականության մեջ:
2. Ի՞նչ մանկավարժական-դաստիարակչական ուսմունք և առաջազրել Ռուսուն «Եմիլ»-ի մեջ, Վերլուծեցեք «Եմիլը» բազմակողմանի կերպով:

Գ Ր Ա Վ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. «Եմիլ». Ռուսունի հայերեն թարգմանված մասը: Այս թարգմանության կցված առաջաբանն ոգտագործել քննադատաբար և փերապահությամբ:
2. Ն. Կըռուպսկայա: «Ժողովրդական դասախարակությունը և դեմոկրատիա»:
3. Գ. Պլեխանովի հոդվածը Ռուսունի մասին տես Գ. Վ. Պլեխանով, «Ըօշնենիա, ՏՕՄ XVIII ոգտագործել քննադատաբար.
4. Ֆրիչե և Լունաչարսկի. նրանց «Արևմտյան Յեվրոպայի գրականության պատմության» համապատասխան դլուխները:
5. Ֆր. Ենգելս. «Անտի-Դյուրինգ»—Ռուսունի մասին վերաբերող եղերը:

Մ Ր Ա Գ Ի Բ

1. Ռուսունի կյանքի պայմանները, ժըների հանրապետությունը և Շվեյցարիան: Սոցիալական, քաղաքական և մտավոր միջավայրը: Շվեյցարական գյուղը և դեմոկրատիան:
2. Ֆրանսիան Ռուսունի ժամանակի, Դասակարգային հարաբերությունները 18-րդ դարի Ֆրանսիայում: Ֆրանսիական ենցիկլոպեդիսաները և Ռուսունը:
3. Ռուսունի կյանքի ընթացքը: Նրա կենսագրության հիմնական գծերը Նրա պայքարը իր շրջապատի դեմ: Ռուսունի վերաբերմունքը դեպի ազնվականությանը, կղեւականությունը, բուրժուազիան և մանր բուրժուազիան:
4. Ռուսուն մանր-բուրժուազիայի գաղափարախոս: Նրա ազդեցությունը իր ժամանակ և իր մահից հետո, ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության շրջանում:
5. Ռուսունի գրական խոշոր ժառանգությունը: Նրա կրոնա-փիլիսոփայական հայցքները: Նրա քաղաքական-հասարակական հայցքները: Նրա դաստիարակչական ուսմանը:

6. Թուասոյի գրվածքը «Անհավասարության» մասին.. Այդ գրվածքի հեղտփոխական արժեքը, Ֆր. Ենգելսն այս աշխատության մասին: Թուասոյի «Հասարակական դաշինքը», Այս գրվածքի խոշոր քաղաքական արժեքը: Ֆր. Ենգելսն այս գրվածքի մասին:
7. Թուասոյի «Եմբրյո-ը», Այս գրվածքի ժամանքը Կիստուման: Սանկազմարժական վեպ: Ռուասոյի պայքարը հին սանկազմարժության դեմ: Դաստիարակչական նոր ռւամունք: Այս գրվածքի խոշոր ազդեցությունը:
8. Թուասոյի վեպը: «Նոր Ելորդ», Սանտիմենտուլ ռուման: Սանտիմենտուլիդը Ռուասոյի ժամանակ և նրա գործում: Այդ սանտիմենտացմի եյությունը: Ռուասոյի վեպի, գրական-գեղարվեստական արժեքը, Այդ վեպի մեջ արծարծված դաղափարները: Պատկերները, տիպերը: Թուասոյի արգեստը: Ռուասոյի ազդեցությունը գրականության վրա: Ռուասոյի ազդեցությունը կյանքի վրա:



477

809

2-17

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0006666

ЦЕНА

А II
20929